ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՆԸ

ԺԵ ՏԱՐԻ

Օգոստոս

ԷՋՄԻԱԾԻՆ

900

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ը

1958

ՀԱՅԿ ԴԻՏԱՐԱՆԻ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Մասնավոր և ծայրագույն վարդապետական գավազանի իշխանության տվչության կարգը 3

ԳՐԻԳՈՐ ՅԱՔԵՎԱՆՑԻ— «Վասն գաւազան տալոյ», «Վասն վարդապետաց կոչմանց» 7

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ուղերձը Ստոկհոլմի խաղաղության համաշխարհային կոնգրեսին 9

Մաղրաճի Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում վասն խաղաղության ամենայն աշխարհի 10

Շարակաճի Սուրբ Աստուածածնի 12

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ— «Մայր Ուդովի բերկրեալ» 14

Ա. Վ.— Դաստիարակիչ կինը 16

ՆՈՅԱՐ— Վերափոխման տոնին առթիվ քանի մը նկատողություններ . 17

Քաղվածքներ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություններից 22

ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ 25

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ— Համառոտ լուրեր Մայր Հայրենիքից . . 27

ՏԻՐԱՑՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐՏԻԿՅԱՆ— Հովվական այցելություն ռումինահայ և բուլղարահայ թեմերին 30

Հ. ՄԿՐՏԻՉ, Վ. ՊՈՅՈՒՐՅԱՆ— Դանիել Վարուժան 35

Ա. ՏԻՐԱՑՅԱՆ— Հայկական գաղթականություններ և եկեղեցիներ Իտալիայում ԺԳ—ԺԴ դարերում 38

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Սահանեի վանքը 41

Դ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ— Հիշողություններ Կոմիտաս վարդապետի մասին 47

Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ— Հայրենանվեր մանկավարժուհի Գայանե Հովհաննիսյան—Մատակյան 50

Ա. ԵՐԵՄՅԱՆ— Մաերառնկարիչ Աստվածատուր աբեղա . . . 56

Ա. Խ.— Վանս Խոջաբեգյան 60

Հանգիստ հոգեշնորհ Տ. Եղիշե ծայրագույն վարդապետ Ուրուճյանի . 62

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը հայտարարում է ուսանողների ընդունելություն 1958—1959 ուսումնական տարեշրջանի համար 63

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՈՒՆԵԱԴԵՄԻԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1958 թ.

Վ.ԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԵՎ ԴԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է ԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԻ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՐԸ, ՈՐԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է Վ.ԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿՆԵՐԻ, ՔԱՐՈԶՆԵՐԻ, ՃԱՌԵՐԻ, ՆՇԱՐԱՆԵՐԻ ՀԱՏՈՒՆՏԻՐԸ ԵՎ ԻՆՉԵՐ ՆՈՒԱ ՀԵՂԻՆԱԿԱԾ ԳՐՔԵՐԻՑ։

ՀԱՏՈՐԸ ԼԻՆԵԼՈՒ Է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ, ՇՈՒՐՋ 70 ՆԵՐԴԻՐՆԵՐՈՎ, ԲԱՂԿԱՑԱԾ ԱՎԵԼԻ ՔԱՆ 400 ԷՋԻՑ։

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

1959 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՒՅՑԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ, 254 ԷՋ։

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Որին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, Իր գահակալության առաջին իսկ օրերից, հանդես է եկել որպես «սիրող և նախանձայույզ պահպանութեան և պայծառութեան եկեղեցական կարգաց և արարողութեանց»:

Գերագույն Հոգևոր Խորհրդի 1958 թվականի հուլիսի 8-ի նիստում Վեհափառ Հայրապետի հրահանգով և առաջարկով քննության առնվեց մի շատ կարևոր հարց, որ սերտորեն կապված է մեր եկեղեցու հին կարգերի պահպանության, եկեղեցու կյանքի և պայծառության ու հավատացյալների կրոնա-բարոյական քրիստոնեական դաստիարակության հետ:

Վեհափառ Հայրապետի կողմից Գերագույն Հոգևոր Խորհրդին ներկայացված հարցն էր «վարդապետ ձեռնադրվելու և ծայրագույն վարդապետության աստիճան ստանալու անհրաժեշտ նախապայմանները»:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը սրտագին գոհունակությամբ ընդունեց Վեհափառ Հայրապետի առաջարկը և խնդրեց Նորին Ս. Օծությունից՝ այսուհետև խստությամբ պահպանել հին կարգը, ըստ որի, մասնավոր կամ ծայրագույն վարդապետական իշխանության աստիճան ստանալու համար, թեկնածուից պահանջվում էր գրավոր մի աշխատություն՝ կրոնա-եկեղեցական, եկեղեցապատմագիտական և կամ եկեղեցա-քանասիրական նյութերով:

Մասնավոր կամ ծայրագույն վարդապետության աստիճան ստանալու համար ներկայացված աշխատությունը պետք է քննվի Գերագույն Հոգևոր Խորհրդի նշանակած մի հանձնաժողովի կողմից, որը հետ քննության կարոշի թեկնածուի արժանավորությունը և կխնդրի Վեհափառ Հայրապետից՝ շնորհել թեկնածուին համապատասխան աստիճան:

Կահիրեի եպիսկոպոսական ժողովը իր 1958 թվականի մարտի 8-ի Ը նիստում գրաղվել էր եկեղեցական տիտղոսների հարցով և եկել էր այն ընդհանուր եզրակացության, որ «ՏԻՏՂՈՍՆԵՐՈՒ ՏՎՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՐԿ Է ԳՈՐԾ ԴՆԵԼ ԱՋԱԼԸՐՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԱԳՈՒԹՅԱՆ, ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԾԱՅՐԱԳՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ ՏԱԼ ՄԻԱՅՆ ՍՏՈՒԳԱՊԵՍ ԱՐԺԱՆԱՎՈՐՆԵՐՈՒՆ»:

Վեհ է և սուրբ՝ հոգևորականի կոչումը, ասպարեզը, ծառ ու պատասխանատու՝ «հրեշտակակրոն այն պաշտոնը», որին կոչվում է վարդապետը: Այս պատճառով Պողոս առաքյալը պատվիրելով պատվիրում է իր Տիմոթեոս աշակերտին՝ «ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ դնել» (Ա Տիմ. Ե 22), որովհետև «չոր զանձն ընծայեցուցանէ՝ նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ»: Դրա համար հարկ է, որ «մանրակրկիտ քննությամբ, արթուն հսկողությամբ» նկատի առնվեն մասնավոր և ծայրագույն վարդապետական իշխանության թեկնածուների «անստգիտ գնացք»-ը (ընթացքը), անքերի գիտությունը, ուսումնականությունը, նկարագրի կայունությունը, կոչման գիտակցությունը, «անբամբաս քաղաքավարութիւն և այլ ինչ բազմապատիկ կատարելութիւնք»-ը (Մաշտոց):

Ինչպես Հին Կտակարանում ՕՐԵՆՔԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ մեծ ազդեցություն և եղիեկություն էին վայելում իրենց գիտնականությամբ և ուսումնականությամբ. օրենքի բանիմաց հասկացողությամբ և մեկնությամբ, Նոր Կտակարանում ևս, եկեղեցու հոգևոր ոնտեսության և կառավարության մեջ. մեծ տեղ էին գրավում ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ: Պողոս առաքյալը գրում է. «Եվ զորս եհան Աստուած յեկեղեցւոջ այս են. նախ ԱՌԱՔԵԱԼՍ, երկրորդ ՄԱՐԳԱՐԷՍ, երրորդ ՋՎԱՐԴԱՊԵՏՍ» (Ա Կորնթ. ԺԲ 28): Վարդապետը, ուրեմն, եկեղեցու երեք գլխավորներից մեկն է:

ՎԱՐԴԱՊԵՏ բառը նշանակում է ՈՒՍՈՒՑԻՉ, ՈՒՍՈՒՑԱՆՈՂ, ԱՌԱՋՆՈՐԴ ՈՒՍՄԱՆ, որից և վարդապետել՝ սովորեցնել, քարոզել բառերը. վարդապետություն բառը՝ որպես ուսուցում. քարոզություն: Վարդապետները «ճշմարիտ Բանին քարոզութեան աշակերտ» են, որոնք «զգիտութիւն բանին Աստուծոյ ուսուցանեն, զմեզ լուսաւորեն, զգիշեր մեզաց և զխաւար անգիտութեան փարատեն». այլ խոսքով՝ եկեղեցու վարդապետության և դավանության գաղափարախոսներ, ուղղափառության ճշմարիտ պաշտպաններն են, մեկնիչ ու քարոզիչ. «ձիրքեն իր տնկեալ կան ի սուրբ եկեղեցիս և յարազուարճ դալարութեամբ պատրաստեն զնիւթ լուսոյ յապտերաց հոգւոց և զպատգամս Աստուծոյ բերեն առ ժողովուրդս, քարոզեն և իմաստասիրեն, քանզի աստուածաքան են և աստուածամիտ»:

«Ճշմարտութեան վարդապետ, գերահանճար հոետոր և սուրբ հաւատոյ, անյաղթ ախոյեան» Գրիգոր Տաթևացին շատ գեղեցկորեն և բնութագրել ՎԱՐԴԱՊԵՏԻ կոչումն ու առաքելությունը: Նա գրում է. «Վարդապետն իշխան է բանից (խոսքի իշխան), որ հրամայէ և ուսուցանէ. եկեղեցւոյ տեսական իմաստասէր, որ մտօք և բանիւն տեսանէ և հնէ ե ուսուցանէ և խրատէ զաշակերտս. իսկ նոքա զժողովուրդս» (Տաթևացի, «Գիրք քարոզութեան, որ կոչի Զմերան հատոր»,— «Նորին քարոզ վարդապետաց և եպիսկոպոսաց», էջ 163—165):

Գրիգոր Տաթևացին վարդապետների կոչման մասին խոսելով նրանց բաղդատում է վարդի հետ. «վարդն ծաղիկ՝ ունի բազում յատկութիւնս որ յարմարի վարդապետին», և պանանցում է, որ վարդապետները զինված լինեն գիտությամբ, հավատով, սրբությամբ և առաքինությամբ. «վարդապետն բանիւ և արդեամբ զօրաւոր լիցի և արի և անյաղթելի ի մէջ թշնամեաց... որպէս պարիսպ և եզր նկեղեցւոյ»:

Մեր եկեղեցու կյանքում էլ շատ հին է «վարդապետ» կոչման գործածությունը: Գ. Տաթևացին գրում է. «յաղագս մեր բոցափայլեաց աստիճան քահանայապետութեան ի Սրբոյն Գրիգորէ.... առաքեաւ վարդապետութեան՝ առ Սուրբն Մեսրոպ... և յայնմհետէ՝ աստիճան վարդապետութեանս յաջորդեցաւ առ միմեանս» (նույն տեղում. էջ 161):

Մեր գիտուն վարդապետները. Հայաստանի զանազան գավառներում, վանքերի մեջ իրենց շուրջ հավաքում էին բազմաթիվ աշակերտներ և ուսուցանում էին նրանց: Իսկ ծայրագույն վարդապետները գիտնականի հռչակ էին վայելում և. որպես կանոնական սովորություն, ամեն մի բեմում իրավունք ունեին քարոզելու բեմից. որպես Հայաստանյայց եկեղեցու ճշմարիտ քարոզիչներ: Արժանավոր վարդապետները դարուց դար փոխանցեցին «զվարդապետութեան աստիճանն իւրեանց աշակերտաց. և նոքա այլոց ուղղափառ վարդապետաց Ազգիս Հայոց մինչև ցմեր իսկ առուրս»:

Վարդապետ բառը շատ հաճախ հիշատակվում է մեր հին մատենագրության մեջ իր լիիրավ արժեքով և նշանակությամբ, որպես «ուսուցանող», «ուսուցիչ» իմաստով: «Վարդապետ» անունը, որպես գիտական տիտղոս կամ կոչում, տրվում էր առանձին հանդիսությամբ. ինչպես նշված է Մաշտոցում: Դրանով իսկ վարդապետները իրավունք էին ստանում ուսուցանելու, քարոզելու ժողովրդին և իբրև նշան այդ կոչման՝ կարող էին ձեռներին գավազան բռնել: Վարդապետական գիտական կոչումը տալիս էին միայն վարդապետները, վարդապետության բեկնածուի գիտական պատրաստությունը ընդունելուց և արժանավորությունը հաստատելուց հետո միայն: Եղել են եպիսկոպոսներ, պատրիարքներ՝ առանց վարդապետության այդ գիտական կոչումը ունենալու:

Բայց դժբախտաբար միշտ չէ, որ խստությամբ պահպանվել է մասնավոր և ծայրագույն վարդապետության աստիճան տալու կարգը մեր եկեղեցում: Հաճախ եղել են խախտումներ, որոնց դեմ պայքարել են, սրինակ, Մխիթար Դոշ (ԺԴ դար), Գրիգոր Տաթևացի (ԺԵ դար) եռամեծ վարդապետները, որպես «նախանձաւորս անսաեւիր և անքերի պահպանութեան կարգացն տալոյ զգալագան մասնաւոր և ծայրագոյն իշխանութեան վարդապետաց»: Նրանք պայքարել են խնդրությունների դեմ և պահանջել են միայն արժանավորներին տալ գավազանի իշխանություն և ծայրագույն վարդապետի գիտական պատվավոր կոչում:

Մեծ վարդապետ Մխիթար Դոշը իր Դատաստանագրքի առաջին մասի երրորդ գլխում, «Յաղագս դատաստանաց վարդապետաց» բաժնում, ԿԱՆՈՆԱԳՐՈՒՄ է ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ (էջ 88—93): Մխիթար Դոշը առաջին հերթին շեշտը դնում է վարդապետնե-

ի ուսումնականության վրա. «Ես վարդապետ եղիցի ըստ իրաւանց նախակրթեալ Հին և Նոր Կտակարանաց և կանոնական հրամանաց... Յերկուց և յերից վարդապետաց կոչեսցին ի պատիւ հրամանի», այսինքն առնվազն երկու կամ երեք վարդապետ միասին պետք է «վարդապետական իրաւունք» տային վարդապետական նոր թեկնածուին:

Մի այլ կանոնով Մխիթար Դոշը պահանջում է վարդապետից «գեամար ուսման Դրոցն... թէ ո՛ւր և կամ յումմէ զգիրս գիրաքանչիւր ըստերցաւ ուսամբ... զի մի՛ պատրեալ անկատարս զպատիւ առեալ՝ բազում վնասս խակուրեամբն գործիցեն»:

Մխիթար Դոշի կանոններից երևում է, որ անցյալում մեծ զգուշություն էին ի գործ դնում, որ տգետները վարդապետական կոչում չստանային, իսկ եթե ոմանք այլ ճանապարհներով, կանոններին անհամապատասխան կերպով տիրանան այդ սուրբ աստիճանին, «զայնպիսիսն լռեցուցանել իրաւացի դատաստանաւ, առնուլ ի ձեռանէ զգաւազանն՝ տայցեն ցուպ շրջողուրեան», — ասում է Մխիթար Դոշը:

Մխիթար Դոշից հետո Գրիգոր Տաթևացին կազմել է «ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՅՈՒԹՅԱՆ ՍԻՍԱԿԱՆ ԿԱՐԳԸ» (Օրմանյան, «Ազգապատում», հատ. Ա, էջ 2030) «Գիրք գաւազան տալոյ աշակերտացն ճշմարիտ բանին քարոզուրեան, նախ զմասնաւոր իշխանութեան՝ որ է չորս աստիճան, և ապա զծայրագոյնն՝ որ է տասն չորս աստիճան» («Մաշտոց». վաղարշապատ, 1876 թ., էջ 66):

Ըստ Օրմանյան սրբազանի վկայության, Տաթևացու նորհնած կանոնը «Տաթևացիին միտքին ստեղծումն է»: «Հայ վարդապետությունը,— գրում է Օրմանյանը,— որ աստվածաբանության մագիստրոսի աստիճանին կպատասխանե, Տաթևացիին դրությամբ ամբողջապես եկեղեցական կերպարանի վերածված է, 14 աստիճաններու դասավորությամբ... մեկը 4 և մյուսը 10 աստիճաններով, որ Փոքր և Մեծ, կամ Մասնավոր և Ծայրագույն անուններով կոչվին» («Ազգապատում», հատ. Ա, էջ 2030):

Վարդապետական մասնավոր աստիճանը տրվում էր «ուսման ընթացքը լրացնողներուն, իսկ ծայրագույնը պահված էր վարդապետաց վարդապետներուն, որոնք վանքերու կամ վանական դպրոցներու կամ վարդապետանոցներու մեջ իրենց հատուկ աշակերտություն մը կկազմեին»: Օրմանյան սրբազանը իր հերին իր վրդովմունքն է հայտնում, որ Կոստանդնուպոլսի Պատրիարքարանում ևս դժբախտաբար չի պահպանվել մասնավոր և ծայրագույն վարդապետական աստիճան տալու նվիրական «կգրությունը», երբ «անուսներու անգամ ծայրագույն աստիճան կտրվի»: Վերջին ժամանակներում այս ընդհանուր երևույթ է եղել դժբախտաբար և շատ հչերը միայն եղել են արժանավոր:

Այսօր էլ պատկերը տարբեր չէ անցյալից: Վեհափառ Հայրապետը, նախանձախնդիր Հայ եկեղեցու կարգերի պահպանման և պայծառացման, Մխիթար Դոշի, Գրիգոր Տաթևացու, Օրմանյանի և այլ լուսաբնակ երամեծ վարդապետների օրհնակով և շնչով, ուզում է վերականգնել մեր եկեղեցու ծոցում վարդապետական զավազանի մասնավոր և ծայրագույն իշխանության տվչության կարգը, շեշտը դնելով ամենից առաջ մեր նոր հոգևորականների կոչման գիտակցության, խոր ու բազմակողմանի զարգացման և բարոյական նկարագրի վրա:

Մեր եկեղեցու բարեզարգության և բարեկարգության ամենահիմնական խնդիրներից մեկը մեր հոգևորականության, եկեղեցու պաշտոնեության պատրաստության հարցն է: «Մեք առաւել քան զամենեսեան ունիմք պէտս հոգւոց բժշկուրեան» (Շնորհալի):

Հայ եկեղեցու զարթոնքի, բարեկարգության նշանակում է ամենից առաջ եկեղեցու պաշտոնեության բարեկարգություն և պատրաստություն: Լուսամիտ, զարգացած, հավատավոր և կարգապահ հոգևորականությունը միայն կարող է եկեղեցին պահել բարեկարգ և բարեզարդ վիճակում: Ս. Սահակ Պարթև գրել է. «ՅՈՐԺԱՄ ՈՒԽՏՆ ՈՐ ՊԼՈՒԽՆ է ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԸՆՏԻՐՔ ԵՒ ՊԻՏԱՆԻՔ ԼԻՆԻՑԻՆ, ԵՒՍ ԱՌԱՒԻԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ»:



ՎԱՍՆ ԳԱՒԱԶԱՆ ՏԱԼՈՑ

Իսկ թէ զի՞նչ նշանակէ գաւազանն զոր տամք ի ձեռս նոցա: Ասեմք, երէ բազում ունի խորհուրդ ծածկեալ առ ինքեամբ գաւազանն: Նախ՝ նշանակէ զիշխանութիւն որպէս թագաւորք ունին. ըստ այնմ, «գաւազան արքայութեան քոյ». և զայն նշանակէ գլուխն խաչաձև, զի ոչ է որպէս Կաթուղիկոսի բոլոր՝ որ նշանակէ զիշխանութիւն ի բոլոր յազգս իւր, և ոչ որպէս եպիսկոպոսի կեռ և միակուսի, որ իշխէ միայն ի վիճակս իւր: Այլ վարդապետն ի շորս կողմ աշխարհի իշխէ ի հաւատացեալս և յանհաւատս, ի քահանայս և յաշխարհականս, յեկեղեցիս և յարտաքս, և զայս ցուցանէ յեկեղեցւոյն յարտաքս թերելն: Կամ որպէս գաւազանն Անարոնի որ ծաղկեցաւ ի խորանին, և ապա բերաւ յարտաքս:

Երկրորդ՝ նշանակէ զօրութիւն. ըստ այնմ, «Գաւազան զօրութեան առաքեսցէ Տէր»: Եւ զայս ցուցանէ բոլոն ամուր և տեղի, և յայտ է զի վարդապետն բանիւ և արդեամբ զօրատոր լիցի և արի, և անյաղթելի ի մէջ թշնամեաց:

Երրորդ՝ նշանակէ զուղղութիւն, որպէս ունին ուղղիչք ի ձեռին քահանայք և վարդապետք. և զայս ցուցանէ ուղղութիւն գաւազանին, որով յայտ է՝ զի նախ ինքն ուղիղ լիցի, և ապա զայլս ուղղեսցէ. «Զի որ արասցէ և ուսուցցէ, նա մեծ կոչեսցի ասէ Տէր»: Պատուիրէ առաքեալն. «Զգործս աւետարանչին գործեա՛»:

Չորրորդ՝ նշանակէ զհաստատութիւն տկարաց. ըստ այնմ, «Որ յենու ի նա իրաւ ի Տէր հաստատութեամբ»:

Եւ զայս ուսուցանէ ստուարն գոլ, որով յայտ է՝ զի նեցուկ և հաստատութիւն է տկարացեալ մարդկան. «Որ և կազդուրացուսցէ կարողացուսցէ, և հաստատիմն արասցէ»:

Հինգերորդ՝ կերպիւ ինչ կուրաց առաջնորդ է ի հանապարհի. և զայս նշանակէ երկարութիւնն: Եւ վարդապետն երկար բանիւ առաջնորդէ ի հանապարհ երկնային կենացն:

Վեցերորդ՝ նշանակէ զխոցելն և զխեթկելն, զոր և ցուցանէ խրանն որ ի ծայր գաւազանին, վասն որոյ պարտի ուսուցանել զհեղգացեալսն մի՛շտ և հանապազ, որպէս ուսուցանէ Պօղոս զՏիմոթէոս. «Հաս ի վերայ ժամու և տարաժամու»:

Եօթներորդ՝ նշանակէ զխրատ և զտանջանս, ըստ այնմ, «Հարից գաւազանաւ զանօրէնութիւնս նոցա, և տանջանօք զանիրաւութիւնս նոցա»: Եւ զայս ցուցանէ ահուն որ կոչի գաւազան, այսինքն որ հարկանէ զանքանս: Եւ վարդապետն ունի զխրատ և զտաստ ի վերայ անզգամաց, ըստ այնմ, «Գաւազանաւ բարկութեա՞ն եկից, երէ սիրով Հոգւոյն»:

Ութներորդ՝ նշանակէ զմխիթարութիւն և զժողովումն, որպէս ցոպ և գաւազան հովուաց անքան հօտից: Եւ զայս ցուցանէ կորացումն գլխոյն, որով յայտ է զի ժողովեալ մխիթարէ զվշտացեալս ի պէսպէս փորձութեանց յուսով պսակաց. ըստ այնմ, «Մխիթարեցէ՛ք մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ ասէ Աստուած», և այլն:

Ինններորդ՝ ըմբռնեալ շարժի յամենայն ձեռաց. և զայս պատճառէ ուղղորկ և բերկ

գոյն: Եւ վարդապետին ոչ է պարտ ծանրանալ և դժուարիլ ի հարցումն բանի, այլ ամենեցուն խոնարհ և հնազանդ լինիլ և բազմբ բարուք ցպիլ:

Տասներորդ՝ զի գլուխն միշտ ի բարձր է, և այս ևս յարմար ձևոյն: Նոյնպէս վարդապետին պարտ է միշտ զգլուխն, այսինքն զմիտս ի բարձունս ունել (ուր Քրիստոս նստի բնդ աջմէ Աստուծոյ) և ոչ դարձուցանել ի խոնարհ, բայց թէ խուն ինչ պիտոյիւք մարմնոյ, որպէս վերջին ծայր զաւազանին:

Մետասաներորդ՝ զի գլուխն ստուար է և մեծ յինքն, և ծայրքն նուրբ և հեռի: Նշանակէ՝ զի վարդապետին պարտ է, որ զծանր և զմեծամեծ օրէնս ինքն կատարեսցէ, իսկ գսակաւն և գրերևն այլոց բարոգեսցէ: Զի որպէս մեծ է տեսանչն իւր ի բերանուն, բան ստարաց, նոյնպէս մեծաւոր և նախկին ինքն լսեսցէ: Ապա թէ զծանր լուծն այլոց դիցէ, և ինքն մատամբն ոչ հպեսցի, նմանի յիմար փողանարի՝ որ զլայն ծայրսն ի բերանն իւր դիցէ և զնեղն արտաքս, ոչ ճնչէ ձայն, այլ միշտ յերեսս իւր բքանէ:

Երկոտասաներորդ՝ որպէս ի ներքին նրբագոյն ծայրէն սակաւ սակաւ ի բանձրագունն ելանէ, նոյնպէս պարտ է վարդապետին սակաւ սակաւ կրթիլ ի մեծագունսն, որպէս աստիճանաւ ոք ելանէ ի բարձունս, և որպէս նոր ուսումն մանուկ ի յայրուբնեանց ի մեծնութիւնն ընթանալով. զի մի՛ ի խստագունից երկուցեալ յամենայնէն վրիպեսցի:

Երեքտասաներորդ՝ զի ի միջին կէտն է ոունն. և լայս և յաւնկոյս հաւասար կշռել: Այսպէս և վարդապետին պարտ է հաւասար ունել զգիտութիւն և զարբութիւն գոյգ. զի գիտութեամբն ուսուցցէ, և սրբութեամբն արասցէ: Այլ և պարտ է զմիջին վարս ուզղել՝ ոչ յաջ խոտորիլ և ոչ յաճեակ, զի երկոքին կողմն չար են: Այլ և զնոյնս ուսուցանել՝ ոչ կարի խստազոյն, և ոչ ամենևին թոյլ, զի մի՛ յուսահատեսցին և մի՛ հեղգասցին:

Չորեքտասաներորդ՝ զի ի ձեռն տան զգաւազանն, ձեռն գործոյ է նշանակ, ցուցանէ թէ գիշխանութիւնն ի ձեռն տանդէ, այսինքն ի գործն, զի հաստատութիւն բանից գործն է. «Զի Յիսուս առնէր և ուսուցանէր». ուստի յետ քարոգութեանն՝ սքանչելիս կատարէր, զի հաւատարիմ լիցի բանն քարոգեալ ի յարդեանցն ցուցեալ:

Հնգետասաներորդ՝ հանապազ առ ինքն կրելն, նշանակէ չորս ինչ: Նախ զոր հրամայեաց Քրիստոս՝ «Ուրացի զանձն իւր հանապազ, առցէ զխաչ՝ և եկեսցէ զկնի իմ»: Եւ առաքեալն ասէ՝ «Ինձ աշխարհն ի խաչելեալ է, և ես աշխարհի, զի ես զչարչարանսն Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ»: Երկրորդ՝ նշանակ է զհնութութեան մերում, պարտ է ի ձեռս ունել՝ որով ծանուցցի մարդկան, որպէս զինուորք ունին ի ձեռն զնշան զինուց: Երրորդ՝ զի զէն է յաղթութեանն Քրիստոսի, պարտ է ի ձեռին ունել՝ զի փախիցէ հանապազորդ թշնամին: Չորրորդ՝ ոչ և ոչ լինի պատերազմ, երեքն զաղեռն քարշեն, երեքն ի մատուցս զնետն ուղղեն և դարձեն: Այսպէս և վարդապետն միշտ ի ձեռին ունելով զխաչնուրն՝ ի մեռն ածցէ և այնու ի սուրբ զիրս ընթացեալ զաղեռն պատրաստեսցէ, զնետս իւր ուղղեսցէ մտոք: Զայս ասէ Պետրոս. «Ի պատրաստի ունիցիք տալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զքանն, որ է վասն յուսոյն ձերոյ»:

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ԿՈՉՄԱՆՑ

Այլ որ կոչի վարդապետ, այսինքն ուսուցիչ, կամ վարդապետ, վարուցն պետ, այսինքն գործով կատարեալ, կամ վարդապետ՝ զեզեցկութիւն մարդկան բանն, այսինքն բանիցն պետ: Արդ՝ վարդն ծաղիկ՝ ունի բազում յատկութիւնս որ յարմարի վարդապետին: Նախ զի՝ անուշանոտ է, այսպէս և վարդապետին պարտ է ունել անուշանոտ վարս ըստ առաքելոյն, «Հոտ անուշ եմք Քրիստոսի ի մէջ փրկելոցն և կորուսելոցն»: Թէպէտ ոմանք են ի կենդանեաց որք գարշին, «Այլ ոմանց հոտ եմք ի մահու ի մահ, և ի կենաց ի կեանս»:

Երկրորդ՝ վարդն փրքեալ՝ ցուցանէ զինքն ամենեցուն, և վարդապետն զծաղիկ բանին յայտնէ և ի լոյս ճանէ և լուսաւորէ զամենեսեան:

Երրորդ՝ հասարակ ամենեցուն զմի և զնոյն հոտ բուրէ, և վարդապետն առանց ակնառուրեան ամենեցուն ուսուցանէ զմի և զնոյն բանս Սուրբ Գրոց:

Չորրորդ՝ զի բազմակոյտ բերբ ունի, և վարդապետն ունի զբազմատեսակ իմաստս մանուածոյ բանիւք և բառիւք շարամանեալ. ծածկեալ յոտարաց, և յայտնեալ իւրայնոց:

Հինգերորդ՝ զի կակուղ և փափուկ է տերևն, նոյնպէս և վարդապետին պարտ է խոնարհ և հեզ լինել հոգւով ի տիպ նախատիպին իւրոյ Քրիստոսի, ըստ այնմ, «Ու-

սարուք յինէն՝ զի ճեգ եմ և խոնարհ սրտիս»:

Վեցերորդ՝ ունի չորս երանգ զուանց. այսինքն կանանչ, կարմիր, սպիտակ և դեղին: Արդ՝ գեղնուրիւնն ցուցանէ զառաքինութիւն մարմնոյն ըստ Փիլոնի, «Այս ցամաք երկիր ասուուածասէր է»: Եւ սպիտակն մանաւանդ զմարուր և զյստակ բանսն: Իսկ կարմիրն զչերմ սէրն առ ամենայն ոք. ըստ այնմ, «Ո՞ ճիւանդանայ և ես ոչ տապանեմ»: Եւ կանանչն զմիշտ մանկուրիւնն ե զզուարճալի խնդուրիւն մասցն:

Հոգներորդ՝ զի կատարի հասակաւ և ապա փթթի, և ապա բուրէ զհոտ իւր, այսպէս պարտ է և վարդապետին նախ կատարիլ հասակաւ և իմաստիւ, և ապա յայտնիլ աստիճանաւ, և ապա ուսուցանել զայլս. «Զի մի՛ մատաղատուկ ի դատաստանն սատանայի անկցի ասէ առաքեալն»: Զայս և Տէր մեր պահեաց մինչ ի լրումն երեսնամեայ հասակին, ուր և ծածկեալ են ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան:

Ութերորդ՝ զի հինգ պատենիւք պահպանի, այսպէս և նա հինգ զգայարանօք պահէ զոգի իւր, մանաւանդ, թէ «Հինգ բանիւք որ ի մէջ եկեղեցւոյ խօսի ըստ առաքելոյն»:

Իններորդ՝ զի խոշոր է պատեանքն, և վարդապետին պարտ է խոշոր վարուք և խոշորազգեստ լինել, և մի՛ կոկեալ և փերեւետեալ զարդուք, որում մեղկութիւն է շոշափելեաց:

Տասներորդ՝ զի ի մէջ փշոց է պարսպեալ, և վարդապետին պարտ է խեթկել զթրմրեալսն, սատել անխրատից և յանդիմանել զմեղսասէրս, ըստ այնմ, «Սատեա՛, յանդիմանեա՛»:

Մետասաներորդ՝ զի բժշկական է հիւանդաց. և յառակս ասի, «Բժշկութիւն է ի լեզուի նորա», զի բանիւ քարոզութեան բժշկէ զհիւանդացեալս մեղօք յոյս տալով ապաշխարութեան և ներումն բողութեան:

Երկոտասաներորդ՝ յինչ իր որ մերձենայ՝ տայ զհոտ իւր, այսպէս և վարդապետն առ ո՛ք և իցէ՝ զբանս և զվարս իւր ուսուցանէ նոցա. զի նմանս իւր արասցէ. որպէս նուր զմերձակայս իւր ջերմ և յուսաւոր առնէ. և մի՛ որպէս զչուր ի խառնեալսն փոխեսցի:

Երեքտասաներորդ՝ զի են ի վարդից ոմանք՝ որք երկատեսակք են, նոյնպէս և վարդապետին ունելի է կրկին բանս, այսինքն ա՛յլ ազգ առ ուղղափառսն, և ա՛յլ ի հերձուածողս, ի հաւատացեալս և յանհաւատս, յիմաստունս և ի տգէտս և յայլսն. ըստ դիմացն՝ ըստ տեղւոյն՝ ե ըստ ժամանակին խօսել զբանն, զի այն է սուր երկսայրի տուեալ ի ձեռս նոցա:

Չորեքտասաներորդ՝ ի փոքր և ի նուաստ տունկս ունի զծաղիկն. այսպէս ի նուաստ և ի ցածուն հոգին հանգչի աստուածային բանն, ըստ որում՝ «Ես յո՞ հանգեայց. երկ ոչ ի հեզս և ի խոնարհս»: Զոր օրինակ մարենին վառեալ և ծաղկեալ էր ի Սինա, և ոչ մեծ ծառք: Եւ տես զի ամենայն հիւղ որ պտուղ ունի՝ խոնարհեալ է, և «Հովիտք բազում արասցեն ցորեան», ուր ժողովին ամենայն բազմութիւնք ջուրց:

Հնգետասաներորդ՝ զի յետոյ ծաղկի ի գարնան, նմանապէս և ծաղիկ վարդապետին է ի գարնանաշարժ յարութեանն. այն որ ասէ. «Ծառայ բարի և հաւատարիմ»: Եւ թէ՝ «Որ շահի զարծաթ բանին՝ տացի և յաւելցի ունել իշխանութիւն ի վերայ տասն քաղաքաց»: Այսքան առ այս:

(ԳՐԻԳՈՐ ՏԱՊԵՒԱՑԻ, «Քարոզագիրք», «Զմնրան հատոր», Կոստանդնուպոլիս, 1740 թ., էջ 168—170):

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՍՏՈԿՀՈԼՄԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ

ՍՏՈԿՀՈԼՄ

Քրիստոնեական հավատքի կեդրոն բազմադարյան Ս. էջմիածնեն ողջույն և օրհնություն Ձեր համագումարին, որտեղ աշխարհի բոլոր երկրներեն հավաքված ներկայացուցիչներ կոչոնեք հանապարհները ազգերու միջև խաղաղ գոյակցության ու ճշմարիտ բարեկամության:

Հանուն Հայ եկեղեցվո և մեր հավատացյալ ժողովուրդի, Մենք ի սրտե կմաղթենք Ձեզ լիակատար հաջողություն՝ ի մխիթարություն և հուսախություն բոլոր ժողովուրդներու: Մենք ևս, ոգեշնչված նույն իդեալներով, բոլոր եկեղեցիներու կոդմին, կոչ կրնենք պետություններու մեծարգո ղեկավարներուն՝ լսել համայն մարդկության խղճի ձայնը և արագությամբ պահպանել խաղաղության աստվածառալ պատգամը, արգիլել ամեն տեսակի զենքերու գործածություն և փոքարեումներ ու աշխարհի վրա վերջնականապես հաստատել վիճելի հարցերը փոխադարձ հասկացողությամբ ու արդարությամբ լուծելու փրկարար և կենարար կանոնը:

Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք ըլլալ և վիճիլ, խաղաղությունը սակայն վեր պետք է ըլլա ամեն վեճ և դատա բոլորին համար մտածելու ու գործելու գերագույն կանոն ամեն տեսակի հարցերը լուծելու:

Աստված խաղաղության բող ոգեշնչե զՁեզ և Ձեր սրտերու ջերմությամբ կենդանություն թող տանա խաղաղության սպիտակ աղավնին, խորհրդանիշը մեր օրերու բոլոր մարդոց և բոլոր ժողովուրդներու ամենահարազատ իղձերուն:

Վ. ԱՋԳԵՆ Ա.
ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

15 հուլիս 1968
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՄԱՂԹԱՆՔ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ

Հուլիսի 25-ին, ուրբաթ օր, հեսմիշօրեի ժամը 2.30-ին, Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի ներկայությամբ կատարվեց մաղթանք վասն խաղաղության ամենայն աշխարհիս։

Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և Մայր Տաճարի զանգերի ղողանջի տակ առաջնորդվեց Մայր Տաճար և նախագահեց համայն աշխարհի խաղաղության համար կատարված այս հանդիսավոր մաղթանքին։

Տաճարում ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, վանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։

«Ուրախ լեր Ս. Եկեղեցիս, «Առաւօտ խաղաղութեան և ՕՁՕՐՈՒԹԻՒՆ սուրբ խաչի քո Քրիստոս», շարականների երգեցողությունից հետո կարդացվեց Հովհաննու Ավետարանի ԺԴ գլխի 25—31 համարները խաղաղության մասին։ Ապա «Խաղաղութեամբ քով Հոգիդ Ս. Աստուած Ճշմարիտ» աղոթքից հետո ձեռադիր երգվեց «Տէր ողորմեա»-ն, ամբողջ աշխարհի խաղաղության սրտառուչ հայցումով։

Աշխարհի խաղաղության ի նպաստ կատարված մաղթանքի վերջում խոսեց Վեհափառ Հայրապետը.

«Խաղաղութի՞ւն հեռաւորաց.
Խաղաղութի՞ւն մերձաւորաց»։

Սուրբգրական այս երկու գաղափարները ավելի քան ճշմայական պահանջ կհանդիսանան այսօր, մեկը մյուսով պայմանավորված։

Հեռավորաց խաղաղությունը, հեռավորաց կյանքի ապահովությունը և ազատությունը՝ խաղաղությունն է, կյանքի ապահովությունը և ազատությունը՝ նաև մերձավորաց։

Անա թե ինչու բացատրելի կդառնա այն խոր հուզումի ալիքը, որ կալեկոծե այս պահուս համայն աշխարհը մարդկային, իբրև հետևանք՝ Լիբանանի նման փոքրիկ և հեռավոր երկրի մը մեջ պատահած դեպքերու և արտաքին զինվորական միջամտությանց։

Այդ հուզումը մեծ է և արդար, ի. ամեն մեկ բարոյական մարդ և բոլոր պետական դեկավարները պետք է միահամուռ կերպով գործեն, ի նպաստ խաղաղության պահպանման և ժողովուրդներու իրավունքի։ Ինչպես ամեն մեծ ու փոքր ժողովուրդ, նույնպես և արաբ ազատատենչ ժողովուրդը իրավունք ունի ձեռք բերելու և պահպանելու իր ազգային միությունը, իր ինքնիշխան անկախությունը և իր կյանքի խաղաղությունը։

Այդ իրավունքը պետք է սրբությամբ ճարտել և դարձնել ճշմարիտ և գերագույն կանոն միջազգային հարաբերությանց մեջ։

Միջին Արևելքի դեպքերու կապակցությամբ Մենք մտահոգված ենք նաև իբրև Հայ եկեղեցվո Հովվապետ, որովհետև արաբական երկրներու մեջ կապրին ավելի քան երեք հարյուր հազար հայեր. Մեր հավատացյալ հարազատ զավակները, որոնք անվերապահորեն կանգնած են այսօր արաբական ժողովուրդներու կողքին, անոնց ազգային ազատագրության և միության պայքարի ճանապարհին վրա:

Մենք կողջունենք մեր մեծ Հայրենիքի՝ Սովետական Միության խաղաղասիրական քարի առաջարկությունները՝ Միջին Արևելքի տագնապին վերջ տալու կապակցությամբ և կաղաչենք առ Աստված, որպեսզի Միավորված Ազգերու Կազմակերպության բարձր իշխանությունը, առաջնորդված սովետական խաղաղության ոգիով, իրավունքի և արդարության սկզբունքներով, իր բարոյական ու բաղաքական հեղինակությամբ դադրեցնեն ռազմական օտար միջամտությունները Միջին Արևելքի մեջ և արաբական ժողովուրդները վերագտնեն իրենց ազգային կյանքի ազատությունը և խաղաղությունը:

Խաղաղությո՞ւն և միասնություն և շինարար վերե՞լք արաբական ազնիվ ու չարքաշ ժողովուրդներուն:

«Խաղաղուքի՞ն ամենեցուն»:

«Փա՜ռք քեզ, Տէր, Աստուած մեր մաղթանքից հետո Երկնային աղոթքով վերջացավ Մայր Տաճարում «վասն խաղաղության ամենայն աշխարհի» կատարված մաղթանքը:



ԾԱՂԿԱՔԱՂ ՇԱՐԱԿՆՈՑԻՑ

ՇԱՐԱԿԱՆՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Առաւօտ խաղաղութեան և արուսեակ զուարթարար.
Այսօր Մարիամ սրբուհի,
Ի փառս քո Քրիստոս ծագեաց մեզ լոյս յորդւոցն օրինաց.
Անդադար երգով սոքօք զքեզ միշտ մեծացուցանեմք:

Դրախտ աստուածային և արեւելք իմանալի.
Այսօր Մարիամ հրաշագեղ,
Ծնեալ ի յԱննայէ, ի մայրութիւն քո հրաւիրեալ Քրիստոս Որդի Աստուծոյ,
Անդադար երգով սոքօք զքեզ միշտ մեծացուցանեմք:

Տապանակ ապրեցուցիչ և տաղաւար Աբրահամեան աստուածընկալ.
Այսօր Մարիամ լուսապայծառ,
Միածին ծնունդ յայտնեալ ծնողաց, ի ծնողութիւն քո կոչեցեալ Միածին Որդի Աստուծոյ.
Անդադար երգով սոքօք զքեզ միշտ մեծացուցանեմք:

Որ իր բարձրութիւնս երկնից բարձր բանիւք բարեբանիս Սրբուհի.
Ի Լիբանանէ դիմեալ ճարսն զգեցեալ այսօր զարեգակն արկեալ զքեզ.
Եւ ընդ ոտիւք գլուխինն ստուերատեսակ.
Որոնուրեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն գլիշատակ ծննդեան քո ի մօրէ:

Վեհագոյն Սերովբէից և բազմաշեալ Քերովբէից Տիրամայր Աստուածածին,
Տապանակ կտակի, սափոր ոսկի խորհրդաւոր,
Խորան բանին Հօր բարձրելոյ.
Որոնուրեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն գլիշատակ ծննդեան քո ի մօրէ:

Մարգարէից հանդիսարան և գրական կենաց մարդկան, Մարիամ
Աստուածամայր.
Ընդունարան Եօթնարփեան շնորհաց, խարիսխ յուսոյ հաստատութեան,
Զուգաթիւ առուց դարուցս անցաւորաց.
Օրհնութեամբ երգով եկեղեցիք աիեզերաց այսօր տօնեն գլխաւոր ծննդեան
Քո ի մօրէ:

Ուրախ լեր, Մարիամ, կոյս անապական,
Զի ի հայրական ծոցոյ անմեկնելի Որդին,
Ի քո յանձն առնու բնակիլ յոտովայնի:

Ուրախ լեր, երկին վեհագոյն, Քերովբէ հոգեղէն,
Որ զանտանելին երկնից և հրեղինաց դասուցն
Ի քո բնակարար մարդական ոտովայնի:

Ուրախ լեր, սիւն հրեղէն, լուսոյն աշտանակ,
Որ զարարչականն եղականաց լուսոյ
Ի բեզ տանելով ծագեցեր խաւարելոց:

Ուրախ լեր, սափոր ոսկի երկնային հացին,
Որ զառ ի վերուստ իջեալ զմանանայն կենաց
Նորոյս պարգևեալ կերակուր Իսրայէլի:

Ուրախ լեր, ամպ լերև, գեղմն իմանալի,
Որ ի բանական երկիր հեղեր զանձրև կենաց.
Արդիւնս ընդ զործոց հաւատոյ պտղաբերեալ:

Ուրախ լեր, դուստր լուսոյ, մայր անհարսնացեալ,
Քանզի յղացելոյն ի քէն համախմբեալ վերնոցն
Որդիք Սիովնի երգեն զփառս ի բարձունս:



ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ

(Երանելիաբնակ պատրիարք Երուսաղեմի Հայոց)

«ՄԱՅՐ ՈՐԴԻՈՎՔ ԹԵՐԿՐԵԱԼ»

Ինչ որ ալ լինի Ս. Կույսին անձին վերաբերմամբ մեր քրիստոնեական ըմբռնումին տեսակետը, ա- վետարանական պատմության կամ դավանաբանական հասկացողությանց ո՛ր անկյունեն ալ դիտե զայն նկատեցին, բարոյական արժանիքին, ավելի ճիշտ՝ մայրական առաքինությանց տիպար կնոջ մտածումն է ամենեն ավելի, որ կլուսապսակե Անոր դեմքը մեր կրոնական գիտակցության առջև— Հիսուս Մանուկը գրկած Մարիամի պատկերը, զոր մեր նայվածքին հանդեպ կպահենք շարունակ՝ մեր հավատքին սրբության խորանին ներքև, խորհրդանկարն է այդ իմացումին մանավանդ։ Ու այդ խորհուրդը, այդ տարազին մեջ ամփոփված, հանապազորդ դաս մըն է, զոր մեր կրոնքը կավանդե մեզի՝ կյանքի ամենեն նվիրական և գործնական մեկ մարզին մեջ։

Բոլոր մյուս ստորոգական հորջորջումները,— Աստվածածին, Աստվածամայր, Ս. Կույս, Ամենօրհնյալ Կույս,— զանց ընելով տակավին «Մարմնատեսիլ Քերովբե», «Երկնավոր արքայուհի»-ի նման խորհրդապաշտորեն բանաստեղծական այն մակդիրները, զորս Նարեկացիի հոգվով տեսանողներ ընծայած են Անոր, ամենքն ալ, թեե ճշմարիտ և իրական վերագրումներ անշուշտ, բայց իրենց խորքին մեջ գեղազարդումը և ընդլայնորեն պանծացումն են միայն պարզ և սրտագին այն զգացումին, զոր ժողովուրդին բարեպաշտությունը խտացուցած է «Մարիամ-Մայրը» ինքնատիպ և անուշ բացատրության մեջ։

Մարիամ, մեր Փրկչին ծնողը, գերազանց Մայրը, տիպար Մայրն է ամենեն ավելի։ Խաչին բարձունքեն սիրո աշակերտին ավանդված պատգամը ամբողջ մարդկության ուղղված մատնանշում մըն է, որ կցուցնե և կհասկցնե մանավանդ, թե ի՞նչպիսի անձ պետք է լինի մայր մը։ Եվ արդարև, Աստուծո և Մարդու Որդիին սրտեն՝ իր կյանքի գերագույն մեկ բոպեին մեջ փրթած այդ բառը, «Ահա՛ մայր քո», անսուտ խոսք մըն է, որ կպարունակե անհակառակելի ճշմարտություն մը։ Մարիամու դեմքը կենդանի այն գաղափարն է, որուն մեջ ապրեցավ մայրական առաքինության իդեալը։

Ճշմարիտ մայրը ան է, որ կհավատա, թե երկունքին պտուղը Աստուծմե իրեն հանձնված ավանդ մըն է, առաջին վայրկյանեն իսկ արդեն Աստուծո շունչովը և Անոր իմաստության և բարության շնորհներովը օծված և որ կմտածե, հետևաբար, թե իր պարտականությունն է ջանալ հսկել և հոգածու լինել, որ ընդմիշտ անշինչ մնան այդ շնորհները, որպեսզի անոնց ներքև ծածկված բարի ընդունակության զարգացումովը՝ իր ծոցածին զավակը կարենա իրեն համար նախասահմանված կոչումին ճամբեն ընթանալ դեպի աստվածային կատարելության ճակատագիրը, որ նպատակն է ամեն մարդկային կյանքի։

Խորհիլն ուզեմն, թե աստվածային եղելություն մըն է, որ տեսի կունենա ամեն անգամ, որ մարդկային ծնունդ մը կզվարթացնե տան մը մթնոլորտը, թե մարդուն կամքեն՝ այսինքն ապատութենեն կախում ունի արդյունագործել կամ ելծել այդ եղելության աստվածայնությունը, թե ամեն մարդկային էակ, իր բնական և հոգեկան հարմարություններուն համեմատ, որոնք իր ծնունդին մեջ նույնիսկ կիրագործվին, սահմանված է դերի մը, որ իր կոչումն է, և թե բոլոր զինքը շրջապատողներուն, այսինքն ամենեն առաջ և ավելի ծնողքին՝ և մանավանդ մոր պաշտոնն ու պարտականությունն է թույլ չտալ, որ խաթարվի այդ կոչումը, իբր սրբություն, իբր ուղղություն, և իբր ամեն ինչ, որ մարդուն մեջ կկացուցանե հոգին՝ պատկերն Աստուծո—ա՛յս պետք է լինի մայրական խրոնմըտանքին ամենեն անառիկ և անհրաժեշտ պարտականությունը։

Թե այսպիսի Մայր մը եղավ իրապես Մարիամ, Ավետարանն է, որ կցուցնէ մեզի։ Ան գիտցավ առաջին վայրկյանեն երկնից կամքը կարդալ Իր աստվածային Զավկին ծերնդեան բացառիկ պարագաներուն մեջ, երկյուղած մտասևեռումով հետևելով այն բոլոր իրադարձություններուն, որոնք կատարվեցան Անոր շուրջը, խանձարուրքեն սկսյալ մինչև դուռը Տաճարին, ուրկե ներս մտեր էր Մանուկը՝ իրեն Իր հայրենի տան մեջ, պահեց այդ բոլոր սքանչելիքներուն խորհուրդը Իր հոգվույն խորը, ու մինչ Հիսուս «կաճեր և կզորանար իմաստությամբ և հասակով», Իր Մորը բարի սրտին, սուրբ կենցաղին և մարուր նկարագին ազդեցությունն ալ կգործակցեր Հոգվույն, Իր մեջ զարգացնելու համար Աստուծո և մարդոց շնորհներովը հավասարապես զարդարված Գերագույն էակի մը կատարելությունը։ Հետը, երբ հաջորդ տարիներու ընթացքին՝ ավելի լուսավորվեցավ Իր մեջ այդ խորհուրդը, երբ հետզհետե ավելի պատեհություններ ունեցավ ըմբռնելու Իր զավկին աստվածային և փրկարար կոչումը, առանց բնավ տարվելու առտնին զգացումներե և մարդկային նկատումներե, Իր հոգեկիր համակերպությամբը քաջալերած եղավ Անոր ընթացքն ու գործունեությունը, մինչև Անոր կախաղանին ոտքը, ուր դյուցազնական արիությամբ դիմավորեց վիշտը, որ իրեն ահավոր սուր մը կանցներ Իր սրտեն։

Ահա՛ պատկերը, որուն մեջ Ավետարանը կցուցնէ մեզի գերազանց Մոր դեմքը. ահավասիկ և դասը, զոր Եկեղեցին կավանդե, իր ուսնախմբած հիշատակի հանդիսավորումներով ջանալով հասկցնել մեզի, թե կնոջ մը համար ինչ բանի մեջ կկայանա մայրական պաշտոնը, և ինչ կերպով մոր մը հոգին կրնա բարձրագույն բերկրանքն զգալ իր զավկին կյանքեն։

Կանցնի՞ կինը. բայց կմնա մայրը. աշխարհի սուտ հրապույրները և կանացի ընդունայն գեղը օր մը միայն կտևեն. մինչ կրոնքն ու բարոյականը անվախճան դարերու փառքով կհավերժացնեն առաքինի մոր մը հիշատակը։

Սեր մայրենի..., «աստվածահրաշ բարմացումով ջամբված հացնդ է ան, ըստ բանաստեղծին. բայց բանինե՞ր արդյոք կերրցած են ճաշակել անոր սուրբ սեղանեն։ Ո՞րքան ցանցառ է թիվը երջանիկ մայրերուն, որոնք կրցած են իրենց սրտահատոր հրեշտակին առաջին ժպիտին մեջ կարդալ մարմնո և հոգվո ազդումներեն զերիվեր անօրենության մը խորհուրդը, անմահ ապագայի մը կոչումը։

Հին կրոնքներուն բարոյական ոլորտին մեջ, և դեռ այսօր՝ արտաքո քրիստոնեության, կինն է, որ ապրած է միշտ մորը մեջ. մայրը, անոնց թույլատրած ըմբռնումին համեմատ, կինն է միշտ, այսինքն այն էակը, որուն համար ծնիլը դիպված մրն է լոկ։

Ավետարանը միանգամ ընդմիշտ սրբագրեց այդ տեսությունը, մորը դաղափարին մեջ մատնանշելով աստվածային պաշտոնի մը բարձրությունը։ Սագմոսերգուին այն մտածումով, որուն մեջ կսաղմնավորվի քրիստոնեության բարոյականը, մայր է իսկապես ոչ թե կամ ոչ միայն այն կինը, որ կծնի, այլ ա՛յն մանավանդ, որ հոգվով կրնա գործակցիլ Աստուծո, երկրի վրա հաստատելու և տարածելու համար երկնից Թագավորությունը։ «Թնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ՝ որպէս մայր որդւովք բերկրեալ». ամո՛ւլն ալ կրնա երջանիկ բլլալ՝ զավակներով բերկրած մոր մը նման, երբ իր մեջ կզգա աստվածային առաքելության մը դերը։ Ճշմարիտ մայրությունը հավատքով զորացած սերն ու գութն է, այսինքն փրկարար գործունեության մը համար կնոջ մը սիրտը լեցնող հոժարությունը։ Նա է իսկապես մայր, որ կծնի Աստուծո որդիներ, այսինքն կրնա իր զավակներուն հոգվույն մեջ մշակել առաքինության և դաղափարական կյանքի շնորհները. որ իր զավակին ծնունդին մեջ կողջունե ոչ թե իրեն համար ապագա նեցուկի մը ապահովությունը, այլ բարի և բարձր սկզբունքներու կանչված էակի մը մարմնացումը։ Թագմածնունդ բեղմնավորությամբ լոկ խայտացող ձագախառն ընտանիքը չի կրնար ճանչնալ այն երջանկությունը, որ կոգևորե ոչ միայն արյան, այլ նաև դաղափարի սերնդագործությամբ կազմված տան մը ներքին կյանքը. հոն է, որ կին մը կրնա ինքզինքը զգալ իրապես որպես «մայր որդւովք բերկրեալ»։



ԴԱՍՏԻԱՐԱԿԻՉ ԿԻՆԸ

Իբրև իրավարարները մեր երջանկության և մեր առաքինություններուն մեկ մասին, կիները իրենց նկարագրին և բարքերուն կնիքը կդրոշմեն մեն մի նոր սերունդի վրա, քանի որ ամեն մի սերունդ, իր առաջին տարիներուն, անո՛նց մի միայն կպատկանի։ Ո՞վ որ խորհրդածած է մեր առաջին տպավորություններուն կորովին և պինդ տևողության վրա, ով որ կրնա մտածել, թե այդ առաջին տպավորություններն ստուգիվ անոնք են, զորս մայր մը կհաղորդե կամ կտպավորե, պիտի չվարանի ընդունելու, թե կինը իր տկար ձեռքերուն մեջ կկրե ընկերության ճակատագիրը։ Մանուկին այս առաջին տպավորություններն են, որ հետո կըլլան կատարյալ մարդուն հրայրքները և երբեմն սկզբունքները։ Ոչ այնքան մայրիկին կաթն է, որ կյուրացնե զավկին արյունը, որքան անոր գաղափարները՝ իր միտքը։ այդ գաղափարներուն մեջ կան նույնիսկ այնպիսիներ, զորս հետո նոր դաստիարակության մը բոլոր ջանքերը չեն կրնար ոչ հաղթահարել և ոչ եղծել։ զգայությունները և պատկերները այնքան ուժեղ կքանդակվին փափուկ հյուսվածքին մեջ անոր ուղեղին, որ այս գործարանը որքան զորանա ինքը, նույնքան նաև կգորացնե զանոնք։ Կտեսնվի ահա, թե ազդեցության նախավորությունը ավելի մեծ է քան մեքուսին գերազանցությունը։ այնպես որ կարելի է ըսել, թե ընությունը մարդը իր առաջին տարիներուն մեջ կնոջ խնամակալության տակ դնելով, անոր կուտա մեծագույն բաժինը՝ անհատնելու և ժողովուրդներու բարոյական ճակատագիրը վարելու գործին մեջ։

Ա. Վ.

ՆՈՅԱՐ

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ ԱՌԹԻՎ ՔԱՆԻ ՄԸ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկեղեցագիտական տեսակետով պատմա-քննական ստուգություն մըն է, թե Աստվածածնի տոները շատ կանուխեն չէ, որ սկսած են քրիստոնեից կրոնական կյանքին մեջ։ Բայց ադկե իրավունք չունեինք ընավ հետևցընելու, թե առաջին քրիստոնյաները նվաղ հարգալից էին Փրկչին Մորը հիշատակին հանդեպ։ Անոր դիրքը այնքան բացառիկ էր փրկության գործին մեջ, որ անկարելի էր որ վաղուց այդ դիրքին համեմատական չըլլար նաև Անոր անձին կարևորությունը՝ քրիստոնեական զգացումի մեջ։ Այս կերպով միայն արդարև կարելի է բացատրել այն ջերմ սերը, որով առաքյալներն ու աշտկերտները շրջապատած էին Տիրամայրը, ինչպես կերևի Գործք Առաքելոցեն. և այդ սիրույն արձագանքն է, որ կլսվի շարունակ հաջորդ դարերու պատմության և ավանդությանց մեջեն։

Տոները չէ որ պիտի կարենային արտահայտել միշտ հավատքին հետ կապ ունեցող այս կամ այն զգացումը. ծիսական այդ հանդիսությունները պայմանադրական հանդիսություններ են, որ կծառայեն պանծացնելու արդեն գոնեցած զգացումները։ Ու Աստվածածնի տոները, հետո և հետզհետե, ավելի փառավոր արտահայտության մը միայն վերածեցին այն ջերմեռանդությունը, զոր քրիստոնյայք միշտ ունեցած էին արդեն Մարիամու մասին։

Թե ստուգիվ Աստվածածնի տոներեն առաջ արդեն գոյություն ունեցած է անոր զգացումը՝ կցուցնեն երեք եկեղեցիները, զորս Կոստանդիանոս Ս. Կույսին անվան նվիրեց իր նոր կայսրության ոստանին մեջ։ Վերջին կես դարու միջոցին Հռոմի Ֆորումին մեջ կատարված պեղումներ երևան հանեցին Ս. Կույսին նվիրված եկեղեցի մը, Santa Maria antica, որ հնագույն է քան նույն ոստանին մեջ ամենեն հին համարված բազիլիկան։ Իրողություն է, թե 431-են առաջ Եփեսոսի մեջ կար Մարիամու նվիրված մեծ եկեղեցի մը, որուն մեջ գումարվեցավ այդ թվականին հոն տեղի ունեցած Գ Տիեզերական ժողովը։ Այդպես պետք է եղած լինի առհասարակ բոլոր հին քրիստոնյա ժողովուրդներուն, հետևաբար նաև մեր մեջ։ Ղուկաս ավետարանիչ գծված Աստվածածնի պատկերի մը Բարթողիմեոս առաքյալի ձեռքով Հայաստան բերված և հանուն Տիրուհվույն շինված փոքրիկ եկեղեցիի մը մեջ դրված ըլլալու ավանդությունը, որ վաղնջական է շատ, մեր ժամակարգության ամենահին մաղթանքներուն մեջ՝ Հովհաննու Կարապետի, Ստեփանոսի և Լուսավորչի անուններեն ալ առաջ միշտ Ս. Կույսին անունին հիշվելը անվրեպ, դավանարանական հարցերու հուզման նախագույն ժամանակներեն՝ Աստվածամոր իմացումին հանդեպ սկիզբեն իսկ մեր եկեղեցվո ցույց տված ուղղափառ կեցվածքը, շաբթվան օրերեն մեկուն, չորեքշաբթի, անոր մտածումին նվիրված լինելը, մեր կրոնական և եկեղեցական գրականության մեջ շատ կանուխեն Ս. Կույսին մասին տածված խանդավառ զգացումը, ասոնք ամենքը կցուցնեն Փրկչին Մոր հիշատակին հանդեպ Հայաստանյայց երկյուղածությունը ամենահին դարերի ի վեր։

[illegible]

Թերևս բոլորովին արհամարհելի տեսությունն մը չըլլա, բայց կարելի չէ նույն տեղն կատարելապես հիմնավոր նկատել այն կարծիքը, զոր ոմանք հայտնած են իբրև բացատրություն Աստվածածնի տոներու հաստատման հապաղումին, զանոնք համարելով Եկեղեցվո իշխանության կողմե մտածված հնարքներ՝ ծածկելու և մոռցնելու համար կարգ մը դիցուհիներու կռապաշտական տոները։ Ավելի ուղիղ պիտի ըլլար ընդունիլ, Հանրի Կելների հետ, թե այդ հապաղումին բուն պատճառն էր այն զգուշավորությունը, զոր Եկեղեցին հավանարար կուզեր ունենալ, որպեսզի ցորչափ բոլորովին արմատախիլ չէր եղած հեթանոսությունը, քրիստոնեից հոգևոր կյանքին մեջ չկազմվեին այնպիսի հանդիսաորություններ՝ որոնք կրնային հիշեցնել հեթանոս աստվածությանց ազգակցական հարաբերությանց մասին եղած միթոսները։ Բաց աստի, ըստ նույն հեղինակին, կարելի է տակավին խորհիլ, թե Եկեղեցին, որևէ ուրիշ հիշատակներու վերաբերմամբ տոնացույց կազմելե առաջ, պարտ էր անշուշտ նախ Հիսուսի Քրիստոսի կատարած փրկագործության և Անոր կյանքին հետ ուղղակի կապ ունեցող իրողությունները տոնախմբելու փույթն ունենալ. դարձյալ, պետք չէ մոռնալ, թե հավատացյալները հին ատեն հետամուտ էին Քրիստոսի կյանքին պարագաներեն անմիջապես հետո տոնելու մարտիրոսացած սուրբերը մանավանդ. առանց մարտիրոսության սուրբ նկատված անձերուն տոնախմբությունը կատարելու սովորությունը ավելի ուշ է սկսած։

Այս կերպով է նաև, որ հապաղած է Ս. Կույսի տոներուն հաստատումը, որ, ամենայն հավանականությամբ, ամենեն կանուխը՝ Ե դարուն վերջերն է սկսած։ Այս առթիվ կարժե դիտել երկու կետեր։ Անոնցմե առաջինը սա է, թե Ս. Կույսին պատարմունքը— իր հարաբերական իմաստով անշուշտ առնելով այս բառը— Արևելքի՛ մեջ սկսած է նախ, և անկե անցած է Արևմուտք։ Այդ շրջանին, Իտալիա կախումի այնպիսի հարաբերություն մը ուներ Բյուզանդիոնի հետ, ու Հռոմի կրոնական իշխանության վերաբերմունքը այնքան փափկանկատ էր եպիսկոպոսական արքունիքի հանոթեպ, որ գրեթե անկարելի էր, որ նոր Հռոմի ճամբով հինեն փոխանցված տնօրինություններու կամ սովորություններու յարժանանային հոն լավագույն ընդունելության։

Իսկ երկրորդ կետը այն է, թե ինչպես նահատակված սուրբերուն տոնին ընդհանրապես հիմ ծառայած է անոնց մարտիրոսությունը, նույնպես, առանց մարտիրոսանալու սուրբ ճանչցվածներուն տոնին հիմ նկատված է անոնց մահը։ Ս. Կույսին տոնախմբությունը Անոր մահվան կամ ննջումին հիշատակին հանդիսավորումն՝ պետք է ծագած ըլլա առաջին անգամ. այսինքն Անոր տոներուն մեջ հնագույնը պետք է նկատվի ննջումին տոնը։ Թե այս այսպես է՝ շափով մը կհաստատվի անով, որ բոլոր առաքելական եկեղեցիներուն մեջ Մարիամի տոներեն ամենեն կարևորն ու նվիրականը նկատված է ցարդ այդ տոնը։

Անցողաբար պարտինք հիշել հոս, թե Ս. Կույսի մահվան՝ հետևաբար և գերեզմանի տեղվույն մասին երբեմն կարծիքներու երկություն մը հառաջ եկած է։ Խորհողներ եղած են ի նպաստ Եփեսոսի, այն տեսությամբ, թե քանի որ Հովհաննես այդ քաղաքին մեջ կրնակեր, ու Մարիամ անոր էր հանձնված ըստ Դ Ավետարանին, շատ բնական է, որ հոն պիտի պատահած ըլլար Իր մահը։ Այս կարծիքին իբրև հաստատություն հառաջ բերված են Գ Տիեզերական ժողովի գումարման ատեն Ս. Կյուրդի խոսած ճառին այն բառերը, որոնց մեջ կըսվի՝ թե «Աստուծո Ս. Մայրը այսօր ամենքս հոս է հավաքած։ Բայց այս խոսքը ակնարկություն է մանավանդ Անոր անվան կառուցված եկեղեցիին. ու եկեղեցի մը կկանգնվեր ոչ թե անպատճառ սուրբի մը գերեզմանին, այլ նաև մեկ մասունքին վրա, և հաճախ նույնպես անոր մեկ հիշատակին առթիվ։ Եփեսոսի այդ եկեղեցին կրնար առաջավելն բացատրվիլ Ս. Կույսին հոն բնակած լինելու ավանդությամբ։ Ըստ այսմ բացորոշապես ճշմարիտ միայն պետք է լինի այն կարծիքը, որ, վաղուց՝ Երուսաղեմի մեջ և ի Գեթսեմանի կցուցնեն Աստվածամոր գերեզմանը։ Վերնատան տեղվույն մոտ, Ս. Կույսի ննջման հիշատակին 1898-ին շինված՝ գերման կաթոլիկներու եկեղեցին կրնա ցուցնել Անոր մեռած վայրը միայն, առանց հերքելու գերեզմանատեղին ավանդությունը։

Թե Հիսուսի Մայրը մեռած և թաղված է Երուսաղեմի՛ մեջ, կհաստատվի ոչ միայն անվավեր ավետարաններով, որոնց խորագույն հնությունը և այս մասին ամենուն համաձայն լինելը մեծ կշիռ ունի անտարակույս, այլ նաև վաղնջական ուխտավորներու պատմածներով և ուրիշ վկայություններով։ Այս վերջիններուն մեջ նշանավորն է Երուսաղեմի Հոռնաղ պատրիարքին Հայտարարածը, 451-ին, ի պատասխան Մարկիանոսի։ Այս կայսրը Կոստանդնուպոլսի մեջ Ե. Կույսին անվան եկեղեցի մը կառուցած ըլլալով և փափագելով հոն փոխա-

դալ անոր մարմինը՝ երբ խնդրեր էր զայն իրմէ, եպիսկոպոսը պատասխաներ էր, թէ չէր գտնված Տիրամոր մարմինը գերեզմանին մէջ, զի երկինքն է ան։

Բանավոր է ուրեմն մտածել, թէ առաջին անգամ Երուսաղեմի՝ մէջ պետք է հանդիսավորված լինի Փրկչին Մորը Ննջումին կամ մահվան հիշատակը։ Այս մասին ամենահին վկայությունը կգտնվի Երուսաղեմի մոտերը ապրած աբբա Ս. Թեոդորոսի մը (+529) վարքին մէջ, ուր կխոսվի Մարիամու հանդիսավոր տոնի մը վրա, որուն մեծ բազմություն կհավաքվեր սուրբ քաղաքին մէջ։ Ի պատիվ Աստվածամոր կատարված այսպիսի հանդիսավոր տոն մը կհիշատակվի ավելի քան դար մը ետքը, Սպանիո մէջ ևս, Ս. Իլդեպոնսի ատենն, որ եպիսկոպոս էր Տոլեդի (+667)։ Այս եպիսկոպոսը տոնը կանխող երեք օրերու ընթացքին կկատարեր թափորներ, և այդ առթիվ նույնիսկ հատուկ պատարագ մը ալ գրած էր։

Ստույգ է, թէ այս երկու վկայությանց մէջ ևս հստակորեն չի հիշվիր, թէ ննջումին տոնն էր այն, ու չի նշանակվիր նույնպես, թէ ո՞ր օր կկատարվեր ան։ Բայց անկէ սա՝ միայն կարելի է հետեցնել, թէ այդ թվականին տակավին միակ հանդիսավորության մը մէջ միահամուռ կկատարվեր հիշատակությունը Ս. Կույսին կյանքին զանազան պարագաներուն, որոնք ավելի նոքը, քանի մը դար հետո, վերածվեցան առանձին տոնակատարությանց, և որոնց մէջ սկիզբեն ամենեն կարևորը նկատված պիտի ըլլա անշուշտ ննջումը, քանի որ առաջին անգամ Իր գերեզմանին շուրջն է, որ կկատարվի տոնը։ Գալով տոնակատարության թվականին կամ օրվան, ավելի քան հավանական պետք է նկատվի, թէ օգոստոսի 15-ը միայն կրնա եղած ըլլալ ան, ինչ որ կցուցնե Ընդհանուր Եկեղեցվո ցարդ հետևած սովորությունն ալ, թեև կան ինչ ինչ նշաններ ևս, թէ ի սկզբան Արևմուտքի մէջ, մասնավորաբար ի Կոլուա, երբեմն տոնված է ան հունվար 18-ին, և Արևելքի մէջ, միայն Ղպտիներու Եկեղեցիին մէջ, հունվարի 18-ին։

Համենայն դեպս Աստվածածնի տոնը, իբրև ամբողջական հիշատակություն Ս. Կուսին կենաց՝ որոշ մասնավորումը միայն ննջումին, սկսած էր արդեն պաշտոնականացած հանդիսավորություն մը լինել Ընդհանուր Եկեղեցվո մէջ, Զ դարուն վերջերը, երբ Մորիկ կայսրը (588—602) հրամայեց զայն տոնախմբել օգոստոս 15-ին։ Մեր մէջ ևս այդպես միայն պետք է եղած լինի Աստվածածնի տոնին ըմբռնումը, և ամենականովը մինչև է դարուն, զի Խորենացվո առ Սահակ Արծրունի գրած թուղթին մէջ զայն սոսկ «տօն Իսկուհւոյն» կոչելը զայդ միայն կրնա հաստատել։

Դիտվեցավ թերևս, թէ Ս. Կույսին տոնին կամ մահվան մասին մեր ցարդ տված բացատրությանց մէջ զգուշացանք գործածելե վերափոխում բառը։ Ընդունիլ պարտինք արդարև, թէ քրիստոնեական հնության՝ գրեթէ մինչև Թ դար, անծանոթ է այդ բառը՝ գեթ այն իմաստով, որով ավելի ետքը և մինչև այսօր հասկցված է ան։ Եկեղեցական գրականության մէջ, Ս. Կուսին մահվան համար երկար ատեն լատիներենին մէջ գործածված են dormitio (ննջում) և pausatio (վախճանում) բառերը, որոնք կթվին թարգմանությունն ըլլալ հունարեն κοίμησις բառին, որ կնշանակե քնանալ, նիրհել։ Կարելի է անշուշտ մտածել, թէ փոխանունաբար ևս կրնան կիրարկված ըլլալ այդ բառերը, նշանակելով որքան՝ մահ, նույնքան և հարություն, նման transitus (անցավորություն) և depositio (ավանդում) բառերուն, որոնք ծիսական լեզվի և վկայաբանությանց մէջ գործածված են մահվան իմաստով, իբրև թարգմանություն հունարեն μετάστασις և ἀνάληψις բառերուն, որոնք կնշանակեն «անցում», «փոխում», հոգիին մարմինեն բաժնվելով երկինք ելլելուն ակնարկությամբ։ Եվ սակայն արժան է դիտել, թէ բուն վերափոխում (assomption) բառը, այժմու իմաստով, իբրև անունը տոնի մը՝ որ կնշանակե Ս. Կույսին մարմնով և հոգվով երկինք վերացումը, չկա խորագույն հնության մէջ։

Ասով ըսել չենք ուզեր սակայն, թէ գաղափարը անծանոթ էր հիներուն. անծանոթ էր ոչ թէ գաղափարը, այլ տոնը։ Վատընդի ուրիշ է եղելության մը գաղափարը, ուրիշ՝ անոր տոնը, գաղափարը խորհուրդն է իրողության, իսկ տոնը՝ հանդիսավորումը այդ իրողության խորհուրդին։

Թէ Ս. Կույսին երկինք վերացման զգացումը Ե դարեն սկսյալ առարկա եղած է քրիստոնեից երկյուղածության, կհաստատվի մեկէ ավելի ապացույցներով։ Այդ մտոք ակնարկություններ կան արդարև Պրոկղի կողմե 428-ին կամ 429-ին Նեստորի դեմ խոսված և Ս. Կյուրղի կողմե 431-ին խոսված քարոզներուն մէջ։ Ադոր կակնարկվի նույնպես Դիոնիսիոս Արիսպագացիի անունով առ Տիտոս եպիսկոպոս ուղղված նամակի մը մէջ, զոր վերջերս դոկտ. Վետտեր թարգմանեց հայերենեն, և որ ամենեն ուշը Ե դարու գրվածք պետք է լինի, ինչպես նաև Երուսաղեմի Հոբնաղ պատրիար-

ջին առ Մարկիանոս կամ Պողքեր գրած պատասխանին մեջ, զոր վերն հիշեցինք։

Հարագան կատարելապես միասույն կ նաև մեզի համար։ Արիսպագացիին տեսութեենեն ներշնչված են Խորենացիի ընծայված առ Սահակ Արծրունի թուղթին հեղինակը և Զաքարիա կաթողիկոս՝ վերափոխման իր ճառին մեջ. տեսություն, զոր հետո որքան բանաստեղծորեն նույնքան առարկայաբար ընդլայնած ես Նարեկացի իր ներբողին, Շնորհալի՝ իր հորինած շարականին և գանձին, Լամբրոնացի՝ իր ճառին, և Կիրակոս Երզնկացի՝ «Արևելք գերարփի» շարականին մեջ։

Ստույգ է այս. այսինքն պարզ է, թե վերափոխման գաղափարը գոյություն ուներ Ե դարեն ի վեր, եթե ոչ ավելի առաջ ևս. իսկ նույնքան ստույգ է նաև, թե անոր՝ տոնի վերածումը, այսինքն ծիսական և պաշտամունքային հանդիսավորմամբ պաշտոնականացումը, սկսած է կատարվիլ առնվազն երկու դար ետքը։ Հռոմի հայրապետներեն Սարգիս Ա (687—701) կհիշեն զայն առաջին անգամ. Շարլըմայնի հրամանագիրներուն մեջ անոր խոսքը կըլլա 813-ին, և Լևոն Դ է, որ կասհմանադրե կատարել զայն ութօրեքով։

Այդ թվականներո՛ւն պետք է կատարված ըլլա ան հունաց մեջ ևս։ Անդրեաս Կրետացի, որ է դարուն վերջերը ապրած է, կըսե, թե իր ատենը քանի մը տեղ միայն կկատարվեր. իսկ Մոդեստոս, Երուսաղեմի հույն պատրիարքը (632—634), Վերափոխման վրա իր ճառին մեջ կհայտնե, թե իրմե առաջ հանդիսավոր կերպով չէր կատարվեր ան։

Որոշ է, թե Վերափոխման տոնին սովորությունը կամ գործադրությունը իր լրումին հանգեցավ, երբ վանականությունը, կուսության սկզբունքին վրա հիմնված գոյություն, հասավ իր բարգավաճ աստիճանին։ ԺԲ դարուն էր, որ կանոնապես հաստատվեցավ անիկա Կիր Մանվել Կոմնենոսի հրամանով, Բյուզանդական կայսրության բովանդակ սահմաններուն մեջ. այդ թվականին է նույնպես, որ ընդհանրականորեն ընդունվեցավ անիկա Արևմուտքի մեջ, ինչպես կերևի Ս. Բեռնարդոսի՝ Լիոնի կանոնիկոսին գրած մեկ նամակեն։ Միևնույն ժամանակին է, որ եղած է վերջնական և կանոնական հաստատումը Հայ Եկեղեցվո մեջ։ Մեր Մատենադարանի երկաթագիր և թանկագին մեկ ձաշոցին մեջ, որ, թեև Գրիգոր Տղա հայրապետի օրով գրված (1192-ին), բայց նախավկայաբերյան շրջանի ձաշոցի ընդօրինակություն մըն է հայտնապես. ամբողջ տարիին մեջ անգամ մը միայն Ս. Կույսի համար տոն կնշանակվի, առանց սակայն «Վերափոխման» ակնարկության, պարզապես «Ամբոստոս ամսոյ որ ասի ԺԵ՝ Մարիամայ Աստուածածնին» վերտառությամբ։ Դար մը ետքը, 1299-ին, գրված մագաղաթյա բոլորգիր ձաշոցի մը մեջ կհանդիպինք փոխում բառին. իսկ ավելի հետո գտնված ձաշոցներուն մեջ՝ մերթ ենթում և մերթ փոխում բառերուն։

Հայտնի է ուրեմն, թե Վերափոխման տոնը մեր մեջ հայրապետական կարգադրությամբ իր հանդիսավորագույն ձևը առավ Ներսես Շնորհալիի տնօրինությամբ, որ, ինչպես Տոնացույցներուն մեջ գրված ծանոթություններեն կհասկցվի, արդեն գոյություն ունեցող եռօրյա տոնախմբությունը վերածեց իննօրյայի, կարգադրելով, որ երեք օրերու շարականներու և ընթերցումներու կարգը երկիցս կրկնվի մնացյալ վեց օրերուն մեջ։ Տոնացույցին այդ տեղեկությունը բոլորովին հավանական չի թվիր սակայն. ոչ միայն, որովհետև հաջորդ դարերու ձեռագիրներեն շատերուն և նույնիսկ հնագույն տպագիր ձաշոցներուն մեջ Վերափոխման տոնը երեք օր միայն գրված է և հաջորդող առաջին հինգշաբթի և շաբաթ օրերուն սրբոց տոն նշանակված է, այլ նաև, որովհետև անտեղի չէ թերևս մտածել, որ եթե մեծանուն հայրապետը ինքն ըրած ըլլար այդ կարգադրությունը, պիտի չբավականանար միայն երկրորդ և երրորդ օրերուն համար գրելով հատուկ շարականներ, ու մյուս վեց օրերուն «կանոնս»-ներն ալ պիտի զարդարեր իր գրչին ու քնարին հոգեշունչ ոգեմներով։— Առաջին օրվան շարականը՝ «Այսօր ժողովեալ», մասնագրական ավանդությամբ առհասարակ կընծայվի Մովսես Խորենացիին, զոր պետք է ընդունինք անշուշտ այդ անվան տակ այլ ևս ճանչված Սյունեցի Քերթողը, որ կապրեր է դարուն։ Արդարև, դժվար է ընդունիլ, թե Ե դարուն, երբ Ս. Կույսին ննջումին հիշատակին մեջ դեռ բոլորովին չեշտված չէր փոխումին իմացումը, պիտի կարելի ըլլար գրել այդպիսի օրհներգ, որ Արիսպագացիին վերագրված ավանդության պատմողական հարաստությունն է ինքնին։ Շարականները անպատճառ ժամանակագրական ստուգանիշը չեն տոներու թվականին. անոնք կրնան հորինված ըլլալ իրենց տարփոգած տոներուն հաստատումեն ետքը. և կրնա լինիլ նույնպես, որ շարականի մը հորինումը օգնած ըլլա հիշատակի մը կամ սուրբի մը տոնակատարման։ Տոներ կան, որոնք չունին շարական, ու փոխադարձաբար շարականներ կան ձեռա-

գրաց մեջ, որոնց առարկա եղած հիշատակը կամ սուրբը չեն տոնված։ Բայց Աստվածածնի պարագան բոլորովին բացառիկ է, և չի կրնար ենթարկվիլ այդպիսի դատումներու։ Եթե անոր հերկինս փոխումին նվիրված առաջին շարականը է դարուն գրված է ստուգիվ, հարկ կրլլա խորհիլ, թե այդ տոնին՝ պաշտոնականացման գեթ առաջին կամ մասնակի քայլերը պետք է առնված ըլլան արդեն այդ ժամանակին մեջ։ Միևնույն խորհրդածությունը կարելի է ընել իբր «Ճաշոց» երգված Աստվածածնի այլապես գեղեցիկ այն մյուս շարականին, Անբառամ ծաղիկին մասին, որուն հեղինակը պետք է եղած լինի կա՛մ նույնինքն Մովսես Քերթող, և կամ է դարուն ապրող ուրիշ գիտնական և երկյուղած կրոնավոր մը, Բարսեղ Ճոն։

Գալով այն հարցին, թե մեր մեջ ի հնումն ի՛նչ օր կկատարվեր Վերափոխման տոնը, կրնա մտածվիլ, թե ի սկզբան անիկա կկատարվեր օգոստոս 15-ին, ի՛նչ ալ լիներ այդ ամսաթիվին պատահած օրվան պատկերը, կիրակի կամ ոչ. այսպես կարծելու իրավունք կուտա մեզ մանավանդ վերև հիշված մեր երկաթագիր Ճաշոցին «Օգոստոս ամսոյ որ օր 15» պատվերը, որուն նոտրագրված բառերը անշուշտ պետք է հասկնալ «15-ը ի՛նչ օր որ ըլլա»։ Ա՛յդ է արդարև, ինչպես կանխեցինք դիտել տալ, բոլոր հին եկեղեցիներուն սովորությունը, և էր ի հնումն ևս։ Կերևի թե, սակայն, հետո մեր մեջ խստիվ պարտավորիչ դարձավ օգոստոս 15-ի մերձավոր կիրակիին տոնելու սովորությունը. այնպես որ, երբ հունաց հետ միաբանության խնդիրներուն ատեն հայերեն ի մեջ այլոց կպահանջվեր, որ անվրեպ օգոստոս 15-ին տոնախմբեին Վերափոխումը, առանց խորության օրվան պատկերին, թե՛ Շնորհալի Նախ՝ և թե՛ Գրիգոր Տղա՝ հետո, կստիպվեին մերժել, իբրև ազգային հաստատ սովորություն մը ներկայացնելով զայն։ Չենք գիտեր, թե տոնին կիրակիի փոխադրությունը կատարված է արդյոք Վերափոխման գաղափարին տիրական դառնալեն ե՞տքը, այլ ևս տեսակ մը հարություն նկատելով և այդ պատճառավ Հիսուսի հարության տոնի՞ն կցորդելով զայն, թե պարզապես գործնամիտ ոգվով վերաբերվելով, աչխինքն դյուրացնելու համար անոր ժողովրդական մեծ համախմբությամբ կատարումը։ Թերևս ավելի հավանական լինի այս վերջին կերպը, երբ խորհվի մանավանդ, թե Խաչվերացի տոնն ալ, որուն ամսաթիվը սեպտեմբեր 14 է Ընդհանուր եկեղեցիի համար, մենք վաղուց սովոր ենք կատարել մերձավոր կիրակիին։

Ամփոփենք. եկեղեցվո կողմե Հիսուսի Մոր ընծայված հարգանքը հեռի է պաշտելություն մ'ըլլալե. անիկա փրկագործության խորհուրդին միջոց եղած բարի էակի մը նկատմամբ զգացված երկյուղած սիրո արդար գործ մըն է սոսկ։ Ի սկզբան, այդ երկյուղածությունը կարտահայտվեր՝ Փրկչին տերունի և տերունական տոներուն հետ խառն հիշատակությամբ միայն։ Ե դարեն ետքն է, որ Աստվածածնի կյանքին զանազան պարագաները առարկա կդառնան ուրույն տոնական հանդիսավորմանց, նախ Արևելքի մեջ, ուրկե հետո կանցնին Արևմուտք։ Այդ տոներուն մեջ հնագույնն է Ս. Կույսին մահվան հիշատակը, որ նախ կտոնվի իբրև Ննջում. հետո, է դարեն ասդին, անոր կխառնվի նաև փոխման կամ վերափոխման իմացումը, որ Թ-րդին արդեն տիրական կդառնա, և ԺԲ-րդին մեջ ընդհանրական և պարտադիր կդառնա, բոլոր առաքելական եկեղեցիներուն մեջ։

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1958 Թ. ԱՊՐԻԼԻ 11-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեց Արարատյան Թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանի զեկուցագիրը Թեմում տարվող կազմակերպչական աշխատանքների մասին։ Առաջնորդական փոխանորդի և Թեմական խորհրդի ջանքերի շնորհիվ Թեմի եկեղեցական եկամուտները անցյալ 1957 Թվականի համեմատությամբ կրկնապատկվել են։ Միայն Երևանի երեք եկեղեցիները 3 ամսվա ընթացքում տվել են 270 000 ռուբլի եկամուտ, անցնող 1957 Թվականի նույն ժամանակաշրջանի 136 000 ռուբլու փոխարեն։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր գոհունակությունն արձանագրեց Վահան վարդապետի եռանդուն գործունեության համար։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում Գեղարդի վանքի վանահայր նշանակեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանին, հանձնարարելով նրան արագացնել Գեղարդի վանքի շրջակայքում կատարվող վերանորոգման բոլոր աշխատանքները։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ նույն նիստում որոշվեց արժանապատիվ Տ. Հարությունը քահանա Տերտերյանին ազատել Խոր Վիրապի վանքի վանահայրությունից՝ նրա անգործունեության համար և նոր վանահայր նշանակել արժանապատիվ Տ. Գրիգոր քահանա Ջաֆդեյանին։

1958 Թ. ՄԱՅԻՍԻ 3-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ այսօրվա նիստում կարդացվեց և գոհունակությամբ ընդունվեց Թեհրանի Թեմական խորհրդին ուղղված Գերագույն Հոգևոր Խորհրդի պաշտոնական նամակը, որտեղ մանրամասն հերքվում էին Թեմի պատգամավորական ժողովի Ս. Էջմիածնից բաժանվելու բանաձևի պատճառաբանությունները։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ նույն նիստում, Արարատյան թեմի թեմական խորհրդի միջնորդությամբ, 400 ռուբլի կենսաթոշակ նշանակվեց ծերունազարդ արժանապատիվ Տ. Գրիգոր քահանա Մարգսյանին, նրա առաջացած տարիքի և անցյալի եկեղեցական երկարատև բարվոք ծառայության համար։

1958 Թ. ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում մեծ գոհունակությամբ և շնորհակալությամբ կարդացվեց Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության 21 մայիսի 1958 թվակիր պաշտոնագիրը, որով տեղեկացվում էր, թե Մայր Աթոռի բարերար հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի կտակի տրամադրությունների համաձայն և կտակակատարներ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոյի, պր. Գ. Լ. Եսայանի և հիմնարկության խնամակալների որոշմամբ, Մայր Աթոռի անունով, 1958 թվականի մայիսի 20-ին, Նյու-Յորքի Ժ. Պ. Մորգան և ընկ. դրամատան միջոցով Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդարան է փոխանցվել առաջին հատկացումը՝ 80 000 դոլլար։

1958 Թ. ՀՈՒՆԻՍԻ 27-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ այսօրվա նիստում կարդացվեց Ադրբեջանի և Թուրքեստանի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի դեպի ռումինահայ և բուլղարահայ թեմերը կատարած հովվական երեքամսյա այցելության զեկուցագիրը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց իր գոհունակությունը արձանագրել հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետի հովվական այցելության արդյունքների և բեղմնավոր գործունեության համար։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում որոշվեց մի երկրորդ նամակ ուղարկել Թեհրանի թեմական խորհրդին, կրկին կոչ անելով չեղյալ համարել Ս. Էջմիածնից բաժանվելու իրենց որոշումը և շարունակել բնականոն հարաբերությունները Մայր Աթոռի հետ ըստ նախընթացի, արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Հաճյանին ընտրել թեմական առաջնորդ և ուղարկել նրան Ս. Էջմիածին՝ վարդապետական վեղար ստանալու համար։

ՍՈՒՅՆ ՆԻՍՏՈՒՄ ԿԱՐԴԱՑՎԵՑ ՆԱԵՎ ԱՄՆ-ի Հարվրրտ քաղաքի համալսարանի դիմումը, Վեհափառ Հայրապետին ուղղված համալսարանի պրոֆեսոր պր. Ավետիս Սանճյանի կողմից, որով խնդրվում է Հայ Եկեղեցու պատմությանն, դավանանքին վերաբերյալ պիտական ընդարձակ մի ուսումնասիրություն ուղարկել, այն ղետեղելու համար հայ ժողովրդի պատմությանը և մշակույթին նվիրված այն ստվար հատորի մեջ, որ հրատարակության է պատրաստվում Հարվրրտ համալսարանի կողմից։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց հարգել համալսարանի դիմումը, պատրաստել Հայ Եկեղեցուն վերաբերյալ այդ ուսումնասիրությունը, որը Գերագույն Հոգևոր Խորհրդում քննվելուց հետո կուղարկվի համալսարանին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ առաջարկով Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում քննարկվեց նաև վարդապետական ձեռնադրության և ծայրագույն վարդապետական աստիճան ստանալու հարցը։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ ընդունելով Վեհափառ Հայրապետի առաջարկը, անհրաժեշտ գտավ խստությամբ պահպանել այն հին կարգը, ըստ որի վարդապետ ձեռնադրվողը և ծայրագույն վարդապետության աստիճան ստացող հոգևորականը անպայման պետք է ներկայացնի գրավոր արժեքավոր մի ուսումնասիրություն կրոնա-եկեղեցական, աստվածաբանական և եկեղեցապատմագիտական, եկեղեցա-բանասիրական թեմաներով։ Աշխատությունը պետք է ներկայացվի Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից կազմված հանձնախմբին, որը կորոշի թեկնածուի արժանավորությունը և կխնդրի Վեհափառ Հայրապետից՝ արտոնել վարդապետական աստիճանի տվչությունը։

Ինչպես հայտնի է, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ գումարված Կահիրեի եպիսկոպոսական ժողովը ևս զբաղվեց Հայ Եկեղեցու բարեկարգության, եկեղեցականների հոգևոր դաստիարակության հարցերով, և իր 1956 թվականի մարտի 8-ի Ը և վերջին նիստում հատկապես զբաղվելով եկեղեցական տիտղոսների հարցով, եկավ այն ընդհանուր եզրակացության, թե տիտղոսներու տվչության մեջ հարկ է դրած դնել աշխարհչությունն և ավագության, վարդապետության, ծայրագունության և արքության տիտղոսները տալ միայն ստուգապես արժանավորներուն։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը 15 օրվա արձակուրդով մեկնեց Ռոստով, իր ազգականների մոտ։ Սրբազան հայրը Ռոստովի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում քարոզել է և պատարագել, այցելել է Ս. Խաչ վանքի և գերեզմանատան եկեղեցին։

Գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը Ռոստովում գտնված միջոցին, տեղի ռուսաց եկեղեցու առաջնորդ գերաշնորհ Տ. Ցլավիանոս սրբազանի հրավերով այցելել է ռուսական եկեղեցին և ներկա է եղել սրբազան արարողության։

Հայկազուն սրբազանը հուլիսի 15-ին վերադարձավ Մայր Աթոռ լավագույն տպավորություններով։

***

ՀՈՒԼԻՍԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Բարեկենդան Վարդավառի պահոց»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը «ԵԹԷ արմատն սուրբ է ապա և ոստքն»։

***

ՀՈՒԼԻՍԻ 8-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց վրահայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը թեմական գործերով։ Սրբազանը իր թեմը վերադարձավ հուլիսի 12-ին, շաբաթ օր։

***

ՀՈՒԼԻՍԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Վարդավառ, «Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Տերունական մեծ տոնի առիթով Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ մատուցեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը և քարոզեց Քրիստոսի այլակերպության տոնի հոգևոր ու բարոյական նշանակության մասին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Օրվա տոնի կապակցությամբ Մայր Աթոռ ուխտի էր եկել հավատացյալների հոծ բազմություն։

***

ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաջիրյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Ովսան համօրէն ննջեցելոց»։

***

ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Գեղարդի վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը վանական հարցերով և հուլիսի 18-ին վերադարձավ իր պաշտոնատեղին։

***

ՀՈՒԼԻՍԻ 17-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը։ Ամսի 22-ին առաջնորդական փոխանորդը վերադարձավ իր թեմը։

***

ՀՈՒԼԻՍԻ 19-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Յոան Սրբոյն Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարություն արեղա Մատնեցյանը։

***

ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ արեղա Սանթուրյանը և քարոզեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը խաղաղության մասին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❊❊❊

ՀՈՒԼԻՍԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը ավարտուսաղմոս, երուսաղէմ թէ մոռացայց զքեզ բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Եգիպտոսից և Ֆրանսիայից ժամանած տուրիստների 70 հոգուց բաղկացած խումբը։

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը բարեհաճեց տուրիստներին ընդունել Վեհարանում, զրուցել նրանց հետ, հետաքրքրվել ֆրանսահայ և եգիպտահայ ազգային-եկեղեցական և մշակութային կյանքով և վերջում օրհնել բոլորին ու մաղթել նրանց բարի ճանապարհ։

❊❊❊

ՀՈՒԼԻՍԻ 30-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, առավոտյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետը 20 օրվա արձակուրդով մեկնեց Կիսլովոդսկ՝ հանգստանալու համար Գորնիե Վերշինի սանատորիայում։

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, վանքի պաշտոնեությունը և Երևանի եկեղեցիների քահանայից դասը։

Վեհափառ Հայրապետին ճանապարհեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր գավազանակիր հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒԼԻՍԻ 4-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Մեծ Բրիտանիայի Մշակութային ընկերակցության պատվիրակությունը, որը մեր երկրում հյուր էր «ՍՍՌՄ—Մեծ Բրիտանիա» ընկերության հրավերով։ Պատվիրակությանը գլխավորում էր Էդինբուրգի համալսարանի ռեկտոր Ջեյմս Ռոբերտսոն Ջաստիսը։

Հյուրերն ընդունվեցին պատշաճ հարգանքով Մայր Աթոռի միաբանության կողմից։ Նրանք այցելեցին հնադարյան Տաճարը, եղան եկեղեցա-հնագիտական թանգարանում, որտեղ հիացմունքով դիտեցին եկեղեցական սպասները, ասեղնագործ իրերը, մագաղաթյա ձեռագրերի յավագույն նմուշները։ Հյուրերը յավագույն տպավորություններով բաժանվեցին Ս. Էջմիածնից։

❊❊❊

ՀՈՒԼԻՍԻ 5-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ այցելեցին Ռումինիայի հիդրոշինարարները։ Նրանք դիտեցին Մայր Աթոռի ճարտարապետական կառուցվածքը, մանրանկարչությունը, եղան եկեղեցա-հնագիտական թանգարանում, որտեղ բացատրություններ տրվեցին հարգելի հյուրերին։

❊❊❊

ՀՈՒԼԻՍԻ 7-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեցին չեխոսլովակյան ապակուարդյունաբերության մի խումբ մասնագետներ։ Նրանք հետաքրքրությամբ դիտեցին Մայր Տաճարն ու եկեղեցա-հնագիտական թանգարանը։

❊❊❊

ՀՈՒԼԻՍԻ 12-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Բուլղարիայի մարմնամարզիկների պատվիրակությունը, որի կազմի մեջ էին Բուլղարիայի մարմնամարզության բացարձակ չեմպիոններ Թեոդոր Բոկվարովը և Սալտիրկա Տիրպովան, միջազգային մի շարք մրցումներում մրցանակ շահած Ստոյան Կոեը և ուրիշներ։ Հյուրերը եղան Մայր Տաճարում և եկեղեցա-հնագիտական թանգարանում։

❊❊❊

ՀՈՒԼԻՍԻ 4—25-ԻՆ Մոսկվայից, Լենինգրադից, Թբիլիսիից, Բաքվից և Սովետական Միության բազմաթիվ այլ քաղաքներից, ինչպես նաև Հայաստանի մի շարք շրջաններից Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին բազմաթիվ պատգամավորություններ, արշավախմբեր և այլ այցելուներ։

Այցելուներին և հյուրերին բացատրություններ էին տալիս և առաջնորդում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և թանգարանի վարիչ հոգեշնորհ Տ. Հուսիկ արեղա Սանթուրյանը։



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ.— Հունիսի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց ՍՍՌՄ ժողովրդական արտիստ, մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը իր որդու, դստեր և մի խումբ ուսանողների ընկերակցությամբ։ Մեծահարգ հյուրը պատշաճ հարգանքով ընդունվեց Մայր Աթոռի միաբանության կողմից։ Մենանուն կոմպոզիտորը եղավ Մայր Տաճարում, եկեղեցա-հնագիտական թանգարանում, հետաքրքրվեց Մայր Տաճարի վերանորոգության և բարեկարգության հարցերով, ինչպես նաև Մայր Տաճարի դպրաց դասի երգչախմբով։ Ի պատիվ հյուրի, Վեհափառ Հայրապետը Վեհարանում կազմակերպեց ընդունելություն, որն անցավ շատ սիրալիր և ջերմ մթնոլորտում։ Վեհափառ Հայրապետը արվեստագետի հետ ունեցավ սրտագին զրույց՝ նվիրված երաժշտական հարցերին ընդհանրապես և հայկական երաժշտության մասնավորապես։ Ա. Խաչատրյանը խոսեց արտասահմանյան հայ գաղութներում իր գտած ջերմ ընդունելության և տպավորությունների մասին, ինչպես նաև այդ գաղութների ազգային կյանքի մասին։ Վեհափառ Հայրապետը Իր ուրախությունը հայտնեց մեծանուն արվեստագետին՝ ի համբավ ծանոթությունից հետո անձամբ ես ծանոթանալու առթիվ և ասաց. «Մենք ծանոթ ենք, անշուշտ, Ձեր երաժշտությանն ու համբավին և ուրախ ենք, որ մեր ժողովուրդը ունեցել է տվել Ձեզ նման երաժշտագետի, որը կարող է միայն պատիվ բերել Հայ Ազգին։ Ավելի քան մեկ ամսվա սիրալիր զրույցը ավարտվեց Հայրապետական օրհնությամբ։

Մեծատաղանդ կոմպոզիտորը Վեհարանի պատվո հյուրերի տպավորությունների մասյանում գրեց. «Խորին հարգանքի զգացմունքով այցելեցի Ս. Էջմիածին, որը հայ մշակույթի պատմության մեջ խաղացել է ոչ փոքր դեր։ Ցանկանում եմ նոր ծաղկում այս հայ օջախին։ Ցանկանում եմ հաջող գործունեություն հայկական ներկա իրականության հետ։ Հայտնում եմ խորին շնորհակալություն Վեհափառ Հայրապետին՝ Իր սիրալիր ընդունելության համար։

ՆՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Դիտությունների ակադեմիայի Պետական պատմական թանգարանը հարստացավ հայ ժողովրդի պատմության նոր շրջանի՝ ԺԶ—ԺԹ դարերի առաջին կեսի պատմության մշտական ցուցահանդեսով։ Ցուցահանդեսն սկսվում է սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի տիրապետության ներքո հայ ժողովրդի ծանր վիճակը վերարտադրող ցուցանյութերով։

Հ. Ջարդարյանի նկարը պատկերում է 1604 թվականի Շահ Աբասի հրամանով՝ հազարավոր հայերի բռնի գաղթը դեպի Պարսկաստանի խորքերը։

Պղնձից, փայտից, կավից և քարերից պատրաստված զանազան չափերի ու ձևերի ամանները, ձիթաբրագները, փականքները, ձեռագործները այցելուին ծանոթացնում են այն ժամանակվա հայ ժողովրդի կյանքին ու կենցաղին։

Առաջին սրահում ցուցադրված է համաշխարհային հարստաբանության նշանավոր հուշարձաններից մեկի՝ Թալ-Մահալի մակետը, որի կառուցման մասնակցել են նաև հայ վարպետները։ Ցուցահանդեսի լավագույն ցուցանմուշներից է 1512 թվականին Վենետիկում հրատարակված առաջին հայ գիրքը՝ Մեղապարտ Հակոբի «Պարզատումարա»-ն։ Թուն Հայաստանի հողի վրա տպագրական գործն սկսվում է միայն ԺԸ դարի երկրորդ կեսից, երբ Էջմիածնում 1771 թվականին հիմնադրվում է առաջին տպարանը, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ձեռքով։

Հատուկ ցուցափեղկերի մեջ ցուցադրվում են նյութեր, որոնց ցույց են տալիս ռուս-հայկական հարաբերությանց աստիճանական զարգացումը։

Ուշագրավ է Հայաստանի լուսավորության կենտրոններին նվիրված խորաքանդակ քարտեզը, որտեղ պատկերված են ԺԹ դարի մշակութային վերելքն ու նրա ակնառու գործիչները։

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՕՐԸ.— Հունիսի 29-ին, առաջին անգամ, սովետական երիտասարդությունը նշեց իր տոնը՝ Երիտասարդի օրը։ Լայնածավալ Հայրենիքի բազմահազար երիտասարդներն ու երիտասարդուհիները ցուցադրեցին իրենց սքանչելի և բազմազան նվաճումները, որոնք ձեռք են բերվել ուսման, աշխատանքի, գիտության և սպորտի բնագավառներում։ Այդ տոնը

այսօրվա երիտասարդության ստեղծագործական ուժի, գիտելիքների, հոգևոր հարստությունների դրսևորման տոնն է։

Հայաստանի երիտասարդությունը ևս անսահման գոհունակությամբ և պատասխանատվության բարձր զգացումով նշեց իր տոնը։ Ամենուրեք, արտադրական ձեռնարկություններում, գործարաններում ու ֆաբրիկաներում, կոլտնտեսություններում, դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխույժ ոգևորություն տիրեց։

Հայրենի հարազատ կառավարության ամենուրյա հոգատարությունն ու իմաստը քաջալերում և ստեղծագործական նոր հաջողություններին են մղում մեր երիտասարդությանը։

Հայաստանի երիտասարդությունը իր տոնը նշավորեց նորանոր հաջողություններով։ Մեր երիտասարդները իրենց ուժն ու եռանդը չեն խնայում Հայրենիքի փրկության ու առաջընթացի գործում։

Հայ երիտասարդությունը հայ ժողովրդի, մեր երկրի խոստումնալից ապագան է։

ԲԱՑՎԵՑ ՀԱՋԱՐԱՄՅԱ ԼՄԻ ԳԱՂՏՆԻՔԸ.— Սևանա լիճը շրջապատող լերկ լեռները, լճի զուլալ ջրերը, հարևանցի կերպով նայողից թաքցնում են հինավուրց խոր գաղտնիքներ անտառային վայրի գեղեցկությամբ կյանքի կոչ մեզանից շուրջ 5 000 տարի առաջ այդ տեղերում ապրող մեր նախնիների մշակույթի վերաբերյալ։

Մարդկային միտքը աշխատում է թափանցել այդ գաղտնիքներին։ Անտառապատվում և կենդանանում են լերկ ամայությունները, ցամաքեցված լճահատակից կորզվում է լրերի այնքան նախանձախնդրությամբ պահպանած ավանդը։

Կիկլոպյան ամրոցներ, լայն և ուղիղ փողոցներով քնակատեղիներ, տարբեր դարաշրջանների պատկանող դամբանաշտեր կամ ցեղապետական առանձին դամբանարաններ այսոր մրցում են իրար հետ գտնվելու համար Սևանի ավազանի նախկին տերերի հզորությունն ու ճարտարությունը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմական պատմական թանգարանի հնագիտական արշավախումբը բացել է ավելի քան 25 կրոմլեխ և 10 դամբանարուրգ։ Որքան էլ լուրը խմորած լինի փայլյա և մետաղյա իրերը, նորից հողագամբարանները դիմացել և պահպանել են իրենց հանձնված առարկաների սրոշ նմուշները այնպիսի կատարելությամբ, որ մենք կարող ենք հստակ պատկերացում կազմել այդ առարկաները ստեղծող տերերի ոչ միայն նյութական մշակույթի, այլև հավատալիքների, պետական և հասարակական կազմի և փոխհարաբերությունների, արվեստների, զինվորական և երկրագործական գործիքների և նրանցով պայմանավոր կյանքի մասին։

Առանձին դամբանարուրդներ, հավանորեն արքայական, ունեն 18—20 մետր տրամագիծ, գետնից 80 սանտիմետր բարձրությամբ։ Ամենից ուշագրավն են (ճաշեկի դամբանարուրդները։ Հետաքրքիր են երկանիվ, եռանիվ և քառանիվ սայլերը իրենց ծածկերով։ Դրանք ծառայել են որպես դագաղ։ Ամբողջ սայլի կառուցման մեջ, բացի լծի պղնձյա զարդերից, մետաղ չի օգտագործվել։

Թաղավորական դամբանարուրդներում բազմաթիվ կմախքների ներկայությունը ապացույց է թաղավորին մարդ զոհելու սովորության։ Գերեզմանների բովանդակությունը խոսում է մեր նախնիների անգենական մասին ունեցած հավատի մասին։ Ուշագրավ են իրենց ներքությամբ և հաչակով ոսկյա և այլ մետաղներից պատրաստված զենքերն ու զարդերը։ Հզկված հայելին խոսում է նրանց ճաշակի մասին։ Պղնձե ցլի արձանիկը արվեստի անզուգական մի նմուշ է։ Մեր հիացումը ի տես դամբարաններից պեղված այդ առարկաների անվերապահ հարգանքի է վերածվում դեպի այդ նախնադարյան գեղարվեստագետ վարպետները, որոնք այդ հեռավոր ժամանակվա ծայրահեղ հետամնաց տեխնիկայի պայմաններում ավել են բաչակով և նուրբ արվեստի գործեր, իրենց ամենանախնական միջոցներով և ձեռքերի արտակարգ շնորհի միջոցով միայն։

Եանա երկրի— արդյո՞ք Սևանի հին անունը չէ— այս դամբարանները կարելի է դասել աշխարհում իրենց տեսակի ամենաուշագրավ հուշարձանների շարքին, ճշտվել է նաև Հրազդանի ծագման մոտավոր թվականը՝ շուրջ 2200—2300 տարի մեզանից առաջ։

ԾՐԵՎԱՆԻ ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱՅՈՒՄ.— Երևանի «Հայֆիլմ» կինոստուդիան նկարահանում է «Հայաստանի ճարտարապետությունը» կինոակնարկը։ Կինոակնարկի ռեժիսորն է Վ. Հայկազյանը, օպերատորը՝ Մ. Հովհաննիսյանը։ Նրանք շինչ երկնակամարում ինքնաթիռից նկարահանում են Գառնիի, Զանգեզուրի և այլ վայրերի ճարտարապետական կոթողները՝ պատմական ու պատվական մեր վանքերը։

Ռեժիսորը Գ. Մելիք-Ավագյանի ղեկավարությամբ նկարահանման է պատրաստվում «Աշխարհի ծայրին» ֆիլմը։ Ռեժիսոր Ս. Գեորգովի ղեկավարությամբ՝ «Ուրատսորը գինի» նոր կինոկոմեդիան։ Արդեն վերջանալու վրա է «Պանի սիրո մասին» վեպարվեստական ֆիլմը։

ԱՇԵԱՐՀԻ ԱՌԵՌՈՒԱԳՈՒՅՑ ՌԱԴԻՈ-ՀԵՌԱԴԻՏԱԿԸ.— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի աստրոֆիզիկական աստղադիտարանում ավարտվեց նոր ինտերֆերենցիոն ռադիո-հեռադիտակի հավաքումը, որը աշխարհի խոշորագույն հեռադիտակներից մեկն է։ Նոր ռադիո-հեռադիտակը հզոր միջոց է տիեզերքի բազմակողմանի հետազոտության համար։ Նրա օգնությամբ կուսումնասիրվեն մեր Գալակտիկայի սահմաններում գտնվող տիեզերական օբյեկտների ճառագայթման բնույթները, ինչպես նաև գալակտիկայից դուրս գտնվող միգամածություններն ու տիեզերական այլ կազմավորումներ, այդ թվում նաև այնպիսի աղոտ, հեռավոր միգամածություններ, որոնք հնարավոր չէ գտնել նույնիսկ ամենախոշոր օպտիկական հեռադիտակով։ Նոր ռադիո-հեռադիտակը նախագծել և կառուցել են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի սարքաշինության լաբորատորիան, տեխնիկական գիտությունների թեկնածու Գ. Մինաս-

յանի ղեկավարությամբ և Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանի ու ռադիո-աստղագիտության լաբորատորիան, ղեկավարությամբ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Վ. Սանամյանի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԸ.— Անցյալ տարի Վրաստանի գյուղերից մի հայ կին ակադեմիկոս Վ. Համբարձումյանի մոտ բերեց հայկական հնագույն աստղագիտական մի գործիք։ Վրայի մակագրություններից պարզվեց, որ գործիքի հեղինակը հին Հայաստանի Գողթն գավառի Վանանդ գյուղի բնակիչ Ղուկաս Նուրիջանյանն է, որի գրչին են պատկանում մի շարք աշխատություններ, մասնավորապես աստղագիտության վերաբերյալ գրքեր։ Նա մասնակցել է նաև հայերեն առաջին տպագիր քարտեզի՝ «Համառարած աշխարհացույց»-ի կազմմանը։

Այդ քարտեզը ոչ միայն աշխարհագրական, այլև առաջին հայկական աստղագիտական տպագիր քարտեզն է։ Ղուկաս Վանանդեցին ապրել է ԺԷ դարի վերջերին և ԺԸ դարի առաջին քառորդում։ Այդ ժամանակաշրջանին է պատկանում նաև այժմ գոյություն ունեցող աստղագիտական նորահայտ գործիքը՝ աստրոլյարիան, որն օգտագործվել է աստղագիտական ու գեոդեզիական դիտումների համար։ Աստրոլյարիաները հիմնականում գործածվել են արևելյան աստղագետների և մասնավորապես արաբների կողմից, ավելի ուշ՝ նաև արևմտյան երկրներում։ Ներկա գործիքի գտնվելը ցույց է տալիս, որ աստրոլյարիաներ ունեցել են նաև հայերը։ Ղուկաս Վանանդեցու աստրոլյարիան 120 մմ. տրամագիծ և 5 մմ. հաստություն ունեցող սկավառակաձև մի գործիք է։ Աստրոլյարիայի օգնությամբ հնարավոր է որոշել լուսատուների բարձրությունը, գտնել համաստեղությունները, ինչպես նաև առանձին աստղերի դիրքը գիշերվա տարբեր ժամերին, հեռու տարածություններից չափել առարկաների հեռավորությունն ու բարձրությունը, կենդանաշրջանի վրա որոշել արևի դիրքը տարվա քանակացած օրվա համար, առարկաների ստվերի միջոցով որոշել օրվա ժամը։ Այդ գործիքի օգնությամբ հնարավոր է նաև որոշել ցերեկվա և գիշերվա տևողությունները և այլն։

Ներկա հայկական աստղագիտական գործիքը շատ կարևոր է հայկական մշակույթի և մասնավորապես աստղագիտության տեսակետից։

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԹԻՎ.— Օգոստոսին Մոսկվայում տեղի է ունենալու Աստղագետների միջազգային միության տասներորդ համագումարը։ Համագումարի առթիվ բացվելու է սովետական աստղագիտության պատմությունն ու նվաճումներն արտահայտող մեծ ցուցահանդես։ Ցուցահանդեսի համար երբեմնից ուղարկվել են հայ աստղագիտության պատմության նվիրված նյութեր։ Լուսանկարները պատկերում են դարեր առաջ հայ գիտնականների պատրաստած աստղաբաշխական գործիքները։ Դրանց թվում են Զվարթնոցի տաճարի (Է դար) արևի ժամացույցը։ Ղուկաս Նուրիջանյանի, այդ հին մեծ աստղաբաշխ-գիտնականի վերջերս հայտնաբերված աստրոլյարիան։ Ուղարկվել են նաև Մատենադարանում պահպանվող ԺԴ դարում պատրաստված մագաղաթյա լուսնի ժամացույցը։ Ցուցահանդես են ուղարկված նաև է դարից մինչև այժմ հայ աստղագետների աշխատանքների լուսանկարները։

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԳՆՀԱՏՈՒՄԸ.— Սովետական Միության Գեղարվեստների ակադեմիայի իսկական անդամ է ընտրվել Հայաստանի ժողովրդական քանդակագործ Արա Սարգսյանը, թղթակից անդամ՝ նկարիչ Հովհաննես Զարդարյանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ.— Լիովին ավարտվեցին Ախուրյանի շրջանի ճարտարապետական մեծարժեք հուշարձաններից մեկի՝ Կեչառիսի տաճարների (ԺԱ—ԺԳ դարեր) վերականգնման աշխատանքները, որոնք տևեցին մի քանի տարի։

Նույն հաջողությամբ և խնամքով ավարտվեցին նաև Սանահնի պատմական վանք-համալսարանի տաճարների վերանորոգման աշխատանքները։ Այդ հոյակապ կոթողների խումբը ԺԱ—ԺԳ դարերի հարտարապետության ամենաաչքառու նմուշներից մեկն է, որը հնարավոր անվնաս պահպանվել է ամրոցությամբ։

Ներկայումս խոշոր աշխատանքներ են կատարվում Ախթալայի Ժ դարից մնացած պատմական ամրոցի վերականգնման ուղղությամբ։ Այդ ամրոցը կառուցվել է բագրատի մեծ քարերից։ Իր ժամանակին այն Բագրատունիների ամենահուսալի հենակետերից մեկն է հանդիսացել։

Ճարտարակվում են միջնադարյան հայ մեծագույն օրենսգետ և առակագիր Մխիթար Գոշի անվան հետ կապված նշանավոր ճարտարապետական կառույցների և Նոյեմբերյան շրջանի Մշավանի հուշարձանի վերականգնման աշխատանքները։ Այս տարի հայկական ճարտարապետական գլխավոր հուշարձանների վերականգնման համար կծախսվի մոտավորապես մեկ միլիոն ռուբլի։

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐՏԻԿՅԱՆ

(Առաջնորդական տեղապահ
Աղրբիջանի և Թուրքիստանի թեմի)

ՀՈՎՎԵԿՈՆ ՇՇՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՄԻՆԵՑԻՑ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԵՑԻՑ ԹԵՄԵՐԻՆ

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և ռումինահայ թեմական խորհրդի հրավերով, 1958 թվականի Զատկական տոների առիթով, հովվական այցելությամբ մեկնեցի Ռումինիա և Բուլղարիա։

Մարտի 26-ին ակնածանքով համբուրեցի Վեհափառ Հայրապետի Աջը և իյա հուզումով և հավատով ծնրադրելու Իշման Ս. Սեղանի առաջ, շրթունքներիս սաղմոսը՝ «Տէ՛ր, ուղղեա՛ զգնացս իմ ի ճանապարհս խաղաղութեանն։

Նույն օրը Երևանի երկաթուղային կայարանն էին եկել հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը սարկավագների ընկերակցությամբ, և Տիրամայրը, որը ճանապարհում էր իր կրտսեր որդուն։

Հրաժեշտի հուզիչ ողջագուրումից հետո բարձրացա ինքնաթիռ։ Եվ ահա Երևանի կապույտ երկնքի տակ սավառնակը ուղղվեց դեպի Թբիլիսի, դեպի Մոսկվա։

Հասա Մոսկվա և քարոզեցի հայոց եկեղեցում։ Մոսկվա մնացի մինչև ապրիլի 2-ը և երեկոյան գնացքով մեկնեցի դեպի Բուխարեստ, Կիևի և Կիշինևի ճանապարհով։ Ամեն տեղ ձյուն էր ու սառնամանիք։

Ապրիլի 4-ին, առավոտյան ժամը 9-ին հասա Ցաշ քաղաքը, որտեղ դիմավորելու էին եկել Բուխարեստից թեմական և թաղական խորհուրդների անդամները, գլխավորությամբ արժանապատիվ Տ. Մամբրե քահանա Պիպերյանի։ Ողջագուրումից հետո գնացքը շարժվեց դեպի Բուխարեստ։ Կեսօրից հետո ժամը 5.30-ին հասանք Բուխարեստ։ Կայարան էին եկել Կրոնից նախարարության ներկայացուցիչը, թեմական խորհրդի նախագահ Վ. Դանիելյանը, թաղական խորհրդի նախագահ Վ. Երեցյանը, Հայ մշակույթի տան տնօրեն Ադամյանը, «Սևանա և մեր կյանք» թերթերի ներկայացուցիչներ և շատ ուրիշներ։ Ընդունելության պաշտոնական բարի գալուստի խոսքերից հետո, Կրոնից նախարարության ներկայացուցչի ավտոմեքենայով շարժվեցինք դեպի հայոց եկեղեցի, որտեղ հայ հավատացյալ ժողովուրդը սպասում էր խաղաղական և Հսկումի արարողության սկսվելուն։

Հեռվից, շատ հեռվից լսվում էր հայոց եկեղեցու զանգերի մեղմանուշ ձայնը, որը հավատացյալներին հրավիրում էր հսկումի, աղոթքի...։ Խորապես հուզվեցի։ Կարծես գտնվում էի Ս. Էջմիածնի կամարների տակ, հսկումի պահին, և տեսնում էի Վեհափառ Հայրապետին աղոթելիս...։ Եկեղեցու դասում տեղ գրավեցի։ Հնչում էին հսկումի տրտմաթախիծ մեղեդիները և սաղմոսները։ Հարազատ մթնոլորտում, իմ տանը մեջ էի զգում։ Ժամերգության վախճանին, ժողովրդի հետ միասին ծունկի եկած երգեցինք «Տէր ողորմեա»-ն։ Ապա ասացի իմ առաջին ողջույնի խոսքը.

«Ողջո՞ւյն Ս. Էջմիածնից, Օշականի Մեծ Սրբից, մեր նվիրական բոլոր ուխտավայրերից և մեր Վեհափառ Հայրապետից։ Ողջո՞ւյն Արարատից, Մայր Արաքսից, Սևանից, Արարատյան դաշտից, և բոցավառ ողջո՞ւյն այդ դաշտի վրա ապրող, ստեղծագործող, ժայռերը հացի, կյանքի և լույսի փոխող ձեր հարազատ եղբայրներից և քույրերից։ Ողջո՞ւյն Վեհափառ Հայրապետից՝ Ռումինական Ազգային Եկեղեցու Պետ և Պատրիարք Նորին Սրբություն Հուստինիանին, որի հետ Վեհափառ Հայրապետը կապված է քրիստոնեական եղբայրության անքակտելի սիրով և փոխադարձ հարգանքով։ Սրտագին ողջո՞ւյն նաև հայ ժողովրդից՝ Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկային, որը նոր հորիզոն բաց արեց ռումեն աշխատասեր և խաղաղասեր ժողովրդի պայծառ ապագայի և բարգավաճ. խոստումնալից ներկայի համար։

Թո՛ղ ամրապնդվի ավելի քան երբեք քրիստոնեական եկեղեցիների սերտ համագործակցությունը հանուն ժողովուրդների լարեկամության, ազգերի համերաշխության և աշխարհում խաղաղության հաղթանակի համար։

Թո՛ղ ծլի և ծաղկի երիտասարդ Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի մեջ ապրող հայ ժողովրդի սերը դեպի այս երկիրը։

Հանուն Վեհափառ Հայրապետի օրհնում եմ այս երկրի ժողովուրդը, նրա կառավարությունը, նրա մտավորականությունը և աշխատավոր բոլոր բազուկները։

Թո՛ղ Տերը հովանի լինի այս դարավոր երկրի և ժողովրդի վրա, թո՛ղ Նրա Աջը գորավիգ լինի Ռումեն եկեղեցու վրա, ամեն։»

Ողջույնի այս խոսքերից հետո քարոզեցի Մեծ պահոց խորհրդի վրա։

Ապրիլի 6. Մաղկազարդ և Դոնրացեք։ Ժողովուրդը ուրախության մեջ է։ Կենդանություն է ստացել ամեն ինչ։ Ամեն կողմ տոնական և հանդիսավոր եռուզեռ է տիրում։ Մաղկազարդը մեր ժողովրդի սիրած ազգային-եկեղեցական տոներից մեկն է։

Եկեղեցում ժողովուրդը աղոթում է։ Քարոզում եմ «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս և քարկոծ առնէիր զառաքեալս առ քեզ, քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո՝ զոր սրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, և ո՛չ կամեցարուք» բնաբանով։

Սուրբ պատարագի ավարտին, եկեղեցական թափորով ուղղվում եմ առաջնորդարան և ընդունում բարի գալուստի հուզիչ խոսքեր։ Խանդավառ և սրտագին զրույց է սկսվում Մայր Աթոռի, Վեհափառ Հայրապետի, Մայր Հայրենիքի շուրջ։ Անհուն կարոտ կա նրանց աչքերում դեպի Ս. Էջմիածինը, Մայր Հայրենիքը։ Հարցումներ, պնդհատնում հարցումներ, որոնց պատասխանում եմ սիրով, խանդավառում բոլորին Ս. Էջմիածնի նոր կյանքով, Վեհափառ Հայրապետի ծրագրերով, Հայրենիքի վառ նվաճումներով։

Երեկոյան նախագահում եմ Դոնրացեքի արարողության։ Հավատացյալ ժողովրդի հետ երգում ենք «Հաց մեզ, Տէր, բաց մեզ, Տէր, բաց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ»։

Սկսվում է Ավագ շաբաթը։ Մինչև Ավագ շաբաթշաբթի իրիկունը, տեղական սովորության համաձայն, հավատացյալ ժողովուրդը մաքրում, լվանում է եկեղեցին։ Դպրոցականները արձակուրդի մեջ են։

Ավագ հինգշաբթի։ Հանդիսավոր սուրբ պատարագ։ Հաղորդվում են շատերը։ Երեկոյան նախագահում եմ Ոտնալվայի արարողության, լվանում եմ դպրոցականների ոտքերը, որոնք շապիկ հագած, ահիվ և երկյուղածությամբ բարձրանում են Ս. Սեղան։ Պահը դառնում է ավելի իմաստալից և խորհրդավոր, երբ երեկոյան սկսվում է «Խավարմանց, «վացի» ժամերգությունը։ Այս ժամերգությունը սակայն տեղական ժողովուրդը սովոր է կոչել նաև «Տէր ողորմեայի ժամ»։ Շատ-շատեր եկել են լսելու ժամերգությունը։ Անհամբեր սպասում եմ։ Եվ ահա մթության մեջ լսվում է դպրաց դասի կողմից երգված «Տէր ողորմեա»-ն երգեցողությունը շարունակվում է, որովհետև բառասուն անգամ կրկնվում է։ Եվ պատկերացնում եմ... Հուդան, մարդկային զգացմունքի ամենամեծ խորհրդանշան եղող սուրբ համբույրով մատնելու է գալիս իր Տիրոջը, սակայն ճանապարհին զղջում է, կանգնում, որովհետև երդը ղնալով ուժեղանում է, բարձրանում և մեղմանում ու հանդարտվում, ինչպես Հուդայի ալեկոծ հոգին։ Մտածում եմ, թե ավելի լավ կլինի այս երգը կոչել «Հուդայի ողբ», որովհետև թույլություն է խնդրում Հուդան իր գործած ոչ մարդկային արարքի համար։

Հաղիվ դադարած զղջման և ողբի այդ խորհրդավոր «Տէր ողորմա»-յի վերջին հընչյունները, մթության մեջ, վարագույրի հետևից լսվում է տիկին Փոլատյանի քաղցր ձայնը՝ «Ո՞ւր ես, Մայր իմ, քաղցր և անուշ»։ Երգը ալեկոծում է բոլորի սրտերը։ Երգից հետո քարոզում եմ «Ճշ էր դիշեր» բնաբանով, նկարագրելով բնական դիշերը բնության մեջ և հոգեկան դիշերը՝ Հուդայի սրտի մեջ։ Դիշերը շատ ուշ վերջացավ արարողությունը։ Դրսում անձրև էր։ Բնությունը կարծես արտասվում էր Հուդայի մատնության վրա։

Ավագ ուրբաթ։ Հիսուսի գերեզմանը զարդարված էր ծաղիկներով։ Երեկոյան, եկեղեցու բակում, ժողովրդով, քահանայից զա-

սով և դպրաց դասով, մոմերով, լապտերներով և խալվառներով կատարեցինք թաղման կարգը։

Ավագ շաբաթ։ Երեկոյան ժամը 6-ին սկըսվեց Ճրագալույցի պատարագը։ Պատարագի ընթացքին կարդացի Վեհափառ Հայրապետի զատկական շնորհավորական նամակը, որից հետո քարոզեցի «Զի Ցիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեանս» բնաբանով։

Քրիստոսի հրաշափառ հարության առավոտը արևոտ էր։ Եկեղեցին լիքն էր, բակը նույնպես։ Պատարագեցի և քարոզեցի «Զի նոյնպես։ Պատարագեցի և քարոզեցի «Զի աստ, այլ յարեաւ» բնաբանով։ Վերնատնից շատ ներդաշնակ և մեղմ երգում էր եկեղեցու քառաձայն երգեցիկ խումբը։

Երկուշաբթի, հիշատակ մեռելոց։ Հոգեհանգստյան պատարագից հետո այցելեցի հայոց գերեզմանատունը, որը շատ կոկիկ էր և մաքուր։ Ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ, քահանայից և դպրաց դասի հետ, թեմական և թաղական խորհուրդների անդամների ներկայությամբ, հոգեհանգստյան պաշտոն կատարեցի Վեհափառ Հայրապետի հոր՝ Աբրահամ Պալճյանի շիրմի վրա։

Երեկոյան հրավիրվեցի «Կոմիտաս» երգչախմբի համերգին։ Հաջող ելույթից հետո խումբը իրավունք պիտի ստանար մեկնելու Բուլղարիա։ Այդ իսկ պատճառով համերգին ներկա էր Ազգությունների փոքրամասնությանց ներկայացուցիչը։ Համերգի վերջում, մեր ծանոթության ժամանակ Ազգությունների փոքրամասնությանց ներկայացուցչի հետ, ես ասացի, որ «Անհասարակ մարդիկ, երբ համերգի են գնում, ուրախ տրամադրությամբ են գնում, Որպես Հայրենիքից եկած հայ մարդ, երբ եկա այս գիշեր հայկական համերգին, ավելի ուրախացա, իսկ ուրախությունս կրկնապատկվեց, երբ տեսա, որ կառավարությունը ուղարկել է իր ներկայացուցիչը լսելու, գնահատելու և արժեքավորելու հայ երգը։ Իմ մաղթանքն է, որ հայ երգը այս դարավոր ժողովրդի հողի վրա իր բաժինը բերի այս երկրի ժողովրդի երգի հետ և երկուսը միասին դառնան երջանկության և խաղաղության երգ»։

Ապրիլի 16-ին, չորեքշաբթի օրը, ընկերակցությամբ ռումինահայ թեմական խորհրդի փոխ-նախագահներ Վ. Դանիելյանի և դոկտ. Գ. Բամբուկճյանի և առաջնորդարանի քարտուղար Հ. Գալփաքյանի այցելեցի սովետական դեսպանատուն, որտեղ ընդունվեցինք դեսպան Ե. Եփիշևի կողմից։ Մեկ ժամից ավելի տևող այս ընդունելությունը անգամ չերմ մթնոլորտի մեջ։

Ապրիլի 18-ին, ռումինահայ թեմական խորհրդի փոխ-նախագահ Վ. Դանիելյանի և առաջնորդարանի քարտուղար Հ. Գալփաքյանի ընկերակցությամբ այցելեցի Կոնստանցա քաղաքը։ Կոնստանցան, Բուխարեստից հետո, երկրորդ հայաշատ քաղաքն է, որը գտնվում է Սև ծովի ափին (պատմական անունն է Տոմիս)։

Կայարան դիմավորելու էին եկել տեղի թաղական խորհրդի անդամները, Դավանությանց բաժանմունքի Կոնստանցայի շրջանի ներկայացուցիչը, Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչը և հայ հասարակությունը։

Նույն օրը այցելեցի Կոնստանցայի փոքրամասնությանց մշակույթի տունը, հայկական դպրոցը, Կոնստանցա քաղաքի ժողովրդական խորհուրդը։ Այցելեցի նաև ժողովրդական խորհրդի նախագահ Վասիլե Ռուայտին։ Ամենուրեք գտա չերմ և բարեկամական ընդունելություն։

Դեկերգյոլում այցելեցի կուսանաց վանքը Ս. Աստվածածին անունով։ Եկեղեցին փայտաշեն է, կառուցված 1700 թվականին, բուն ռումինական ոճով (Մարամուրեշի շրջանի ոճով)։ Մայրապետն էր Կիրիլա Ցոզեֆինան։

Կոնստանցայի շրջանի Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու ավագերեցության հրավերով և ավագերեցի և մի խումբ ռումեն քահանաների ընկերակցությամբ այցելեցի նորակառույց երեք եկեղեցիներ և առաջնորդանիստ Մայր Եկեղեցին, որտեղ ընդունվեցի չերմությամբ։

Կիրակի առավոտ պատարագեցի և քարոզեցի հայոց եկեղեցում, բերելով Կոնստանցայի հայ հավատացյալներին Ամենայն Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։ Հավարտ սուրբ պատարագի հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն կատարեցի ապրիլյան բյուրավոր նահատակների հիշատակին։

Նույն օրը, Փոքրամասնությանց տան հանդիսասրահում, հոծ բազմության ներկայությամբ, դասախոսեցի Ս. Էջմիածնի այսօրվա վիճակի, Հայրենիքի վերելքի և ծաղկման մասին, ինչպես նաև Ադրբեջանի և Թուրքեստանի հայ թեմերի մասին։

Թաղական խորհուրդը, ի պատիվ իմ Կոնստանցա այցելության, տեղի «Մոդեռն» ճաշարանում տվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին թեմական խորհրդի ներկայացուցիչները, թաղական խորհրդի անդամները, ազգային փոքրամասնությանց Մշակույթի տան խորհրդի անդամները և տնօրենը, ազգային վարժարանի տնօրենը, Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու Կոնստանցայի շրջանի ավագերեցը, ինչպես նաև Դավանությանց բաժանմունքի ընդհանուր հսկիչը, ընկերակցությամբ Կոնստանցայի շրջանի քարտուղարին։

Հրաժեշտի ժամին Կոնստանցայի կայարանում մեծ բազմություն էր հավաքված ինձ հանապարհելու։ Ներկաների կողմից խոսեց Կոնստանցայի շրջանի Դավանության քարտուղարը և ասաց. «Մենք Ձեզ լսեցինք և գտանք, որ Դուք, ոչ միայն պատրաստված հոգևորական եք, այլև առաջադեմ, դիտակից մարդ, և մեզ պատիվ է Ձեզ ունենալ մեր մեջ մշտապես։ Սա ասում եմ ջերմությամբ և անկեղծությամբ»։

Ապրիլի 22-ին, ընկերակցությամբ թեմական խորհրդի փոխ-նախագահ դոկտ Գ. Բամբուլճյանի, փաստաբան Տիգրան Մինասի և առաջնորդարանի քարտուղար Հ. Գալփաքյանի, ընդունվեցի Ռումեն եկեղեցու Հովվապետ Ամենապատիվ Տ. Հուստինիան Պատրիարքի կողմից։ Համբուրելով Աջը Ամենապատիվ Հուստինիան Պատրիարքի, հաղորդեցի Ամենայն Հայոց Հայրապետի ողջույններն ու բարեմաղթությունները Ռումեն Օրթոդոքս եկեղեցու բարգավաճման, նորին Ամենապատվության արևշատության և Ռումեն երկրի բարօրության համար։ Պատասխան խոսքի ընթացքում Ամենապատիվ Հուստինիան Պատրիարքը համբուրեց ինձ և օրհնեց, բարեմաղթություններ անելով Հայ եկեղեցու բարգավաճման և Վազգեն Ա Կաթողիկոսի արևշատության համար։

Նույն օրը այցելեցի Դավանությանց բաժանմունքը և ջերմությամբ ընդունվեցի ընդհանուր քարտուղար Տ. Տոկարուի կողմից և նրան հաղորդեցի Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնները, միաժամանակ շնորհակալություն հայտնելով այն ջերմ ընդունելության համար, որին արժանացա Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկա ոտք դնելու առաջին իսկ օրից։ Ապա բարեմաղթություններ արեցի Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի ծաղկման և բարգավաճման ու ռումեն ժողովրդի բարօրության և խաղաղ կյանքի համար։

Իր պատասխան խոսքում Տ. Տոկարուն խոսեց ռումինահայ համայնքի հայրենասիրական գործունեության և Ռումեն երկրին նվիրվածության մասին, գոհունակությամբ ավելացնելով, որ հայ համայնքը միշտ Ռումեն կառավարության գուրգուրանքին և հոգածության առարկան է։

Ապրիլի 23-ին, առաջնորդարանի քարտուղար Հ. Գալփաքյանի հետ, այցելեցի Սուչավա։ Կայարան դիմավորելու էին եկել տեղի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Գնել քահանա Մանդալյանը և Դավանությանց բաժանմունքի շրջանային լիազորը։ Այցելեցի Սուչավայի շրջանի հայ եկեղեցիները և Ջամբա վանքը։

Հաջորդ օրը ուխտի գնացի Հաճկատար Ս. Աստվածածին վանքը, որն անցյալում եղել է հայ մշակույթի վառ օջախներից մեկը և որտեղ իր քառասունքն էր անցկացրել Վեհափառ Հայրապետը, աղոթքով և ծոմապահությամբ։ Այդ օրը անձրևում էր։ Իսկական ուխտի օր էր։ Ս. Հաճկատար այցելել և անձրև չտեսնել նշանակում էր, որ ուխտագ կատարված չէ և չի կատարվելու։ Ես ուրախ էի, որ իմ ուխտը հաճելի էր Աստծուն։ Վանքը կառուցված է 1512 թվականին, դեղեցիկ մի բլրի վրա, քաղաքից հեռու։ Հիանալի դիրք ունի։ Վանքի զանգակը բերվել է Տաքեից. կա արձանագրություն զանգակի վրա։

Ուխտավորի բարեպաշտիկ զգացումներով, ձեռքիս մոմ, ուխտավորների բազմության ներկայությամբ նախագահեցի ժամերգության, մինչ Տ. Գնել քահանան, իր հիանալի և անուշ ձայնով երգում էր Կոմիտասի «Տէր ողորմեա»-ն, ուխտավորների իսկ հորինած բառերով այս հրաշագործ սուրբ վանքի մասին.

«Սուրբ Հաճկատար, Մայր ողորմած,
Ողորմութեան դուռն մեզ բաց.
Առողջութիւն տուր հիւանդաց
Եւ օգնութիւն ուխտաւորաց.
Յաջողութիւն գործոց բարեաց,
Ազատութիւն ի թշնամեաց։

Սուրբ Հաճկատար, փոքրիկ բլուր,
Ամենեցուն խնդիրքը տուր։
Սուրբ Հաճկատար, փոքրիկ տաճար,
Ամենեցուն դու կուտաս ճար»։

Երբայ առավոտ, ընկերակցությամբ Տ. Գնել քահանայի, այցելեցի Բոտոշան քաղաքը։ Դիմավորելու էին եկել թաղական խորհրդի անդամները գլխավորությամբ Անտոն Տրանկուի։ Նույն օրը կատարեցինք ժամերգություն և խոսեցի քարոզ։

Հնանալ օրը այցելեցի Բոտոշանի հայոց գերեզմանատունը, որտեղ կային շատ գեղեցիկ մարմարյա կերեզմանաքարեր։ Անցյալում հայաշատ այս քաղաքում ներկայումս շատ քիչ հայեր են ապրում։

Ապրիլի 26-ին այցելեցի Բակրու քաղաքը, ընկերակցությամբ Տ. Գնել քահանայի։

Կիրակի օր պատարագեցի և քարոզեցի հայոց եկեղեցում։ Պատարագին ներկա էին հավատացյալներ և պաշտոնական անձնավորություններ ու ռումին քահանաներ։ Բարի գալուստի ջերմ խոսք արտասանեց թաղական խորհրդի նախագահ փաստաբան Մանեա Մանուկովիչը, որից հետո խոսեց նաև ռումեն եկեղեցու ավագերեց Բեժան և ասաց. «Ուզում եմ այս ասիքից ոգևոր իմ հարգանքը և սիրը հայտնելու Հայ եկեղեցուն, ո-

բովհետև ես գիտեմ Հայ Եկեղեցու պատմությունը և ճանաչում եմ մանավանդ Ձեր Կաթողիկոսին՝ Վազգեն Ա-ին։ Բարի գալուստ եմ մաղթում Ձեզ։ Ձեր մեջ ես տեսնում եմ ոչ միայն Հայոց Եկեղեցու ներկայացուցչին, այլ նաև Հայ և Ռումեն Եկեղեցիների քրիստոնեական եղբայրության և համագործակցության ջատագովին։ Թող իրար կապված լինեն Հայ և Ռումեն Եկեղեցիները։ Դուք Ձեզ հետ այստեղ բերեցիք ոչ միայն արևոտ Հայաստանի ծաղիկների բույրը, այլ նաև Ս. Էջմիածնի հնադարյան Տաճարի խնկի բուրմունքը։ Ապրում ենք ատոմային դարում, և այսօր ավելի քան անցյալի մեջ, մեր Եկեղեցիները պետք է միասին պայքարեն հանուն քրիստոնեական եղբայրակցության և եկեղեցիների ու ժողովուրդների համագործակցության։ Ես վստահ եմ, որ Աստված պիտի օրհնի խաղաղության պաշտպանության նվիրված մեր այս աշխատանքը և մեզ պիտի օգնի, որ մենք խաղաղություն ունենանք, խաղաղություն, որը շատ պետք է մեզ, որպեսզի մեր արտերը առատ հաց ունենան, մեր մարմինները՝ առողջություն և մարդու կյանքը երջանիկ լինի։ Ձեր միջոցով իմ որդիական հարգանքն ու մաղթանքները Վազգեն Ա Կաթողիկոսի արևշատության, Իր Եկեղեցու բարեզարդման և բարեկարգման ու հայ ժողովրդի երջանկության համար։

Հայը Բեժանին պատասխանելով, հայտնեցի իմ էլ համաձայնությունը, ավելացնելով, որ այսօր ավելի քան երբեք մեր ժողովուրդը, Հայրենիքը և Ս. Էջմիածինը կարիք ունեն մնայուն խաղաղության։

Բակրուի հայ համայնքի և թաղական խորհրդի կողմից տրված պաշտոնական ճաշկերույթից հետո, երեկոյան, վերադարձա Բուխարեստ։

Ապրիլի 30-ին, *Բուխարեստի Ստեփան Շահումյանի անվան Մշակույթի տան հանդիսասրահում դասախոսեցի «Ս. Էջմիածինը երեկ և այսօր» թեմայով։*

Մայիսի 1-ին *հրավիրվեցի ներկա լինելու Բուխարեստի աշխատավորների շքերթին։*

Մայիսի 4-ին *պատարագեցի և քարոզեցի Բուխարեստի հայոց եկեղեցում Կանաչ կիրակիի մասին։*

Մայիսի 5-ին *այցելեցի Բուխարեստի հայկական վարժարանը և մանկապարտեզը։ Մանկապարտեզի փոքրիկները կատարեցին արտասանություններ և խմբերգեր։ Վարժարանի տնօրեն Նոնա Գրիգորյանը առաջնորդեց մեզ վարժարանի սրահը, որտեղ հավաքված էին բոլոր աշակերտները, որոնց անունից 7-րդ դասարանի աշակերտուհի Սոնա Գազազյանը բարի գալուստի ջերմ խոսքեր արտասանեց։ Պատասխանելով ասացի.*

«Շատ սիրելի աշակերտներ. ուրախությունը եթե միակողմանի լիներ, ամբողջական չէր լինի։ Ես էլ մեծապես ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ առողջ, մաքուր, կայտառ և խոստումնալից։ Դուք լավ գիտեք, որ ձեր տան մեջ ձեր մայրերը անուշեղեներ միշտ ամենից հետո սեղան են բերում, որպեսզի բոլորի բերանները քաղցրանան և այդ քաղցրությունը մնա։ Այսօր էլ նույնը պատահեց այստեղ։ Ուղիղ մեկ ամիս է, որ ես ձեզ մոտ եմ և դրացի, կամ ինչպես ասում ենք Հայաստանում՝ հարևան, գրեթե կողք-կողքի, սակայն այսօր միայն եկա ձեզ տեսնելու, որպեսզի ձեր մանկական քաղցրությունը, ձեր այս միջավայրի անուշությունը, սուրբ հարկի բույրը երկար մնան իմ մեջ։ Ճակատագիրը մեզ բոլորիս դցեց զանազան երկինքների տակ։ Դուք երջանիկ եք, ապրելով այս ազատ, խաղաղ ու պատմական երկրում։ Պետք է սիրեք այս երկիրը, նրա ժողովրդին, լեզուն, մշակույթը և լավ քաղաքացիներ լինեք։ Դրա հետ միասին դուք պետք է սիրեք ձեր մայրենի քաղցր լեզուն։ Ես ձեր բոլորին հաջողություն եմ ցանկանում և ավելացնում եմ, որ մի գեղեցիկ օր, շատ գեղեցիկ մի օր, երբ վերադառնաք Հայրենիք, առանց ձեր դասարանը կրկնելու սովորեք հայրենի դպրոցների մեջ։ Ապրեք և շատ ապրեք»։

Ուսուցչանոցում հյուրասիրվեցինք տնօրենության և ուսուցչական կազմի կողմից։

Շուրջ մեկ ամիս մնալով ռումինահայ գաղութում, մայիսի 8-ին, հրաժեշտ առի գեղեցիկ Բուխարեստի մեր հայրենասեր և ազնիվ հայ գաղութից լավագույն և անմոռանալի տպավորություններով և հինգշաբթի օրը օդանավով մեկնեցի դեպի Սոֆիա, հովվական այցելություն տալու նաև բուլղարահայ թեմին։

(Շարունակելի)

Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ՊՈՏՈՒՐՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐԺԱՊԵՏ

(Հուշեր)

Վեց դար սուաջ, արևմտահայ ամենեն նշանավոր բանաստեղծը՝ Դանիել Վարուժան Բելճիքայի Գան քաղաքին մեջ կհետևեր քաղաքագիտության և տնտեսագիտության դասընթացքներուն։

Այս տարի, երբ Բելճիքայի մայրաքաղաք Բրյուսելի մեջ համաշխարհային նշանավոր ցուցահանդեսը տեղի կունենա, Ֆրանսայի մեր հայրենակիցները հրաշալի գաղափար ունեցած են Գանի համալսարանին մեջ զետեղելու Վարուժանի օրմաքանդակը։

57 տարի առաջ, 1902-ի աշնանը, Վենետիկի Մուրատ Ռափայելյան վարժարանի աշակերտներու ամառանոցին՝ Ակոլո գյուղաքաղաքին մեջ ճանչցած եմ Դանիելը։ Այդ տարին օծումը կատարվեցավ Ս. Խաչ մատուռին, որ հայկական ճարտարապետական ոճով կրարձրանա աշակերտներու բնակարանին մոտիկ։ Ս. Ղազարի վանքեն Իգնատիոս արքեպիսկոպոս Կյուրեղյան Ս. Խաչի տոնին օծումը կատարեց և այդ առթիվ քաղաքի հյուրերուն, վարժարանի աշակերտներուն հանդիսավոր ճաշ մը տրվեցավ, ուր բռնախոսներ պանծացուցին հայկական ճարտարապետությունը։

Հանկարծ մեզի անծանոթ երիտասարդ մը հրաշալի առոգանությամբ ճառ մը կարդաց։ Կարծեցինք, թե Ս. Ղազարի միաբան Հ. Աբրիստակես Գասպանտիլյան վարդապետին՝ Ադա Նեգրիի թարգմանչին շեշտն էր, որ բոլորիս դեմքերը իրեն դարձուց։

Վարուժան երկու օր առաջ հասած էր Կոստանդնուպոլսեն, գոց նամակով մը, որուն մեջ գրված էր՝ «Նոր Մկրտիչ Պեշիկթաշլյան մը կղրկեմ, լավ նայեցեք»։

Դանիել Չպուքչյարյան— ա՛ս էր իսկական անունը— ծնած էր 1884-ին Սեբաստիո մոտ Բրգնիք գյուղին մեջ, ուր, իր բառերով, աճած էր մանկությունը տուռենիներու տխուր հովանիներուն տակ՝ երազկոտ, կամ գետեզերքներուն վրա՝ բադերուն քար նետելով՝ անառակորեն։ Դեռ հայրիկ թիթեռնիկներ որսալու հասակիս մեջ՝ հայրս պանդխտած էր Պոլիս, իսկ մայրս ձմեռնային երկար իրիկունները թոնրատունը նստած՝ երևակայությունս օրորած էր ենիչերիներու և գայլերու պատմություններովս։

Երբ գյուղին դպրոցին մեջ հազիվ սկսած էր ժամագիրքը կարդալ, Դանիելը Կոստանդնուպոլիս տարած են 1896-ի կոտորածի տարին, ուր բանտին մեջ կգտնե իր հայրը՝ այս տխուր օրերուն ստոր կերպով ամբաստանված։

Դանիել Կոստանդնուպոլսո մեջ երկու տարի Սագրզ-Աղաճի Մխիթարյանց դպրոցը ուսած է։ Անկե կանցնի Գատրգյուղի Մխիթարյան վարժարանը, ուր կմնա չորս տարի։ Արձակուրդները կանցնե հորը քով, Խավյար խանի մեջ, հայ պանդուխտներու հառաչներուն և վերքերուն մոտիկ։

1903-ին, իրիկուն մը Ս. Ղազարի վանքին աբբահայրը զիս կանչեց և ըսավ.

— Այսօր Առաջիկայից ժողովը որոշեց քեզ Վենետիկի Մուրատ Ռափայելյան վարժարանը ղրկել դասատուի և հսկողի պաշտոնով։

Արտասվելով խնդրեցի, որ զիս չբաժնեն վանքին գրադարաններեն և ձեռագիրներեն։

— Մի՛ լար, երբ քեզ քանի մը տարի ետք կանչենք, այն ատեն ավելի՛ պիտի լաս,— ըսավ աբբահայրը։

Մուրատ Ռափայելյան վարժարանին աշակերտներուն մեջ ամենեն առաջ Դանիելը աչքիս դարկավ. ան իսկույն մտերմացավ հետս, սենյակս եկավ, գրքերս աչքե անցուց, քանի մը հատոր ձեռքն առած՝ խնդրեց, որ քանի մը օրվան համար իր մոտ մնան։

Երկրորդ օրը Դանիել ինքնագիր ոտանավոր մը բերավ և կարդաց. վերնագիրն էր «Հայր Ալիշանի շիրմին առջև»։

Ընթերցումեն ետք բերթվածը ձեռքս առի և ըսի.

— Թող հիմա մոտս մնա։

Եվ հաջորդ օրը Ս. Ղազար տարի և «Բազմավեպ»-ի խմբագիր Հ. Սիմոն Երեմյանին տվի որ կարդա։ Դանիելի առաջին գրվածքն էր, որ Զպուռքյարյան մականունով լույս տեսավ «Բազմավեպ»-ի մեջ։

Դանիել քաջալերված, սկսավ ամեն օր մեկ-մեկ ոտանավոր գրել. երբ անոնց թիվը 30-ի հասավ, գանոնք Հ. Երեմյանին տարի խնդրելով, որ «Ararատեան» վերնագրով լույս ընծայեն։ Այս հատորիկն ալ լույս տեսավ Զպուռքյարյան մականունով։

Քիչ վերջ քանի մը սիրուն ոտանավորներ ալ պր. Արշակ Զոպանյանին ղրկեցի, «Անահիտ»-ի մեջ լույս ընծայելու համար։ Զոպանյան թե՛ իր թերթին մեջ և թե՛ առանձին նամակով մը երկինք բարձրացուց Դանիել Վարուժանը։

***

1904-ի աշնան, ըստ սովորության վեց շաբաթվան համար, Ազգ. ամառանոցը գացի Մուրատ Ռափայելյան վարժարանի աշակերտներուն հետ։ Վարուժանը մի՛շտ դպրոցի աշակերտներով շրջապատված կըլլար և կամ գրագետի մը գիրքը կարդալով կանցներ իր ժամերը։

Օր մը ըսի իրեն.

— Դանիել, եկո՛ւր դպրոցական ձեռագիր թերթ մը հրատարակենք։

— Ի՞նչ անունով.— հարցուց։

— Անունը դուն դի՛ր։

— Թող «Նոր» ըլլա, դեռ չհասունցած ցորեն կնշանակե։

Դանիել ամեն թիվի մեջ գեղեցիկ ոտանավոր մը կստորագրեր։ Այդ ոտանավորները դրեթե ամենքն ալ «Հացին երգը» հատորին մեջ լույս տեսան։

1904-ի ձմեռը Դանիել 5—6 օր իր խցիկին մեջ հիվանդ պառկեցավ։ Ամեն օր երկու անգամ իրեն կայցելեի, գրպաններս խնձոր ու նարինջ լեցուցած։

— Վարդապե՛տ, դի՛ր բեր,— կթախանձեր։

Դանիել 1906-ին Մուրատ Ռափայելյան վարժարանին կողմե Բելճիքայի Գան քաղաքին համալսարանը ղրկվեցավ։

Առաջին նամակին մեջ գրեց. «Չեմ մոռնար սիրուն Վենետիկի, Մուրատ Ռափայելյան վարժարանի մեջ անցուցած չորս տարիներուն կյանքս, չեմ մոռնար, երբ հիվանդ էի և դուն ինձի տեսության կուգայիր և նորավեպերդ կկարդայիր»։

Թեոդիկը խնդրած էր ինձմե, որ Վարուժանը ինքնակենսագրությունը, լուսանկարը և քանի մը ոտանավորներ ղրկե «Ամենուն տարեցույցը»-ին համար։ Դանիել խնդիրքս կատարեց։

1907-ի աշնան Դանիել Գանեն Վենետիկ եկավ՝ արձակուրդը հոն անցնելու համար։

— Դանիել,— ըսի օր մը,— սա քու Գան կամ չկան համալսարանեն ի՞նչ պիտի ելլես։

— Քաղաքագետ և տնտեսագետ,— հդավ իր կտրուկ պատասխանը։

— Ի՞նչ պիտի ըլլա Դանիել գրագետը։

— Հոգ մի՛ ըներ, ան ալ կըլլա,— պատասխանեց։

***

1908-ի ապրիլին վերջերը գրեցի Դանիելին, թե «քիչ ատենեն Վահրամ Փափազյանի հետ Պոլիս կմեկնիմ, անկից Պարտիզակ անցնելու համար»։

Իսկույն ընդունեցի Դանիելեն հասած սա տողերը. «Սիրելի՛ Հ. Մկրտիչ, Պոլիս հասնելուդ՝ առաջին գործդ ըլլա՝ հայրս գտնել խավյար խանին մէջ և տեղեկութիւններ տալ իմ մասին. թող հոգ չընե, շուտով կանցնին տարիները, զիրար կգտնենք ու հանգիստ կապրինք մեր Բրգնիքին մէջ»։

Կոստանդնուպոլիս հասնելուս երկրորդ օրը գտա Վարուժանի բարի հայրը, բարի լուրեր տվի իր հանճարեղ զավկին մասին։

— Մեծ մարդ պիտի ըլլա Դանիել,— ըսի,— դլուգետ, բանաստեղծ, քաղաքագետ, տնտեսագետ. կրնաս հպարտ ըլլալ այդպիսի զավկի մը հայրն ըլլալուդ։

— Վարդապե՛տ,— ըսավ,— բանաստեղծ ըլլալը փոր լի կշտացներ. փոքրիկները հա՛ց կուզեն. հա՛ց։

1909 գրոստոսին Պարտիզակեն Վենետիկ անցա, իսկ Վարուժան Գանեն վերջնական Կոստանդնուպոլիս կդառնա։

Վարուժանը խումբ մը դրագետներու հետ Պարտիզակ կայցելէ, նախ մայրս կփնտռե, նդրայրներուս կհանդիպի, Ս. Սինաս կբարձրանա և Դեղնտան աղբյուրին մասին ոտանավոր մը կգրե։

Խնդրանքիս վրա Աղանայի յարդեն մնացած սիրերուն ի նպաստ «բաւարակելիք «Գեղունիս»-ի համար ոտանավոր մը կդրկե նոր լուսանկարով մը և երբ Բրգնիք կդառնա ու կամուսնանա՝ նամակ կգրե. «Հ. Պոտուրյան, քեզ պիտի չմոռնամ։ Լուսանկարդ դրասեղանիս գարդն է, միշտ քեզի՛ կնայիմ։ Ես ապագայապաշտ չե՛մ, ընդհակառակն անցելապաշտ եմ. և ի հեճուկս ապագայապաշտության՝ անցյալապաշտ դարոցը պիտի հիմնեմ»։

Դանիել Բրգնիքեն ամեն օր Սեբաստիա կանցնի և Արամյան վարժարանին մէջ ուսուցչություն կընե։ Կամուսանա իր սիրած հայուհիին հետ և հայր կըլլա Վարուժանին ու Արմինեին։

Երկրորդ տարին կանցնի Եվդոկիա, դարձյալ ուսուցչության պաշտոնով։

1912-ին Կոստանդնուպոլիս կվերադառնա և Բերայի վարժարանին տեսչությունը կվարե։

Ես այդ ատեն Հունդարիո Եղիսաբեթուպոլիս հայաքաղաքն էի։ 1914-ին Հ. Ճ. Սիրունիի հետ «Նավասարդ» տարեգիրքը կխմբագրե և հատ մը նվեր կդրկե ինձ։

Վարուժանի լույս ընծայած գրքերն են. 1903-ին, Ս. Ղազարի տպարանեն, «Սարսուռներ»-ը, 1910-ին՝ «Ցեղին սիրտը», հետո «Հեթանոս երգեր»-ը, իսկ նահատակվելեն ետք՝ «Հացին երգը»։

Այս գրքերն են, որ Վարուժանը անմահ պիտի պահեն։

Սովետական Հայաստանի մէջ Դանիել Վարուժանի քերթվածները հազարավոր օրինակներով լույս տեսած են։

Դանիե՛լն ալ, Ռ. Սեակի, Գ. Զոհրապի հետ 1915-ին դեպի արաբական ավազուտները քշվեցավ և հո՛ն նահատակվեցավ։

Սպանիո երիտասարդ Ալֆոնս թագավորը անձամբ դիմած է հայակեր Թալեաղին՝ որպեսզի Դանիել Վարուժանի և Ռուբեն Սեակի կյանքերը իրե՛ն նվիրվին։ Գարշելի դահիճը կգրե Ալֆոնսին, որ լի կրնար դինքը գոհացնել, որովհետև այդ երկուքն ալ փախած, Ռուսաստան անցած են։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

(Ինոցենտ, Գեղազույշ
Հոգևոր հարեղի անդամ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ԺԳ--ԺԴ ԴԱՐԵՐՈՒՄ*

Այժմվա Չիվիտա Վեկկիա (հնում Ոստիա) Հռոմի նավահանգստում, ըստ Ալիշանի, «ասպնջական լինել հայոց վաճառականաց և ուխտաւորաց, որոց երաշխաւորէ և եկեղեցի նոցին յիշեալ ի կէս ԺԴ դարու (1350 թ.) յանուն Ս. Հոգւոյ, որ նշանակէ զհոգեւոր կամ զկացուրդ նոցին»[28], Իսկ ինչ վերաբերում է Սալեռնո քաղաքին, ապա «Ողբերգութիւն Գրիգորի Նարեկացւոյ» ձեռագրի այս քաղաքում գրված հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «Գրեցաւ ի թուիս Հայոց ՉԼԶ (1327)։ ...Յիշեսցուք և զպատուելի հայրս մեր զներսէս զառաջնորդ սրբոյ անապատիս Մկրտչիս Քրիստոսի, որ ի Սալեռնոն»[29], Մյուս կողմից, ըստ Ալիշանի, հայերն այս քաղաքում դեռ 1283 թվականից ունեցել են իրենց եկեղեցին։ Ուրեմն հետագա 40 տարիներին նրանք ունենում են նաև իրենց վանքը (անապատը) իր առաջնորդով։

Փերուժ կամ Փերուջիա քաղաքում 1279 թվականից առաջ գոյություն է ունեցել հայոց հոգեւոր։ Հոգեւորը Կիլիկիայի Լևոն Գ թագավորից նվեր է ստացել մի ժամագիրք հետևյալ հիշատակարանով. «Լևոն շնորհօքն Աստուծոյ և օգնականութեամբ նորին թագաւոր ամենայն հայոց, որդի հանգուցեալ արքային Հեթմոյ, վասն խընդրոյ Յովհաննէսի քահանայի պարգևեցաք զժամագիրքս զայս իւր եկեղեցւոյն Ս. Մատթէոսի աւետարանչի, որ է ի Փերուժ քաղաք՝ ի յիշատակ մեր և նախնեաց մերոց, ի թուականութեանս Հայոց ԷՃԻԸ (728+551=1279)»[30]։ Արքայական այս ձեռագիրը, գրում է Ուղուրլյանը,— «կպահուի այժմ ի հոգեւոր ազգին ի Հռոմ»։ Ավելի ուշ Փերուժ քաղաքում ընդօրինակվել է նաև «Գործք Առաքելոց»-ը, որի հիշատակարանում ասված է. «...Արդ գրեցաւ Գործք Առաքելոցն և Կաթողիկէք ձեռամբ յոգնամեղ Դաւթի ի թուիս ՉԾ (750+551=1301) ի մայրաքաղաքիս Փէրուժ կոչեցեալ...»[31]

---

* Շարունակված ամսագրի 1958 թվականի Մ է-ից։

28 Լ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 454։

29 Տե՛ս Լ. Խաչիկյան, «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հատ. Ա, հիշատակարան Մ 256։

30 Մեսրոպ վրդ. Ուղուրլյան, «Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոց հայոց», էջ 234։

31 Tisserant Eugenius, «Bybliothecae apostolicae Vaticane; Codices armeni bybliothecae Vaticane Romae, MCMXXII, էջ 240 (ամբողջ հրատարակությունը լուսանկարված թերթերից է բաղկացած)։

Սիսնա քաղաքում հայերն ունեցել են, ըստ Ալիշանի, 1270 թվականին Ս. Աստվածածին (Ս. Խաչի և Գերեզմանի) եկեղեցին. իսկ Մեսրոպ վարդապետ Ուղուրլյանը, նույն քաղաքի արքունի դիվանից քաղելով, խոսում է Բարսեղյան հայ եղբարց և մի շարք այլ պաշտոնական և անհատական նվիրատվությունների մասին, սկսած 1263 թվականից։ Հիշվում են նաև անուն-ազգանուններով հայեր, որպես եկեղեցու երգիչ, հոգաբարձու, վերակացու, մատակարար, մեծավոր ու եկեղեցու երիցագույն և այլն[32]։

Ինչ վերաբերում է Հռոմին, Ալիշանը բավականանում է հիշելով միայն քաղաքի հայկական եկեղեցիները մինչև 1240 թվականը։ Ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում մեզ Ուղուրլյանը։ Հռոմում եղել է «Կիլիկիոյ մենաստան» 1869 թվականին կատարված պեղումները երևան են հանել հայագիր դամբանագրեր, որոնցից մեկը հետևյալն է. «Ի թուին Հայոց ՉԾԴ (754+551=1305) ի մայիսի է (?) կանգնեցաւ նշան սուրբ խաչիս յանուն Վարդան քահանայի ճգնող կրօնաւորի, որ փոխեցաւ ի Քրիստոս յապրիլի ԺԱ (11), որ օրն է Յառաջադարձ. և իւր եղբայրն Գրիգոր միայնակեաց որ է մաքրող և լուսաբար Գլխատման Սրբոյն Առաքելոյն Պօղոսի, կանգնեաց զսուրբ խաչս յարեխաս իւրեանց, և այլ եղբարքն» և այլն[33]։ Հռոմում եղել է նաև «Դելլի Արմենիա» փողոցը։ Հռոմում գրված են երկու Ավետարաններ 1254-ին և 1310-ին։

Իտալահայ գաղութը որպես համայնք կազմակերպվել է հայկական եկեղեցիների շուրջը, ինչպես իտալական քաղաքների համայնքները իրենց եկեղեցիների շուրջը՝ Կիլիկիայում։ Իտալիայում հայկական եկեղեցիների կառուցումը թույլատրվում էր ավյալ քաղաքի կամ քաղաք-պետությունների իշխանությանց կողմից, ինչպես կաթոլիկ եկեղեցիներ կառուցվում էին հայկական Կիլիկիայում։ Կաթոլիկ եկեղեցին տիրապետող դիրք ունենալով ամբողջ Կիլիկիայում, այնքան էլ հաշտ աչքով չէր կարող նայել հայկական եկեղեցիների գոյությանը Կիլիկիայում, եթե այդ իրավունքը վերապահված չլիներ քաղաքական իշխանությանց։ Իտալիայի հայկական համայնքները հավանաբար միացված են եղել ընդհանուր թեմի մեջ «եպիսկոպոս Իտալիոյ» տիտղոսը կրող Թումաս եպիսկոպոսի և այլ եպիսկոպոսների հոգևոր իշխանության տակ, որոնցից շորսն իրենց անուններով հիշվեցին վերևում։

Հայկական գաղութների հաստատումը Իտալիայում բացատրվում է տնտեսական պատճառներով։ Իտալիայի երեք տասնյակից ավելի քաղաքների հայկական եկեղեցիների կառուցման թվականները (ԺԳ դարի երկրորդ կեսից մինչև ԺԴ դարի երկրորդ կեսը) համընկնում են Կիլիկյան Հայկական պետության տնտեսական բարգավաճման ծաղկյալ ժամանակաշրջանի հետ, երբ Կիլիկիայի հայ առևտրականները հաստատվել էին Իտալիայում։ Կար, սակայն, մի այլ կարևոր պարագա ևս, որն այսօր էլ միջազգային հարաբերություններում փոխադարձության (réciprocité) օրենք կամ սովորույթ անունն է կրում։ Հայտնի է, որ իտալական բազմաթիվ քաղաքների Կիլիկիայում հաստատված գաղութների քաղաքացիական ու տնտեսական իրավունքներն ու դարտականությունները ճշտորոշվել են Կիլիկիայի հայոց թագավորների հրովարտակներով տրված արտոնություններով։ Վենետիկի և Ջենովայի կիլիկյան գաղութները մեծ առանձնաշնորհումներ էին վայելում Կիլիկիայում։ Հիշատակվում են նաև իտալական Պիզա, Ֆլորենցիա, Պլյաչենցիա և այլ քաղաքների անունները, որոնք լայն չափով արտոնություններից լին օգտվել Հայկական Կիլիկիայում։ Իրենց հերթին հայկական համայնքները Իտալիայի քաղաքներում վայելում էին, փոխադարձության կարգով, տնտեսական, քաղաքական ու քաղաքացիական առանձնաշնորհումներ և լայն իրավունքներ։

Հայտնի է, որ իտալական քաղաքներում գործում էին նաև առևտրական ընկերություններ։ Այսպես՝ միայն Ֆլորենցիա քաղաքի երկու խոշոր առևտրական ընկերություններ՝ Բարդի և Պերուզզի անունով, Հայկական Կիլիկիայում և շրջակա երկրներում կատարում էին առևտրական խոշոր գործառնություններ։ Ալիշանը խոսում է Իտալիայի Պլյաչենտիա քաղաքի առևտրական մի ընկերության մասին, որը կոչվում էր «Պլյանչենտիայի Բագարոտյան ընկերություն» (Societas Bagarotorum de Placentia)[34]։

Իտալական քաղաքները Կիլիկիայի նաև հայ արհեստավորների համար ներկայացնում էին տնտեսական շահագրգռություն։ Այսպես, հայտնի էր կիլիկյան այծի զրփսին (սուսը), որից պատրաստված հյուսվածեղենները ի պատվի էին Իտալիայի և այլ երկրների շուկաներում։ Կիլիկյան հա-

[32] Մեսրոպ վրդ. Ուղուրլյան. Հիշված աշխատությունը, էջ 247—249։

[33] Նույն տեղում, էջ 222։

[34] Հ. Ղ. Ալիշան. «Սիսուան», էջ 363։

յոց թագավորների հրովարտակներում նշված արտածման ենթակա ընտանի կենդանիների և թռչունների շարքում երբեք չենք հանդիպում կիլիկյան այծին, ուստի պիտի ենթադրել, որ նրա արտածումը արգելված էր, ըստ երևույթին պահելու համար այս կենդանու բացառիկ օգտակարությունը միայն Կիլիկիայի համար։ Ջենովացի և վենետիկցի ցփսիագործներ կային Կիլիկիայում, որոնք ունեին այս երկրում նաև ցփսի մշակող և հյուսող իրենց արհեստանոցները։ Մեզ հավանական է թվում, որ հայ ցփսիագործներ էլ տեղավորված լինեին Իտալիայի քաղաքներում։ Նույնը պիտի ասել գուցե նաև այդ ժամանակներում ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքում հռչակված հայկական կապերտների պատրաստության մասին, որոնց հիշատակությունը մեծ գովեստով անում է ԺԳ դարի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոն։

Բոլոր այս հավանական ենթադրությունները հիմնավորող պատմական տվյալները պակասում են դժբախտաբար, քանի դեռ հիմնովին չեն ուսումնասիրված իտալական այդ քաղաքների հին դիվանները։ Դրանք կարող էին պահպանված լինել նաև, օրինակ, Սիսի Կիլիկյան պետական կամ արքայական դիվաններում։ Վ. Լանգլուան, սակայն, երկար պրպտումներից և անհնապես անցյալ դարի կեսերին Սիս գնալով, տեղում խուզարկություններ կատարելուց հետո, եկել է այն եզրակացության, որ Կիլիկյան Հայկական պետության, ինչպես և հայոց թագավորների Սիսի դիվանները կորած կամ այրված են։ Համենայն դեպս, մինչև օրս այդ դիվաններին վերաբերող ո՛չ մի փաստաթուղթ չէ հայտնաբերված։ Այդ պատմական տվյալները կարող էին տեղ գտնել նաև, օրինակ, Կիլիկյան հայոց թագավորների հրովարտակներում՝ փոխադարձության կարգով Կիլիկյան հայ հպատակներին Իտալիայում տրվելիք կամ տրված արտոնություններին վերաբերյալ։

Իտալիայի հայ գաղութների ներքին կազմակերպության մասին ոչինչ չգիտենք։ Գիտենք, օրինակ, թե նրա՞նք էլ համայնք (communa) են եղել, և թե ունեցե՞լ են, և ո՞րչափով, իրենց ներքին ինքնավարությունը, ունեցե՞լ են իրենց սեփական դատարանները, առևտրական սենյակները (logia), նավարեկության և անկտակ մահացման դեպքերում օգտվե՞լ են այն արտոնություններից, որոնցից օգտվում էին, օրինակ, իտալացիք Հայկական Կիլիկիայում։ Կիլիկյան Հայկական պետությունը ունեցած պետք է լինի իր կոնսուլները Իտալիայում, ինչպես այդպիսիք ունեին իտալական քաղաքները Կիլիկիայում։ Այդ կոնսուլները հանդես էին գալիս իրենց հպատակների տնտեսական և քաղաքական շահերի պաշտպանությամբ։ Հիշատակություններ կան, որ Լևոն Բ-ից սկսած Կիլիկյան թագավորները իրենց դեսպաններն են առաքել դեպի իտալական քաղաք ռեսպուբլիկաները, Հռոմի պապին, դեպի Իսպանիա, Սիցիլիա, նույնիսկ մինչև հեռավոր Ֆլանդրիա (Բրյուգ)։ Սակայն հայոց թագավորների այս դեսպանները, ըստ երևույթին, միայն ժամանակ առ ժամանակ և պետական որոշ կոնկրետ ու կարևոր հարցերի հարակցությամբ են գործուղվել և չեն կատարել կոնսուլի մնայուն պաշտոն։

Ի՞նչ եղան սակայն իտալական այդ քաղաքների հայկական գաղութները ԺԴ դարից հետո, երբ ԺԵ դարի շեմքին, ըստ Մաղաքիա դպրի տարեգրությանց, «Յամի 1402. ի սոյն ժամանակ, յետ բառնալոյ թագաւորութեան Հայոց ի Սսոյ, ժողովեցան թագաւորազունք և իշխանք ի բազումք ի ժողովրդոց, մտեալ նա, դնացին ի Ֆռանգաստան»[35], Ուրեմն, եթե այս տարեգրությունը ճիշտ է, Իտալիան[36] ԺԵ դարի սկզբին մի նոր և զրադում ի ժողովրդոց գաղթականություն է ընդունում Կիլիկիայից։ Սակայն ԺԵ դարի վերջերին և մանավանդ ԺԶ դարում Իտալիայի հարիվ մի քանի քաղաքներում են հիշվում դեռ գոյություն ունեցող հայ եկեղեցիներ և հայ մարդիկ, վերջին մնացորդները ԺԳ—ԺԴ դարերի Իտալիայում ապրող հայ բազմությունների։

ԺԶ դարից մի նոր հայկական գաղթականական հոսանք է դալիս Իտալիա բոլորովին այլ վայրերից՝ Վանից, Կեսարիայից, Նոր-Ջուղայից, Զմյուռնիայից և Արևելքի այլ առևտրական կենտրոններից։ Հայկական այս նոր գաղթականությունների մասին է դլխավորապես պատմում Մեսրոպ վարդապետ Ուղուրլյանը։ Բայց սա էլ միայն աննշան հետքերն է դտնում երբեմն մեծ ու հարուստ իտալահայ գաղութների։ Նույն տխուր ճակատագիրն է ունեցել, ձուլման միջոցով, նաև Լեհաստանի շուրջ 200 000 հայությունը։

[35] Լ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 153։

[36] Վերոհիշյալ հիշատակարանում «Ֆռանգաստան» անվան տակ պետք է հասկանալ նաև Իտալիան։ Վերևում մենք տեսանք, որ մի դրիչ Իտալիայի Սալեռնո քաղաքը «ի յայնմարդս Ֆռանգաստան» էր տեղորոշում։

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների դոկտոր, հնագետ)

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ

(Պատմա-ճարտարապետական ակնարկ)

Սանահնի հռչակավոր մենաստանը գտնվում է Սովետական Հայաստանի Ալավերդու շրջանի Սանահին գյուղում[1], պատմական Լոռի գնդատեսիլ դավառում։

Առանձնապես հետաքրքիր է Սանահնի դիրքը։ Տարածված լինելով անտառապատ լեռների հյուսիսային ստորոտներում, առջևում ունենալով Աստվածածնա և Դեբեդի անդնդախոր ձորերի անառիկ, բարձրաբերձ քարափներով եզերվող ընդարձակ սարահարթը, նա մի հիասքանչ տեսարան է ներկայացնում։

Այդ սարահարթի վրա դարեան և ամռան ամիսներին փարթամորեն աճած հացահատիկի արտերը և այլպան հարուստ բուսականությունը անթիվ ու անհամար երփներանգ և անուշաբույր ծաղիկներով, առավել գեղեցիկ ու հետաքրքիր են դարձնում ընդհանուր տեսարանը։ Իսկ գյուղի սպիտակ պատերով ու կարմիր կղմինդրածածկ տանիքներով երկհարկանի նորակառույց գեղեցիկ տները, իրենց պտղատու ծառերի ընդարձակ այգիներով ու կանաչազարդ պարտեզներով, որոնց միջից վեր են սլանում վանքի սրածայր բարձր գմբեթները, լրացնում են բնական այդ հիասքանչ տեսարանը։

Սանահնի վանքը հանդիսանում է պատմական Հայաստանի հոգևոր ամենախոշոր և կրոնա-լուսավորական նշանավոր կենտրոններից մեկը։ Նրա շատ մեծ խումբ կազմող հուշարձանները հայ արվեստի և ճարտարապետության առաջնակարգ կոթողներից են, իսկ հարուստ վիմագրությունը կարևոր նյութ է հայ և հարևան ժողովուրդների պատմագրության համար։

Թե ե՞րբ է հիմնադրվել այդ նշանավոր մենաստանը, ստույգ հայտնի չէ։ Նրա մասին ամենահին տեղեկությունները վերաբերում են Ժ դարի առաջին կեսին։ Հայ պատմիչների վկայությամբ, մի խումբ հայ կրոնավորներ, Քաղկեդոնի ժողովի պատճառով, հալածվելով հույների Ռոմանոս կայսրից, փախչում են Հունաստանից և գալով Հայաստան, Աբմբատ Ա Բագրատունու որդի Աբաս Ա-ի ժամանակ (928—953 թ. թ.) կառուցում են մի քանի վանքեր և Ս. Աստվածածնի անվան եկեղեցին Սանահնի վանքում, ինչպես պատմում է Կիրակոս վարդապետ Գանձակեցին. «... Ռոմանոս... հալածեաց զամենայն կրոնաւորս և զքահանայս Հայոց, որք էին յաշխարհէն Հոռոմոց, զի ոչ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի. և եկեալ յաշխարհս Հայոց յաւուրս Աբասայ՝ որդւոյ Սմբատայ, հաստատեցին վանորայս զկամբրջաձոր և զկապոյտ բարն ի դաւառին Արշարու-

[1] Սանահին գյուղը այժմ կազմում է Ալավերդի քաղաքի մի թաղամասը։

նեաց, և զհռչականուն Հոռոմոսին կոչեցյալ վանք. և զԴարեվանք ի Շիրակ գաւառին. շինեցին և եկեղեցի մի յանուն ամենասուրբ Աստուածածնին ի վանքն՝ որ կոչի Սանահին. ի սահմանս Լոռէ քաղաքին...»[2]։

Այդ մասին հաղորդում է նաև նույն ժամանակի պատմիչ Վարդան վարդապետ Բարձրբերդցին՝։

Կիրակոս Գանձակեցու վերը մեջբերված վկայությունից պարզ երևում է, որ մինչև Աբաս Ա Բագրատունու թագավորությունը, այսինքն մինչև Հունաստանից հայ կրոնավորների Հայաստան գալը, գոյություն ուներ Սանահնի վանքը, որովհետև, ինչպես Գանձակեցին ինքն է ասում, «շինեցին և եկեղեցի մի յանուն ամենասուրբ Աստուածածնին ի վանքն՝ որ կոչի Սանահին»։

Պատմական որոշ տեղեկություններից հավանական է դառնում, որ արաբական արշավանքների հետևանքով, ինչպես մի շարք այլ մենաստաններ, Սանահնի վանքն էլ գտնվելիս է եղել լքված վիճակում, և որ Հունաստանից եկած կրոնավորները կառուցելով Աստվածածնի անվան եկեղեցին, միաժամանակ վերահաստատել են վանական միաբանություն։

Բացի վերը նշվածից, հնագիտական ուսումնասիրությունները նույնպես հաստատում են, որ Սանահնի վանքում առանձին շենքեր պետք է կառուցված լինեն ավելի վաղ, քան Հունաստանից փախած կրոնավորների կողմից կառուցված Ս. Աստվածածնի անվան եկեղեցին։

Արաբների տիրապետության անկումից հետո, երբ Հայաստանում հաստատվեց Բագրատունիների թագավորությունը, Աշոտ Գ Ողորմած թագավորը իր կրտսեր որդի Գուրգենին, որը պատմության մեջ մտավ որպես Կորիկե Ա, 972 թվականին նշանակում է Գուգարաց երկրի կառավարիչ։ Իսկ Աշոտ Ողորմածի հաջորդ Սմբատ Բ-ի թագավորության ժամանակ (977—989 թ. թ.), Գուրգեն-Կորիկեն ճանաչվեց որպես Տաշիրի կամ Տաշիր-Զորագետի թագավոր։ Այդպիսով հիմք է դրվում Կորիկյան Բագրատունիների թագավորությանը Տաշիրում, որոնք իրենց նստավայրը դարձրին Լոռի քաղաքը։

Կորիկյանների տիրապետության շրջանում բավականին զարգացավ ու ընդարձակվեց նաև Սանահնի վանքը։ Նրանք Սանահնի վանքում կառուցեցին Ամենափրկիչ եկեղեցին, գավիթը, մատենադարանի շենքը (գրատունը) և ուրիշ կառուցվածքներ։ Վանքը դառնում է նրանց տոհմական գերեզմանատեղին։ Զգալի չափով բարձրանում է նաև վանքի տնտեսական կարողությունը՝ երկրի զանազան շրջաններում ձեռք բերելով բազմաթիվ կալվածներ։

Այդ բոլորին զուգընթաց, հիմք է դրվում վանքի հոգևոր բարձրագույն դպրոցին, ուր ուսանելու են հավաքվում ժամանակի մի շարք ընդունակ և բանիմաց անձնավորություններ, որոնց թվում հատկապես հիշատակելի են Վարդան վարդապետ Սանահնեցին, Հակոբոս վարդապետ Սանահնեցին (որը հույների Տուկիծ կայսեր ժամանակ, 1065 թվականին, միաբանական թուղթ է գրում), Անանիա Սանահնեցին և շատ ուրիշներ։

Սանահնի բարձրագույն հոգևոր դպրոցի աշակերտներից մի քանիսը թաղված են վանքի բակում. դրանց մասին մատենագրական հիշատակություններ չկան, սակայն գերեզմանի տապանագրությունները ցույց են տալիս նրանց նշանավոր ուսումնական լինելը։ Դրանցից է Ներսես փիլիսոփան, որի գերեզմանը համապատասխան տապանագրությամբ գտնվում է Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային կողմում։

Իր ժամանակին մեծ համբավ ու հռչակ է վայելել Սանահնի վանքի հոգևոր բարձրագույն դպրոցը, մանավանդ վանքի առաջնորդ Դիոսկորոս վարդապետի օրով, որը, ըստ մատենագրական տեղեկությունների, միաժամանակ եղել է դպրոցի և՛ ղեկավարը և՛ ուսուցանողը։ Այն հանգամանքը, որ Դիոսկորոսը արժանանում է նույնիսկ հայրապետական կոչման, վկայում է նրա մեծ զարգացում ունենալու, ժամանակի ուսյալ և կրթված մարդկանցից մեկը լինելու մասին։

Կորիկյան Բագրատունիների տիրապետության շրջանում Սանահնի վանքի բարձր զարգացման հասած այդ վիճակը երկար չի տևում։ ԺԱ դարի երկրորդ կեսից սկիզբ առած թուրք-սելջուկյան արշավանքները մեծ վնաս պատճառեցին ամբողջ Լոռիին։ Հյուսիսից Հայաստանի վրա արշավող սելջուկյան բանակը սուլթան Ալփ-Արսլանի գլխավորությամբ 1064 թվականին գրավում է Լոռին և շարունակում արշավանքը դեպի հարավ՝ դեպի Անի, որը գրավում է 1065 թվականին։ Հետագա արշավանքների ընթացքում, 1074 թվականին, Մելիք-Շահ սուլթանը (1072—1092 թ. թ.) գրավում է ամբողջ Տաշիր-Զորագետը, որը քայքայման և վերջնական անկման պատճառ դարձավ Կորիկյանների թագավորության։

Այդ արշավանքների հետևանքով զգալի չափով տուժում է նաև Սանահնի վանքը։ Սամվել քահանա Անեցու վկայությամբ սելջուկյան

2 Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1909 թ., էջ 78—79։

3 Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861 թ., էջ 119—122։

խզել ամիրան 1105 թվականին գրավում է Լոռին և Սանահնի ու Հաղբատի վանքերն այրում. «... ՇՄԴ. խզրն էառ զԼոռէ՝ և զուխտսն սուրբ զՀաղբատ և Սանահին այրեաց»[4].

Սակայն սելջուկների տիրապետությունը Լոռիում երկար չի տևում։ Վրաստանը, որը համեմատաբար քիչ էր տուժել սելջուկյան արշավանքներից, Դավիթ շինարար թագավորի ժամանակ (1089—1125 թ. թ.) Հյուսիսային Հայաստանը փրկում է սելջուկներից։ Հայ-վրացական միացյալ բանակը 1110—1120 թվականներին սելջուկների տիրապետությունից ազատագրում է Լոռին։

Դավիթ Շինարարը 1123 թվականին սկիզբ է դնում ամիր սպասալարության պաշտոնին, որը համարվում էր համայն պետության (այդ թվում նաև Հյուսիսային Հայաստանի) զինված ուժերի գերագույն հրամանատար։ Այդ պաշտոնը հանձնարարվում է Օրբելյան տոհմին (Իվանե Օրբելյանին), քանի որովհետև Վրաստանին սահմանակից Լոռի (Տաշիր-Զորագետ) գավառի ընդհանուր հսկողության պարտականությունները հանձնարարված էին գերագույն հրամանատարին, այսինքն Օրբելյաններին, ուստի այդ գավառը Դավիթ Շինարարը հանձնում է Օրբելյաններին, որպես նրանց ժառանգական սեփականություն։

Լոռին Օրբելյանների տիրապետության տակ է մնում մինչև 1184 թվականը։ Այդ ժամանակվա ընթացքում, ինչպես ցույց է տալիս Ամենափրկիչ Նկեղեցու արևմտյան մուտքի ճակատի արձանագրությունը, Սմբատ Օրբելյանի որդի Իվանե Օրբելյանը 1183 թվականին, Տուտերդի Գրիգոր վարդապետի առաջնորդության ժամանակ ուխտի գալով Սանահնի վանքը, նախնյաց սովորության համաձայն, նորից վանքին է վերադարձնում այն բոլոր կալվածները, որոնք գրավվել էին սելջուկների արշավանքների ժամանակ։

Օրբելյանները, վրաց արքունիքի դեմ ունեցած ըմբոստության հետևանքով, զրկվում են ամիր սպասալարության պաշտոնից և Լոռիի վրա ունեցած ժառանգական իրավունքից։ Վրաց Թամար թագուհին (1184—1213 թ. թ.) ամիր սպասալարության պաշտոնը 1184 թվականին հանձնում է Խոժոռնիի տեր Սարգիս Մեծ Զաքարյանին, նրանց սեփականությանը թողնելով նաև Լոռին։ Շնորհիվ իր ռազմական սխրագործությունների, Սարգիս Մեծը, ինչպես և հետագայում նրանց ողջ տոհմը վրացիների կողմից կոչվեց Մխարգրձել—Երկայնաբազուկ մականունով։

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՔԻՑ

[4] Պատմութիւն Հայոց, արաբեայ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 121։

Զաքարյան Երկայնարազուկների տիրապետությամբ, Լոռիում, պատմական մի նոր ժամանակաշրջան է սկսվում Սանահնի վանքի պատմության մեջ։ Սարգիս Մեծ որդիներ՝ Զաքարե և Իվանե եղբայրները Սանահին գյուղը դարձնում են իրենց ժառանգական սեփականությունը, իսկ Սանահնի վանքը՝ իրենց տոհմական գերեզմանատեղին։ Նրանք նախ անհրաժեշտ վերանորոգումներ են կատարում վանքի այն հուշարձանների վրա, որոնք վնասվել էին Թորք-սելջուկյան արշավանքների ժամանակ։ Ապա վանքը ընդարձակում են նորանոր հոյակապ կառուցվածքներով, ինչպիսիք են մեծ գավիթը, զանգակատունը, դամբարանատունը և այլն (այդ մասին ավելի մանրամասն իր տեղում)։

Վանքի վրա եղած բազմաթիվ վիմական արձանագրություններից երևում է, որ Զաքարյանների տիրապետության շրջանում Սանահնի վանքը հասնում է իր առավել բարձր զարգացման աստիճանին։ Հատկապես մեծ հռչակ է վայելում վանքի հոգևոր բարձրագույն դպրոցը, որը հայտնի է Մագիստրոսի ճեմարան անունով, մանավանդ նշանավոր աստվածաբան Տուտեորդի Գրիգոր վարդապետի առաջնորդության ժամանակից սկսած։

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Սանահինն այդ ժամանակ դասվում էր Հայաստանի գլխավոր վանքերի շարքը. «...և գլխաւոր վանորայքն՝ Սանահինն, և Գետիկ, և Հաւարծին, և Կեչառուս, և Հաւուց Թառ, և Այրի վանք, և Յոհանու վանք, և Հոռոմոսի վանք, և որ շուրջ զնոքա»[5]։

Սակայն ԺԳ դարում տեղի ունեցող քաղաքական խոշոր անցուդարձերը բոլորովին հակառակ ուղղությամբ դարձրին գոյություն ունեցող իրադրությունը։ Մոնղոլական հսկա բանակը երեք խոշոր զորական միավորումների բաժանվելով, Զարմաղան զորավարի ընդհանուր հրամանատարությամբ, հյուսիսից երեք ուղղությամբ արշավում է Հայաստանի վրա։ Մի զորախումբը Զաղատա զորավարի գլխավորությամբ գրավում է Թրիլիսին և 1235 թվականին՝ ամբողջ Լոռի գավառն ու Լոռի քաղաքը։

Այդ ժամանակ Լոռիում իշխում էր Զաքարեի որդի Շահնշահը և, ինչպես Կորիկյան Բագրատունիներն ու Օրբելյանները, Զաքարյանները նույնպես իրենց նստավայր էին դարձրել Լոռի քաղաքը, ուստի այնտեղ էին պահվում արքունի տան գանձերը։ Մոնղոլները, գրավելով արքունի գանձերը և ավարի ու թալանի ենթարկելով քաղաքը, շարունակում են արշավանքը դեպի հարավ։

Այդ արշավանքների ընթացքում, չնայած դեռ որոշ ժամանակ Զաքարյանները պահպանեցին իրենց իշխանությունը Լոռիի կամ Տաշիր-Զորագետի վրա, սակայն վիմական արձանագրություններից պարզ է դառնում, որ մեծ ավերածություններ են տեղի ունեցել նաև Սանահնի վանքում։ Այդ մասին Զաքարեի թոռ, Շահնշահի որդի Մխարգրձելի մեծ գավթի վրա թողած արձանագրության մեջ կարդում ենք. «Ես ամիր սպասալար Մխարգռձելս, որդի Շահնշահի, յորժամ զիմ երկիրն աւերեալ էր... եկի զվանքս և կտեղս անմարդ գտաք որ ի մուհասլաց և առաջնորդէ և այլ հարկէ աւերած էր և եկեղեցիքս աւերած. զայս խաւարս տեսաք, մանու լափ տրտմեցաք, որ յաւագ Զատկին զվարդապետներն քաշ էին արել, և այլ շատ նախատինք։ Եւ արդ, ես՝ ամիր սպասալար Մխարգռձելս և ամուսին իմ Վանենի, ուխտուաք Աստուծոյ և Աստուածածնիս և մեր պարոն Աւագին և ամուսնին Աստային և զեկեղեցիքս ամէն հարկէ ազատեցաք... Եւ այս բանիս կարգեցաք քմիարանքս յետ ժողովել հաստատեցաք...»։

Այս արձանագրությունից պարզ է դառնում, որ մոնղոլները Հայաստանի վրա հյուսիսից իրենց կատարած արշավանքների ժամանակ Սանահնի վանքն էլ են ենթարկել կողոպուտի, միաբանության անդամների մի մասին կոտորել, մի մասին ծանր հարկերի տակ դրել։

Չնայած արձանագրության մեջ ասվում էր, որ ինքը մենաստանն ազատել է ամեն տեսակի հարկերից, որով նախադրյալներ են ստեղծվել միաբանության անդամներին հետ ժողովելու, սակայն ինչպես երևում է պատմական ու վիմագրական նյութերից, Մխարգրձելու և իր ամուսնու այդ միջոցառումներն առանձին արդյունք չեն ունեցել։

Մոնղոլների հետագա արշավանքները և դրանց հաջորդող շուրջ երկու դար անընդհատ կրկնվող միջֆեոդալական ու միջցեղային պատերազմները Հայաստանի սահմաններում, ծայր աստիճան քայքայման են հասցնում երկիրը. բնակավայրերն ավերվում են, բնակչության մեծ մասը կոտորվում՝ սրից ու սովից, մի զգալի մասը գերի տարվում, շատերը թողնում են հայրենի օջախը և գաղթում օտար երկրներ։ Այդ ճակատագրին են ենթարկվում նաև մենաստանները, որոնց թվում նաև Սանահնի վանքը։

5 Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 295։

6 Սարգիս վարդապետ Ջալալյանց, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Ա, Տփղիս, 1842 թ., էջ 22 (մեջ ենք բերում կրճատումներով և որոշ ճշտումներով)։

Ապա, այդ բոլորին հաջորդող թուրք-պարսկական կռիվները, որոնք սկիզբ առնելով ԺԶ դարի սկզբներից, կարճատև ընդմիջումներով շարունակվում են մինչև ԺԷ դարի կեսերը՝ անասելի ու աներևակայելի աղետներ ու տառապանքներ պատճառելով հայ ժողովրդին։ Այդ կռիվների մեջ առավել սոսկալի էր պարսից Շահ Աբասի 1603—1607 թվականների ընթացքում կատարած արշավանքները, որոնց ընթացքում Արևելյան Հայաստանի, այդ թվում նաև Լոռիի բնակչության մեծագույն մասը բռնի կերպով տեղահան է արվում ու քշվում Պարսկաստան։ Իսկ դրա հետևանքով առաջացած սոսկալի սովը անասելի է դարձնում դժբախտությունը։

ԺԴ դարից մինչև ԺԷ դարի կեսերը Սանահնի վանքը գտնվելիս է եղել քայքայված ու լքված վիճակում։ Այդ ժամանակամիջոցում ոչ միայն որևէ նոր հուշարձան չի կառուցվում վանքում, այլև տեղի չեն ունենում սովորական վերանորոգումներ։

Այս շրջանի մասին բացակայում են նաև մատենագրական և վիմագրական տեղեկություններ։

ԺԷ դարի կեսերից սկսած Սանահին վանքում կատարվում են հիմնական վերանորոգման և վերականգնման բազմաթիվ աշխատանքներ, որոնց մասին հիշվում է վանքի վիմագրություններում։

1636 թվականի թուրք-պարսկական հաշտության դաշնագրությամբ, որով Հայաստանը բաժանվում է երկու ախոյան պետությունների միջև, նախորդ դարերի համեմատությամբ, որոշ կայուն դրություն է ստեղծվում, որի հետևանքով սկսվում են բնակավայրերի վերանորոգումը, վանքերի վերարացումը և միարանության կազմակերպումը։

Սանահնի վանքի պատմության մեջ սկսվում է մի նոր ժամանակաշրջան, որի ընթացքում վերականգնվում են մինչ այդ քայքայված շենքերն ու բարեկարգվում, կազմակերպվում է նոր միարանություն, վերահաստատվում են վանքի սեփականատիրական իրավունքները վանական մի շարք կալվածների նկատմամբ։ Սանահինը նորից դառնում է ժամանակի նշանավոր կրոնական կենտրոններից մեկը։

Այդ մասին են վկայում այն ծավալուն վերակառուցման աշխատանքները, որոնք տեղի են ունենում Սարգիս արքեպիսկոպոսի առաջնորդության ժամանակ 1652 և 1656 թվականներին, որոնց մասին կարդում ենք ստորև մեջ բերվող արձանագրություններում.

ՄԵՆ ԴԱՎԹԻ ՀԱՐԱՎԱՏԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՆԵՐՍԻՍ, ԴՈՒԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄՈՒՄ.

Ա) «Ի թուին Հայոց ՌՃԱ (1652)։ Ի բազաւորութեան պարսից փոքրն Շահապազի և վրաց Բագրատունի Ռոստոմ Շահնշահի, և հայրապետութեանց Տեառն Փիլիպոսի և Յակոբայ, և ամիրայութեան Ղորխմազ բէկին։ Կամաւն Աստուծոյ ես Սարգիս արճեպիսկոս, որդի Ոէբէքին, ազգէ Աղուրեան, ծառայ սուրբ ուխտիս, որ է սրբոց բնակարան, Բագրատունեաց ճանգիստարան, նանդեռն միաբանօք նորոգեցի Ամենափրկիչն և Աստուածածինն, զանկակատունն. Սուրբ Գրիգորն, հիշխարաց խուցն։ Ամէն»։

ԴՐԱՏԱՆ ՀԱՐԱՎԱՏԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

Բ) «Կամաւ Աստուծոյ ես Թումանի որդի Մանուչաչ նորոգեցի զկէդեցիս, իսկ ճայրն Սարգիս և միաբանք ուխտիս հաստատեցին Զատկի պատարագին յիշատակել ինձ և ամուսինն իմ Մարիամ, անխափան։ Թվին ՌՃԵ (1656)»։

(Այս արձանագրությունը փորագրված է դրատան վրա, ուստի հայտնի չէ, թե վերանորոգումը ո՞ր եկեղեցուն է վերաբերում)։

Բայց Սանահնի վանքի զարգացման ու բարգավաճման համար առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում ԺԹ դարի սկզբներին։ Զաքարյան Երկայնաբազուկների հետնորդները հանդիսացող Երկայնաբազուկ-Արղությանները ռուսաց Եկատերինա կայսրուհուց ժառանգություն են ստանում Սանահին գյուղն իր սահմաններով, որից հետո նրանք, Զաքարյանների օրինակով, Սանահնի վանքը դարձնում են իրենց տոհմական դերեզմանատեղին։

Շնորհիվ Երկայնաբազուկ-Արղությանների՝ դեպի Սանահնի վանքն ունեցած հատուկ հոգատարությանը, վերջինս նորից դառնում է եպիսկոպոսանիստ վայր, որի թեմի սահմանները, համաձայն վանքի բակում գտնվող Սանահնի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսի գերեզմանի 1718 թվականը կրող տապանագրության, հասնում էին մինչև Ջլդր լիճը և Ջավախք գավառը։

Այդ ժամանակաշրջանում է, որ կառուցվում է վանքի բակի աղբյուրը և կատարվում են մի շարք հիմնական վերանորոգումներ, ինչպես այդ մասին հաղորդում են ստորև բերվող վիմական արձանագրությունները.

Գ) «Կամսուն Աստուծոյ ամենակալին. մեք՝ իշխանք հայոց Սելիման նազարապետս և Զաքարէս, յազգէ Արղութեանց. վերստին նորոգեցաք զԱմենափրկի՝ եկեղեցին և զզանգակատունն իսկական արդեամբք մերովք. յիշեցէք ի Քրիստոս: 1815»:

Դ) «Աստուած ողորմի Սարգիս եպիսկոպոսին և Ուսաայ Սարգսին և աշակերտաց նորա Հէրապետին, Դաւթին, Յեսուին, Կարապետին: Յիշեցէք»:

Վերջին արձանագրությունը, չնայած իր բովանդակությամբ անմիջապես վերանորոգության չի վերաբերում, սակայն ուշագրավ ու հետաքրքիր է նրանով, որ նրանում հիշատակվում են, վերանորոգումը ձեռնարկող վանքի առաջնորդի հետ միասին, նաև կառուցող վարպետի և իր աշակերտների անունները։

Արձանագրության բովանդակությունից պարզ նկատելի է, որ փորագրված է հետ մահու և, ինչպես տեսնում ենք, տարեթիվ չունի։ Արձանագրության մեջ հիշատակված Սարգիս եպիսկոպոսը առաջին արձանագրությամբ մեզ ծանոթ՝ վանքի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսն է, որը 1652 թվականին առաջին ձեռնարկեց նրա հիմնական վերանորոգմանն ու բարեկարգմանը։ Թե ինչու այդ արձանագրության մեջ արքեպիսկոպոսը դարձել է եպիսկոպոս, հասկանալի չէ։

Ինչ վերաբերում է արձանագրության ժամանակին, վերջինս հնարավոր է վերականգնել այդ նույն Սարգիս եպիսկոպոսի դերեզմանի տապանագրությամբ, որը հետևյալն է.

ե) «Թվին ՌՃԼ (1681): Այս է տապան Սարգիս եպիսկոպոսին և նորոգող մենաստանիս»:

Այս արձանագրությունը կասկած չի թողնում, որ վերջին երկու արձանագրությունների մեջ հիշատակվող Սարգիս եպիսկոպոսը նա ինքը վանքի առաջնորդ և 1652 թվականին հիմնական վերանորոգումներ կատարող Սարգիս արքեպիսկոպոսն է։ Դրանից էլ որոշակի է դառնում նախորդ արձանագրության ժամանակը՝ 1681 թվականից հետո։

ԺԹ դարի երկրորդ կեսից նորից սկսվում է Սանահնի վանքի տնտեսական և իմացական անկումը։ Նույն դարի վերջերին Սանահնի վանքը դադարում է որպես մեծ մենաստան գոյություն ունենալուց։ Այդ ժամանակաշրջանում, ինչպես և մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, վանքը զուրկ էր հարկ եղած խնամքից և գտնվում էր անմխիթար վիճակում։

Սովետական իշխանության տարիներին խոշոր աշխատանքներ են կատարվել Սանահնի վանքի հուշարձանների վերանորոգման ու բարեկարգման ուղղությամբ։ Այդ աշխատանքները հատկապես մեծ թափ ու ծավալ ստացան հետպատերազմյան տարիներին և հիմնովին ավարտվեցին 1957 թվականին։ Արդեն ամբողջապես վերականգնված են բոլոր հուշարձաններից թափված երեսպատման քարերն ու քիվերը, տանիքների սալաքարերը, մի քանի հուշարձանների տանիքների սալաքարերը հիմնովին փոխված են նորերով, ամբողջ շրջապատը մաքրված ու բարեկարգված է, կառուցված է նոր ցանկապատ։

Հուշարձանների ներսում կազմակերպված է փոքրիկ հնադարան-թանգարան, որտեղ ցուցադրված են Սանահնի և շրջանի մյուս նշանավոր հուշարձանների լուսանկարներ. տեքստեր (վիմական կարևոր արձանագրությունների և պատմիչների վկայությունների, թարգմանված աշխարհարարի), չափագրություններ, Սանահին գյուղի սահմաններում կատարված դամբարանների պեղումներից ստացված կավե, մետաղյա, ապակյա զանազան իրեր, Կողբ գյուղի Զ դարի եկեղեցու պեղումներից ստացված բազմաթիվ հետաքրքիր բեկորներ և այլն։

Այդ բոլորով հանդերձ Սանահնի հուշարձանները դարձել են բոլորի համար այցելության վայր, ուր ամեն տարի դալիս են հազարավոր զբոսաշրջիկներ՝ դպրոցականներ, ուսանողներ, ուսուցիչներ, գիտության, մշակույթի, արվեստի, արդյունաբերության և այլ բնագավառների աշխատողներ։ Հուշարձանների պահպանությունն ապահովելու համար կարգված է հատուկ աշխատող։

(Շարունակելի)

Դ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդի համար մի ծանր տարի էր 1903 թվականը։ Ցարական կառավարությունը, ծխական դպրոցները փակելուց հետո, գրավում է հայոց եկեղեցական կալվածները և շարունակելով էջմիածնի վանքի պահեստի դռները, խլում է այնտեղ եղած հարստությունները։

Այս հանգամանքը մեծ զայրույթ է առաջ բերում Երևանի հայ բնակչության մեջ և մի քանի տասնյակ հազար մարդ հետիոտն գալիս են էջմիածին, վանքի բակում բողոքի ցույց կազմակերպում և պահանջում Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկից՝ դիմադրել և մեր ժողովրդական հարստությունները չհանձնել ցարական կառավարության։

Այդ տարվա աշնանը ես ընդունվեցի Գևորգյան ճեմարանը իբրև գիշերօթիկ սան։ Ես երջանիկ էի, որ ինձ համար հնարավորություն ստեղծվեց ճեմարան ընդունվել և միջնակարգ կրթություն ստանալ, իսկ գիմնազիայի և ուսուցչական ինստիտուտի դրոները իմ առաջ փակ էին։ Գևորգյան ճեմարանի կյանքը ինձ համար մի նոր աշխարհ էր, ես ինձ երջանիկ էի զգում։ Սակայն դրա հետ միասին դպրոցի կյանքը հենց առաջին օրից մի ծանր կնիք դրեց իմ հոգու վրա. գյուղի ազատ կյանքից հետո զգում էի ինձ ընկճված, այն ժամանակ, երբ նոր էի մտնում երիտասարդական հասակ։

Երկրորդ դասարանի աշակերտ էի։ Դասական առարկաների թվում ավանդվում էր նաև երաժշտություն և մեր ուսուցիչն էր Կոմիտաս վարդապետը։ Նա մեզ սովորեցնում էր երաժշտություն՝ հայկական և եվրոպական նոտաներով։ Մեզնից պահանջում էր նոտաներով ազատ երգել, առանձնապես հետևելով երաժշտական չափերին։ Երաժշտության դասերը անցնում էին մի առանձին թեթևությամբ։ Քիչ չէր աշակերտների թիվը, որոնք անընդունակ էին երաժշտության մեջ, չունեին երաժշտական լսողություն և երգելու համար՝ ձայն։ Ոչ միայն դասարանը, այլև ինքը Կոմիտաս վարդապետը այդ դասերին զվարթ ծիծաղում էր նման աշակերտների վրա։

Ցանկանալով, որ իր սկսած մեծ գործը՝ ժողովրդական երգերի հավաքումը շարունակվի իր աշակերտների կողմից, դասատվության ժամանակ ինքը Կոմիտաս վարդապետը երգում էր ժողովրդական երգեր և պահանջում էր, որ մենք ձայնագրենք։ Այդ աշխատանքը տանում էր նա ամենայն վճռականությամբ, թեև նրա համար հոգնեցուցիչ էր։

Բացի եկեղեցական և ժողովրդական երգերից, դասատվության ժամերին ծանոթացնում էր մեզ եվրոպական կոմպոզիտորների ոչ բարդ ստեղծագործություններին, որինակ Մոցարտի («Օրորոցի երգ»), Շուբերտի և ուրիշների պարզ երկերին։

Ես դասարանում և Էջմիածնի Մայր Տաճարում պատարագներին շատ անգամ լսել եմ Կոմիտաս վարդապետի երգը, լսել եմ նրա երգը նաև մի ամառ Բյուրականում։ Երեկոները գյուղի վերևի բարձունքից, Վեհարանի շենքից, գյուղում պարզ լսվում էր Կոմիտաս վարդապետի հմայիչ երգը՝ «Ջայն տուր ով ծովակ», «Կռունկ», «Միրանի ծառ» և այլ երգեր։ Ոչ շատ ուժեղ, բայց դուրեկան և քնքուշ էր նրա ձայնը։

Բացի դասարաններում երաժշտություն դասավանդելուց, խմբական երգեցողությունից, Կոմիտաս վարդապետը մի խումբ աշակերտների հետ պարապում էր երաժշտական կոմպոզիցիայով։ Ես էլ այդ խմբի մեջ էի։ Սակայն այդ ձեռնարկը հաջողություն չունեցավ և մեզնից ոչ ոք ապագայում երաժշտությամբ չզբաղվեց։

Այդ ժամանակ օրերից մեկում, չգիտեմ ինչ առիթով, բախտ ունեցա լինելու Կոմիտաս վարդապետի բնակարանում։ Նա ապրում էր վանքի ձախ կողմը գտնվող մի հին բնակարանում, որը բաղկացած էր երկու սենյակից և ուներ մոտ 20—25 քառակուսի մետր տարածություն։ Բնակարանի պատուհանները նայում էին դեպի հյուսիս, պարսպով պատած ծառուղուն։

Կոմիտաս Վարդապետի բնակարանը կահավորված էր բավականին աղքատ։ Առաջին սենյակում դրված էր դաշնամուր, դրասեղան և մի քանի աթոռ, իսկ մյուս սենյակում, ննջարանում, կար հասարակ փայտե լայն մահճակալ, առանց տեղաշորի, ծածկված թեթև վերմակով, և մի փոքրիկ բարձ։ Դեպի ծառուղի նայող պատուհանը բոլորովին բաց էր, իսկ ննջարանում անտանելի ցուրտ՝ սառնամանիք։ Հունվար ամիսն էր։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԴԵՎՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՀԵՏ ԹՐԻԼԻՍՈՒՄ (1905 Թ.)

Դասարանում ժողովրդական երգերը սովորեցնելիս, Կոմիտաս վարդապետը տալիս էր տեղեկություններ երգի ծագման և տրվյալ մոտիվի բնույթի մասին։ Օրինակ, նա «Հով արեք սարեր ջան, հով արեք» երգի ծագումը բացատրում էր նրանով, որ լեռնային վայրում օձը կծում է մարդուն, թույնը սկսում է ներգործել, թունավորվածը այրվում է, ծարավ է ջրի և խնդրում է սարեր, ձորեր ջրով լցնել, հով և անձրև է ուզում։ Կամ «Գարուն ա, ձյուն ա արել» երգի ծագումը բացատրում էր նրանով, որ ինչպես անբնական երևույթ է, երբ գարնանը ձյուն է գալիս, այնպես էլ երգի հեղինակի համար տարօրինակ է, երբ իրեն սիրող յարը իրենից սառել է։ Դրանով ապացուցվում է, որ ժողովրդական երգերը իրենց ծագումով պատահական չեն, այլ արդյունք երգչի կամ կոլեկտիվի խորը ապրումների։

Մտնելով Կոմիտաս վարդապետի առաջին սենյակը, ես ցրտից սարսռացի և հարցրի իրեն.

— Հայր սուրբ, ինչպե՞ս եք այդպիսի ցուրտ սենյակում աշխատում։

— Հա՜, դու ուրեմն գտնում ես, որ սենյակումս ցո՞ւրտ է,— ասելով բռնեց ականջիցս և տարավ ննջարան։— Ահա՝ թե ինչպիսի տաք սենյակում եմ ես քնում և դա ինձ համար սարսափելի չէ։

Ըստ երևույթին այդպիսի ցուրտ բնակարան էր հարկավոր առողջ լինելու և մեղմացնելու իր ջղայնության լարվածությունը, իրեն հետևանք շրջապատի անհասկացողության և անսիրելության։

Այդ ժամանակներում էջմիածնի հոգևորականության մեջ կային որոշ խմբավորումներ և լուռ պայքար էր գնում հին և երիտասարդ հոգևորականների միջև։ Իհարկե, Կոմիտաս վարդապետը իր առաջավոր մտքերով չէր կարող սիրելի լինել հետադեմների կողմից, որոնց ձեռքում փաստորեն գտնվում էր վանքի գործերի ղեկավարությունը։ Հայտնի է, որ Կոմիտաս վարդապետի դեմ պայքարը գլխավորում էր Գևորգ եպիսկոպոս Սուրենյանը՝ վրեժ լուծելու Կոմիտաս վարդապետից՝ Օրմանյանին ակնհայտ կողմնակից լինելու համար։

Ամեն տարի, սեպտեմբեր ամսի վերջերին, մեծ շուքով էր տոնվում Գևորգյան ճեմարանի տոնը։ Այդ ամիսը Արարատյան դաշտի ամենափառավոր ժամանակն է և սկսվում է այգեկութքի և բերքահավաքի շրջանը։

Այդ տոնին էջմիածին էին գալիս բազմահազար ուխտավորներ մերձակա գավառներից— Սուրմալուից, Նոր Բայազետից, Ալեքսանդրապոլից, էջմիածնի և Երևանի գավառներից։ Ճեմարանի և վանքի բակը լեփ-լեցուն էր լինում երկսեռ հասարակությամբ, բազկացած մեծ մասամբ գյուղացիությունից։

Ամեն տարի ճեմարանի բակում հասարակության համար տրվում էր խմբական երգերի համերգ, որը պատրաստելու համար մեծ ջանք էր թափվում Կոմիտաս վարդապետի կողմից։ Բացի նրա սիրած ժողովրդական խմբական երգերից, մեծ ոգևորությամբ երգվում էր Սիփանա սարի հերոսների քայլերգը՝ «Լո-Լոս-ն։ Այդ քայլերգը ամեն տարի լրացվում էր նոր մոտիվներով, ամեն մեկ տարի երգեցիկ խմբին միացվեցին նվագողներ երաժշտական փողավոր գործիքների վրա։

Այդ համերգները ժողովրդի կողմից ընդունվում էին մեծ ոգևորությամբ և ծափահարությամբ։

Անցան տարիներ ու մեր սիրելի ուսուցիչը թողեց էջմիածինը, որը նրա ստեղծագործական նուրբ հոգու համար խեղդիչ միջավայր էր և տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, թողնելով մեր հոգում անմոռանալի հիշատակ և սեր դեպի երգն ու երաժշտությունը։

Եկավ 1914 թվականի համաշխարհային պատերազմը։ Արևմտահայ ժողովրդին վիճակվեց նորից ապրել Հայ Ազգի համար քանիցս կրկնվող ողբերգությունը՝ ժողովրդի ընդհանուր կոտորած, տեղահանություն և գաղթ։

Այդ մեծ ոճրագործության զոհ է դառնում նաև Կոմիտաս վարդապետը, աքսորավայր մեկնող ժողովրդի հետ նա ևս քշվում է դեպի Արաբիայի անապատները և ճանապարհին, չկարողանալով տանել ժողովրդական այդ սոսկալի ողբերգությունը, կորցնում է հոգեկան հավասարակշռությունը։ Նրան հաջողվում է տեղափոխել Փարիզ և տեղավորել Վիլժյուիվի հոգեբուժական հիվանդանոցում։

1920 թվականին Հայաստանի կոոպերացիայի գործուղումով ինձ վիճակվեց լինել Փարիզում։ Կոմիտաս վարդապետը դեռևս կենդանի էր և գտնվում էր հիվանդանոցում։ Սակայն չունեցա հոգեկան քաջություն՝ գնալ հիվանդանոց և տեսնել այդպիսի ծանր վիճակում իմ սիրելի ուսուցչին, հայ երգի և երաժշտության տաղանդավոր վարպետին, հստակ հոգու տեր և մեծ հայ Կոմիտաս վարդապետին։

Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

(Մանկավարժական գիտությունների թեկնածու)

ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒՀԻ ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—ՄԱՏԱԿՅԱՆ

(1852—1900)

Գայանե Հովհաննիսյան—Մատակյանը, որին ժամանակակիցները համարել են «դպրոցական պատկառելի գործիչ (Լեո), «անմահ մանկապարտիզպանուհի» (Թեոդիկ), «Թուրքիո հայոց մանուկներու կրթական դրությունը հեղաշրջող իդեալ կին» (Արփիարյան), «կովկասահայ ձեռներեց, անվհատ, անձնվեր, առաջադիմական մանկավարժուհի» (Սիպիլ), ծնվել է 1852 թվականին Թբիլիսիում, հասարակական մեծ դիրք ունեցող մի ընտանիքում, որի անդամները շատ են նպաստել հայ դպրոցի, գրականության, թատրոնի և հասարակական կազմակերպությունների զարգացմանը։

Նրա հայրը նշանավոր բժշկապետ և հասարակական ականավոր գործիչ Հարություն Հովհաննիսյանն էր (1820—1886 թ. թ.), իսկ մայրը՝ Եղիսաբեթ Հովհաննիսյանը (1830—1874 թ. թ.) նույնպես հասարակական հայտնի գործիչ էր. նա Պերճ Պռոշյանի 1861 թվականին Թբիլիսիում հիմնած առաջին Գայանյան և 1869 թվականին հիմնված երկրորդ Գայանյան դպրոցների հոգաբարձուհին էր, որպես Բարեգործական ընկերության եռանդուն անդամ, ձրիաբար կառավարում էր նրա թաղային դպրոցներից մեկը, ամեն կերպ օժանդակում էր հայ թատրոնին։

Մատակյանի եղբայրը «Փորձ» և «Արձագանք» պարբերականների խմբագիր և բազմաթիվ գրքերի հրատարակիչ Ա. Հովհաննիսյանն էր, իսկ նրա քույրերը եղել են դպրոցին և թատրոնին եռանդուն աջակցողներ, Հայուհյաց բարեգործական ընկերության՝ գործունյա անդամուհիներ։

Մատակյանն իր սկզբնական կրթությունն ստանում է Զվիցերիայից եկած ֆրանսուհի Ֆավրի պանսիոնում, իսկ հետո տանը՝ ժամանակի ամենահայտնի ուսուցիչների մոտ։ Նա ինքնազարգացմամբ շատ էր պարապում և հայոց լեզվի գիտության մեջ խորանալու նպատակով իրենց տանը կազմակերպում էր «հայ գրականության երեկոներ»։

Մատակյանը 1870 թվականից սկսում է թարգմանություններ կատարել ռուսերենից և ֆրանսերենից, իսկ 1871 թվականից սկսում է իր մանկավարժական գործունեությունը Թբիլիսիի Գայանյան իգական միջնակարգ դպրոցում, որտեղ նա մի քանի տարի ձրիաբար դասավանդում է ֆրանսերեն, կենդանաբանություն և հաճախ փոխարինում է ուսուցիչներին։ 1878 թվականին Մատակյանը ձրիաբար կատարում է տեսչի պաշտոնը Խորեն վարդապետ Ստեփանեի Թբիլիսիում հիմնած Մարիամյան իգական դպրոցում։

Շուտով Մատակյանը հրավեր է ստանում Քութայիսիի հայ հասարակությունից՝ ստանձնելու այնտեղի արական և իգական դպրոցների տեսչությունը։ Քութայիսիում Մատակյանը վրացախոս հայ երեխաների համար բաց է անում մանկապարտեզ։ Ոգևորված մանկապարտեզում իր ունեցած բացառիկ հաջողություններով, Մատակյանը 1881 թվականին անում է Զվիցերիա՝ նախա-

դպրոցական մանկավարժություն ուսումնասիրելու նպատակով։

1882 թվականի սկզբին Մատակյանը վերադառնում է Թբիլիսի և ստանձնում հատկապես վրացախոս լքված մանուկների համար կազմակերպված հայկական առաջին ժողովրդական մանկապարտեզի գեկավարությունը։ Այստեղ նա աշխատում է վեց ամիս և երեխաների թիվը հասցնում է 100-ի, ունենալով միայն մի օգնական։

Այդ նույն թվականի օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 12-ը Թբիլիսիում Մատակյանը եռանդուն մասնակցություն է

Սակայն Մատակյանի ամենափայլուն ելույթը նրա օրինակելի ցուցադրական պարապմունքն էր իր մանկապարտեզի 14 երեխաների հետ։ Նա մեծ վարպետությամբ առաջին անգամ ուսուցչությանը ծանոթացնում է հայկական առաջին ժողովրդական մանկապարտեզին ու նրա դրվածքին և նրանց մեջ բացառիկ հետաքրքրություն է առաջ բերում երեխաների նախադպրոցական դաստիարակության շուրջը, սեր զարթեցնում դեպի մանկապարտեզը։ Ականավոր մանկավարժներ Ն. Տեր-Ղևոնդյանը և Հ. Նազարյանն իրենց հիացմունքն արտահայ-

Ոժշկապետ Հարությունի Հովհաննիսյանի ընտանեկան խմբանկարը (1873 թ.)

(Ձախից առաջին նստած՝ օրիորդ Գայանե Հովհաննիսյանն է)

ունենում հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովին՝ համագումար-դասընթացներին, որտեղ քննարկվեցին մանկավարժական-մեթոդական 19 կարևորագույն հարցեր և տրվեցին 14 օրինակելի դասեր մոտ 200 ուսուցիչների ներկայությամբ։ Այդտեղ նա դրավում է բոլորի ուշադրությունը և հետաքրքրական ու ինքնօրինակ ելույթներով համագումարի աշխատանքների մեջ թարմ հոսանք է մտցնում։ Մատակյանը դեմ է դուրս գալիս ծեծին և իր «արտասովոր կրակոտությամբ» պնդում՝ «Աշակերտներին ուղղելու մի հնարն այն է, որ նրանց շատ սիրենք»։

տում են հետևյալ չերմ բառերով. «....Օրիորդի պարապմունքը կենդանի էր, բնական և զարգացուցիչ. այնտեղ մանուկների հետ խոսողը նոցա ուսուցչուհին չէր։ Ո՛չ, դա նրանց սիրասուն քույրն էր, նոցա գորովադուլ մայրը»։ «....Մանկավարժուհին իսկական դաստիարակչուհի է, որովհետև սանիկների մեջ նա կարողանում է արմատացնել ընկերասիրության և, որ գլխավորն է, փոխադարձ օգնության նվիրական զգացմունքը»։

Մատակյանը համագումարում մանկավարժի այնպիսի մեծ հռչակ է ձեռք բերում, որ անմիջապես հրավիրվում է Հայաստան

որպես Երևանի Գայանյան դպրոցի տեսչուհի։ Մանկանվեր Մատակյանը, շնորհիվ իր անսպառ եռանդի և անձնազոհ ջանքերի, շատ կարճ ժամանակում ոչ միայն աշխուժացնում է դպրոցական աշխատանքը (ամեն օր դասեր է լսում և անում շատ օգտակար դիտողություններ, վիճելի հարցերը քննարկման դնում մանկավարժական ժողովներում, տուներին կազմակերպում է մանկական հանդեսներ, այցելում է աշակերտների տները և օգնում չքավոր աշակերտներին և այլն), այլև «իր վերա վերցնելով ամեն տեսակ ծախուց հոգացողություն», բաց է անում Հայաստանի առաջին մանկապարտեզը 1882 թվականի նոյեմբերի 15-ին Աստաֆյան (այժմյան Աբովյան) փողոցի վրա գտնվող Մակաշյանի տանը (այժմյան Կենտրոնական ունիվերսալ խանութի տեղը)։

Սակայն Մատակյանի մանկավարժական-հասարակական արդյունավետ գործունեությունը Երևանում անսպասելիորեն ընդհատվում է, երբ 1884—1885 թվականներին ցարական կառավարությունը նոր հալածանքներ է սկսում հայ առաջավոր մտավորականության դեմ։ Գայանե Մատակյանին և նրա նորապսակ ամուսին իրավաբան Հայկ Մատակյանին, բժիշկ Լ. Տիգրանյանին և շատ ուրիշներին վարչական կարգով աքսորում են Ռուսաստանի հեռավոր քաղաքները՝ որպես ցարական կառավարության համար իրենց ազգային ձգտումներով վտանգավոր գործիչների, որպես հակապետական ուղղությամբ դաստիարակների։ Մատակյան ամուսինները իրենց համար որպես աքսորավայր ընտրում են Օդեսան և 1885 թվականի փետրվարի 18-ին հեռանում են Երևանից։ Այնտեղ 1886 թվականի սեպտեմբերի 26-ին մեռնում է Գ. Մատակյանի ամուսինը, իսկ ինքը շուտով գնում է Կոստանդնուպոլիս՝ իրեն ամբողջապես նվիրելու հայ մատաղ սերնդի դաստիարակության վեհ գործին։

Կոստանդնուպոլսի հայ հասարակությունը Մատակյանին շատ սրտաբաց ընդունեց, և ահա 1887 թվականին նրան հաջողվում է Գատրգյուղ թաղում հիմնել արևմտահայերի առաջին մանկապարտեզը։

«Ռուսահայ մանկավարժուհի»-ի տիտղոսը բավական եղավ ազդելու մեր միտքերուն վրա,— գրում է «Սուրհանդակ» օրաթերթը (1900 թ., № 494),— սիրով ընդգրկեցինք ինչ նորություն որ բերավ տիկին Մատակյան մեր մեջ ու լավ ըրինք, որովհետև անոր բերածը օգտակար նորություն մըն էր։ Իր ուղղակի կամ անուղղակի հսկողության տակ մանկապարտեզներ բացավ։ Երգը, պարը, լավ հասկցված զբոսանքը, մարմնամարզը այսինքն՝ կյանքը, մտավ մեր ծաղկոցներուն մեջ, որոնք անունի փոփոխություն մը միայն չունեցան «Մանկապարտեզ» կոչվելով, այլ դրության հիմնական փոփոխության մը ենթարկվեցան.... Առաջ տղաները իրենց գլխուն զարնվածի վիճակ մը ունեին ու ա, բ, գ չէին կարող սորվիլ, իսկ հիմա այն սիրուն մանկիկները կայտառան, ժպտուն, աշխույժ, մտացի, ա, բ, գ-ին հետ և անկե ալ առաջ կարող են սորվիլ ուսման զանազան ճյուղերուն տարրական գիտելիքները։ Պզտիկները առաջ վարժարանեն տուն կփախչեին, այժմ սկսան տան մեջ անհամբեր վարժարան երթալու ժամուն սպասել։ Ահա տիկին Մատակյանի դործը»։

Մատակյանի մահից 10 տարի հետո Կոստանդնուպոլսի «Բյուզանդիոն» օրաթերթը (1910 թ., № 1213) գրում էր. «Ընտրելու համար գործունեության բոլորովին կույս դաշտ մը՝ Կոստանդնուպոլիս եկավ, ուր իր անունը անմոռաց պիտի մնա առհավետ իբրև հեղինակ մանկապարտեզի դրության ընդհանրացման Թուրքիո հայոց մեջ։ Իր հասցուցած վարժուհիք այսօր ամեն կողմ կգործեն ի Կոստանդնուպոլիս, և իրենց կարգին աշակերտուհիներ հասցուցած են, որք նույն ուղղությամբ կաշխատին դավառային դպրոցներու մեջ։

Երկու տարի չանցած, Սկյուտարի Ս. Խաչ վարժարանի հրավերով Մատակյանը նույն վարժարանին կից հաստատում է երկրորդ մանկապարտեզը. «....կես ամիս չկա, որ բացված է ռուսահայ համբավավոր պարտիզպանուհի, մանկանվեր Մատակյանի մանկապարտեզը և արդեն երեք տարեկան տղաք ինչքան բան գիտեն.... խաղալով, խնդալով, առանց բառ փնտռելու.... բաղդատություններ կընեն,— գրում է Արփիար Արփիարյանը «Արևելք» թերթում (1889 թ., № 1653)։

Այդ նույն բանը հաստատում է գրականագետ Եղիա Տերմիրճիպաշյանը իր «Աղջկանց դաստիարակության վրա ճառ» գրքույկում։ Նա գրում է. «Եվ արդյոք աչքի պատրա՞նք է. աչքովս տեսա մայրաքաղաքիս մեջ երկու մանկապարտեզներ,.... զորս կվարե տիկին Մատակյան՝ հանրածանոթ ռուսահայ պարտիզպանուհին։ Զորս տարեկան տղայք այդ մանկապարտեզներուն մեջ ավելի բան գիտեն, քան իրենց կրկին և մերթ երեքկին տարվոք ընկերակիցները թաղային վարժարանաց մեջ, որք հայերեն կխոսին իրենց տարիքին համար շատ հարուստ բառարանով....»։

Այդ բոլորը նրանից է, որ տիկին Մատակյան հոգով ու մարմնով իր պարտեզին մեջ է,

իր խելքն ու միտքը իր գործին վրա էր»,— բացատրում է Արտիարյանը իր վերոհիշյալ հոդվածում և շարունակում. «Հրաշալի բառ ո՞ր պարագային վերապահենք, եթե ներկա պարագային մեջ չգործածենք զայն»։ Մատակյանի մանկապարտեզում երեխան չի կգտնա, թե ինչպես նոր բառ, նոր բան է սովորում, գաղանգի քաղցրահամբույր պարտիզպանուհվույն բերնեն ընդունված կենդանի դասեր օշարակի կամ նեկտարի կրնան բաղդատվիլ. ինչպես օշարակ պիտի խմեր մանուկն, այո, այնպես սորվեցավ բան մը, կամ ուրիշ բացատրությամբ՝ ստացավ ծանոթություն մը», իհարկե, այդ բոլորը դվարթի խաղի, հաճելի զրոսանքի և կենդանի, գրավիչ զրույցի, պարզագույն փորձերի և իրագործական հետաքրքրական գիտողություններ միջոցով։

Մատակյանի սանիկն է եղել նաև Հայկական ՍՍՌ ժողովրդական դերասանուհի Աբրուս Ոսկանյանը, որը (ինչպես նրա մայրը՝ տիկին Դարբասյանն է ինձ պատմել) շատ էր սիրում տանը երգելով և խաղալով ներկայացնել այդ մանկապարտեզում սովորած «Թմբուկ մ՚ունիմ շատ գեղեցիկ» և «Կոշկակար մը ասեղն առեր» խաղերը։ Ոսկանյանը միշտ հիացմունքով է հիշել իր առաջին դաստիարակչուհի տիկին Մատակյանին։

Մատակյանը, բացի իր մանկապարտեզը ղեկավարելուց և այնտեղ որպես դաստիարակչուհի (վարժուհի) աշխատելուց, որպես հասարակական տեսչուհի ղեկավարում է Կոստանդնուպոլսի բազմաթիվ մանկապարտեզներ։ Նա իր տրոշակի դիտողություններով, մեթոդական գործնական ցուցումներով և, մանավանդ, իր ցուցադրական օրինակելի պարապմունքներով աշունչ ու ոգի է տալիս սկսնակ վարժուհիներին։ Նույն հարցով նա հաճախակի հանդես էր դալիս նաև մամուլում։

1894 թվականի մայիս և հունիս ամիսներին Մատակյանն այցելում է 18 մանկապարտեզ և ցավ է հայտնում, որ չնայած «մանկապարտեզի գաղափարը այնքան սիրալիր ընդունելություն է գտել ամեն կողմ, բայց ոչ բոլոր ծաղկոցներն են կերպարանափոխվել»։ Կան մանկապարտեզներ, որտեղ կարդալ-գրել սովորեցնում են ոչ թե վարժուհիները, այլ մի առանձին ուսուցիչ։ «Սխալ դրություն,— ասում է Մատակյանը.— նախ՝ որովհետև տղան պետք է մեկ անձ միայն դաս առնե, որպեսզի մեկ դասը մյուս դասին հետ կապվի, և երկրորդ՝ էրիկ-մարդ, նույնիսկ կին մը էրիկ-մարդու ձևերով, չի վայելեր մանկապարտեզին մեջ, քանի որ մանկապարտեզները այնպիսի տարիքի երեխաների համար են, որոնց համար անհրա-

Տիկին Դայանե Մատակյանը 1890-ական թվականներին Կոստանդնուպոլսում։

ժեշտ են «մայրական խնամքը, մոր կորովը, մոր ընաղդը։ Ինչպես մանկապարտեզ անունը ցույց է տալիս՝ մանուկները «բույսերի նման խնամքի պետք ունին, բույսերի նման ոդ, արև կուզեն»։

Կան մանկապարտեզներ էլ, որտեղ վարժուհիները «տետրակի մեջեն կարդալով են ոգաս տալիս» և «գոց ընել» են տալիս։ Վարժուհին պետք է տիրացած ըլլա իր տալիք դասին, ինքն իր ձևով պետք է դաս տա, եթե հնար է սաեղծե, տեսածներուն հարմարցնե, որպեսզի կարենա նույնը պահանջել տղոցմե։ Գոց ընելով միտքը չի մշակվիր, այլ միայն հիշողությունը,—ասում է Մատակյանը։— Վարժուհիները կմոռնան, որ մանուկները մրջյուններու պես պիտի ուխատին, պիտի դիտեն, զննեն, պիտի ուսումնասիրեն ամեն ինչ, որ աչքին կներկայանա, ամեն ինչ որ ձեռվնին կառնեն» և ոչ թե չոր ու ցամաք բառեր ու նախադասություններ առանց հասկանալու ձևականորեն անգիր անեն։

Մատակյանը դեմ է, որ հարուստները և աղքատները տարբեր սեղաններու վրա կճաշեն, և վարժուհիները զբաղվում են միայն հարուստների երեխաներով։ Նրա վրա ամե-

նից վատ տպավորություն է թողնում «հողաթափներով վարպետ տուտուի տեսակ վարժուհի մը», որը երեխաներին նստեցրել է «ըստ տված ամսաթվակի»։

Մատակյանը լինում է նաև առաջավոր մանկապարտեզներում։

Ահա մի լավագույն մանկապարտեզ, որը նմանվում է ընտանիքի։ Այդտեղ 6—7 տարեկան երեխաները խնամում են 3 տարեկաններին։ Նրանք աշխատում են մրջյունի պես։ Թանգարանոցում ամեն մի երեխա իր ածուն ունի։ «Ուսանելն չեն կշտանար, խաղալով ալ կսորվին»,— ասում է Մատակյանը։

Մատակյանը հիացած է մի վարժուհու վարքով, որի մանկապարտեզում օրինակելի կարգ ու կանոն է տիրում։ «Տղոց աղեկ կողմերը աչքիս չեն դարներ, այնքան զմայլելի է վարժուհին։ Այն ի՞նչ դասավանդության եղանակ, այն ի՞նչ անուշ և սիրուն վարմունք տղոց հետ,— ասում է Մատակյանը։

1893 թվականի սեպտեմբերից Մատակյանը մանկապարտեզի վարժուհիներ պատրաստելու համար կազմակերպում է կիրակնօրյա միամյա դասընթացներ, որոնք շուտով վերածվում են կիրակնօրյա աղջկանց վարժարանի, ուր վերապատրաստվելու նպատակով սկսում են հաճախել նաև մանկապարտեզում պարապող վարժուհիները։ Մատակյանը ձրիաբար դասախոսում է նախադպրոցական մանկավարժություն և սովորեցնում է երգեր ու խաղեր։ Կիրակնօրյա վարժարանը իր գոյությունը շարունակում է մինչև 1899 թվականը՝ տալով տարեկան 7—10 շրջանավարտ։ Կոստանդնուպոլսի ֆրանսիական և թուրքական թերթերը գովասանական հոդվածներ են հատկացնում իր գործին նվիրված և հոմանիստ Մատակյանի այս հիանալի նախաձեռնությանը։ Կիրակնօրյա վարժարանն ավարտողները տալիս էին փորձնական դասեր, որոնք քննադատվում էին իրենց դասընկերուհիների կողմից։ Քննվողները քննադատում էին նաև իրենց այցելած ազգային և օտար ծաղկոցների դասերը»։

Մատակյանը երազում էր տարրական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար Կոստանդնուպոլսում իր տեսչությամբ հիմնել «վարժապետանոց», որպեսզի հնարավոր լինի նրա շրջանավարտների միջոցով բարեկարգել, վերակազմել նաև նախակրթարանները, որպեսզի մեր տղաքը չլեցնեն օտարների դպրոցները, ուր կմոռնան իրենց մայրենի լեզուն և փոխարեն չեն սորվիր կանոնավոր եվրոպական լեզու մը։ Զգիտցած լեզվով ալ առնված ուսմունքը ապարդյուն է»։

Մատակյանը ցանկանալով իդեական դպրոցները ևս նոր և ամուր հիմքերի վրա դնել, ծրագրում է հայ տեսչուհիներ պատրաստել Եվրոպայում և ահա այդ նպատակով «Հայրենիք» օրաթերթը հաստատում է թոշակ՝ որ նպաստ այն օրիորդին, որ հանձն պիտի առնե երթալ նանսի և աղջկանց վարժապետանոցին վկայական ստանալու։

Մատակյանը նույն թերթում հանդես է գալիս և կոչ է անում կանանց, որ ոչ թե մեկ աղջիկ ուղարկեն նանսի, այլ մի քանի, որպեսզի վերադարձին նրանք միասին կարողանան «պայքարիլ նորի, կանոնավորի, աղեկիվի և բարձրի համար», կարողանան բարեփոխել, կազմակերպել աղջիկների դպրոցները, որոնք վարժարան կոչվելու իրավունք չունեն («Հայրենիք», 1894 թ., № 1015)։ Իսկ այդ բանը մի հոգու ուժերից վեր կլինի և նա մենակ ուժ չի ունենա նախապաշարվածների դեմ մաքառելու համար։

Հայ կանայք արձագանքում են Մատակյանի կոչին։ Թերթի միջոցով հանգանակվում է 8 318 ղրուշ և որոշվում է ուղարկել չորս աղջիկ։

Մատակյանը ինչպիսի՞ մեծ դժվարությամբ է կարողանում գտնել համապատասխան թեկնածուներ, համոզել նրանց և ծնողներին, նրանց համար Կոստանդնուպոլսում նախապատրաստական ձրի դասընթացներ կազմակերպել, որտեղ նրանց հետ ձրիաբար պարապում էին նշանավոր հայ մանկավարժներն ու դրականագետները՝ Ա. Զոպանյանը, Գ. Մալաթյանը, Դ. Խաչկոնցը և ուրիշներ։

Դեպի իր աշխատավոր ժողովուրդը անհուն սիրով տոգորված, «հիվանդների խնամակալ» Գ. Մատակյանի նախաձեռնությամբ և ջանքերով կազմակերպվում են հիվանդապահների դասընթացներ, որտեղ պատրաստվում են առաջին հայ հիվանդապահուհիները։ Նրա ջանքերով են հիմնվում Թերայի աղքատախնամը, Թերայի դարմանատունը, որը իր գոյությունն պահեց երկար ժամանակ և մեծ ծառայություն մատուցեց աղքատ հիվանդներին։ Դարմանատունը Մատակյանը իր ձեռքով էր լվանում վիրաբուժական գործիքները, ամեն բան իր ձեռքով էր անում։ «...Թերայի ամենեն մութ և աղքատիկ թաղերու մեջ վիրաբուժական գործողությանց առթիվ կայակցեր անձնվեր բժիշկներու, իր ձեռքով հոգալով անմիջական խնամքները» («Բյուզանդիոն», 1910 թ., № 1213)։ Մատակյանը չափահաս աղջիկների համար կազմակերպեց «Արվեստանոց» (կար ու ձևի դպրոց), եղավ նրա տնօրենը և ամեռավ այն պահուն, երբ կշանար աղքատ կին հիվանդ-

ներուն համար տուն մը պատրաստել և հաստակացնել անոնց»։

Համենայն դեպս, Մատակյանը իրեն բախտավոր է զգում, որ «շատերը օգտվեցան իր դասախոսություններեն, ու իր աչքով տեսավ իր հասցուցած մանկավարժուհիներուն գովառները ղրկվիլը։ Ինքը երջանիկ էր այն գաղափարով, թե գավառացի աղջկան ալ պոլսեցոց պես զվարթ կմեծնան և առանց հոգնելու կսորվինք» («Լույս», 1908 թ., էջ 212)։ Այս կապակցությամբ միանգամայն ճիշտ դնահատական է տալիս ժամանակի առաջադիմական որթերթ «Հայրենիք»-ը (1895 թ., № 1075), որը խոսելով Մատակյանի մանկավարժական գործունեության մասին, գրում է. «...Իրմով է, որ մեր մեջ սկսավ մեր պզտիկներուն ճշմարիտ կրթության գործը և նորեն իրմով է, որ այդ գործը հետզհետե կհաստատվի ամուր ու կանոնավոր հիմքերու վրա»։ Այս մասին խոսում է նաև ականավոր գրականագետ Սիպիլը Մատակյանի մահից նույնիսկ 31 տարի հետո։ Ահա ինչ է գրում նա «Ընդարձակ տարեցույց»-ում (1931 թ., էջ 127). «Տիկին Մատակյանի գործերը կապրին տակավին և լպիտի մեռնին», քանի որ նա ոչ միայն արևմտահայերի մանկապարտեզի հիմնադիրն եղավ և հարատևորեն վարեց այն, այլև «անոր շարունակությունն ապահովելու համար հաստատեց դասընթացք մը, որմե օգտված են ժամանակին բոլոր դեռատի մանկավարժուհիները»։

Արևմտահայ մամուլի և դրականության կողմից չափազանց գնահատված «անմահ մանկապարտիզպանուհի» Մատակյանը սուլթանական բռնակալության ամենածանր պայմաններում կարողացավ հեղաշրջել մեր մատաղ սերնդի ազգային դաստիարակությունը՝ զորավիգ ունենալով պոլսեցի գրագետներու, զարգացյալ երիտասարդներու և երիտասարդուհիներու խումբ մը, և վահան՝ «Հայրենիք»-ը, որ անձնվեր մանկավարժուհիին իր իդեալ կին կներկայացներ Թուրքիո հայոց»[1]։ Ահա թե ինչու «տիկին Մատակյանը բնավ մոռցվելիք կին մը չէ, մանավանդ որ հաջորդ մը չունեցավ տակավին, գոնե մատավորապես իր գործունեությունը հիշեցնող»[2]։

ԺԹ դարավերջի հայ մանկավարժության դեմոկրատական հոսանքի ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ հայրենանվեր Գայանե Հովհաննիսյան-Մատակյանը չի կարող մոռացվել առավել ևս Սովետական Հայաստանում, որովհետև նա ոչ միայն եղել է Թբիլիսիի հայկական ժողովրդական մանկապարտեզի հիմնադիրը, այլև ցարական կառավարության ռեակցիայի ամենադաժան տարիներին Հայաստանի առաջին մանկապարտեզի հիմնադիրն ու զեկավարը, ինչպես և Հայաստանի առաջին իգական միջնակարգ դպրոցի շնորհալի տեսչուհին, որի մանկավարժական հմտության և վարպետության մասին գովեստով են խոսել նրա ժամանակակիցները։

Տաղանդավոր մանկավարժուհի Մատակյանի բեղմնավոր գործունեությունը դեռ չի ուսումնասիրված։ Սա նախնական փորձ է այդ ուղղությամբ։ Մենք այստեղ կանդ առանք բացատրելու հայրենասերի, և այն էլ շատ թռուցիկ կերպով, միայն մանկավարժական-հասարակական պրակտիկ գործունեության վրա, համոզված լինելով, որ Մատակյանի մանկավարժական հայացքների խոր և մանրազնին ուսումնասիրությամբ մանկավարժական մամուլում և առանձին մենագրություններով հանդես կգան հայ նախադպրոցական մանկավարժության պատմությամբ զբաղվող մասնագետները։

[1] Ասպիսար Ասպիսարյան. «Իդեալ կին» («Նոր կյանք» ամսագիր, Լոնդոն, 1900 թ., էջ 313)։

[2] Գարուճի Գալեմքյարյան. «Կին մը» (Ա. Անտոնյանի «Գանձարան» դասագիրք, բարձրագույն դասընթաց, Կոստանդնուպոլիս, 1914 թ., էջ 37)։

ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԱԲԵՂԱ

(ԺԵ դար)

ասնհինգերորդ դարի տաղանդավոր գրիչներից մեկն է Հովհաննեսը, որ իր կյանքը նվիրել է ձեռագրերի ընդօրինակության ծանր և դժվարին գործին։ Նրա մասին կենսագրական հարուստ տվյալներ, դժբախտաբար, չունենք։ Պարզ է միայն այն, որ նա ապրել է և ստեղծագործել ԺԵ դարի առաջին շրջանում, Ջերմաձորի (Շատախի) պատմական Ակոռո վանքում (Կաղբի գյուղի մոտ)։ Հայտնի է նաև այն, որ նա իր կյանքի վերջին շրջանում աշխատել է տկար և հիվանդ վիճակում։ Իր կյանքի տխուր պատկերը նա գծել է այսպես. «... Որ ոչ մեռած եմ և ոչ կենդանի։ Չնայած, որ նա ձեռագրերն ընդօրինակել է ժամանակի մռայլ պայմաններում, բայց մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնացել իր սիրած արվեստին։

Նրա հայ մշակույթին ավանդ թողած ձեռագրերը վկայում են, որ նա իր ժամանակի հայ գրչական արվեստի պատմության մեջ հայտնի է դարձել իր սիրած և պարզ բոլորագրով, որոնց գեղեցկություն են տալիս նաև երկաթագրերն ու նոտրագրերը։

Արվեստագետ հոգևորականի ձեռագրերից մեկը, որ խնամքով պահվում է Երևանի Պետական ձեռագրատանը, գրված է մեզանից 541 տարի առաջ, հայոց ՊԿԶ (866+551=1417) թվականին, Ակոռո վանքում։ Դա մի Ավետարան է, որը Հովհաննես գրիչն ընդօրինակել է «լաւ և յընտիր ուրինակէ»։ Ձեռագրի հիշատակարանն արժեքավոր է նրանով, որ այնտեղ գրիչն արձանագրել է իր հարազատների անունները, որ ներկայացնում է հետևյալ պատկերը. «... Կատարեցաւ Սուրբ Ավետարանս ի յերկիրս Ջերմաձորոյ, ի վանքս Ակոռոյ... ի յիշատակ ինձ և եղբօրն իմոյ Մարտիրոս քահանային... և միւս եղբօրն Սարգսին, և ծնօղացն մերոց Յակոբայ և Մինայի... Ո՞վ մանկունք նոր Սիոնի Սուրբ եկեղեցւոյ... դի յորժամ կարդայք կամ օրինէ[ակ]էք [յիշեցէք] ի Քրիստոս Աստուած զեղկելի անձն իմ զՅովհաննէս գրիչ և զեղբայրքն իմ զՄարտիրոս քահանայն և զՍարգիս, և զծնաւղսն մեր զՅակոբ և զՄինայ, և զհայրիկն իմ զՏիրանց, որ բազում աշխատեցաւ ի սպասաւորութիւն մեզ... Դարձեալ... միոյ Աստուած ողորմայ արժանի արարէք զկիսամահ անարժան գրիչս Յով[հաննէս], որ ոչ մեռած եմ և ոչ կենդանի... Արդ. գրեցաւ Սուրբ «Ավետարանս» ի լաւ և յընտիր ուրինակէ ի Թուաբերութեանս Հայկազեան տումարի ՊԿԶ (866+551=1417), ի Հայրապետութեանս հայոց Տէր Դաւթիս։

Ահա այս ձեռագրի Ավետարանի էջերը նկարազարդել է տաղանդավոր գրիչ և մանրանկարիչ Աստվածատուր արեղան, որը ապրել և ստեղծագործել է ԺԵ դարի առաջին շրջանում։

Նա մեկն է այն արվեստագետ հոգևորականներից, որ երկար տարիներ նվիրել է հայ գրչական արվեստի զարգացման վեհ գործին, միաժամանակ ձեռագրերի էջերի վրա վրձինել է նկարչական արվեստի տարբեր գեղեցկություններ, որոնք վկայում են նրա գեղարվեստական ձիրքի և հմտության մասին։ Առհասարակ, նա իր դարաշրջանում հռչակվել է որպես լավագույն գրչագիր, դեղաձիր, ծաղկող, ոսկող և դիմանկարիչ։

Սակայն, նկատենք, որ տաղանդավոր նկարչի մանրանկարչական ու գրչական արվեստները դեռևս չեն ուսումնասիրվել և ոչ էլ նրա դերն ու նշանակությունը հայ գեղարվեստի գրականության մեջ արձանագրվել են։ Մինչդեռ նրա արվեստի լուսաբանությունը հայ մանրանկարչական պատմության համար անհրաժեշտ է։

Ի՞նչ պատկեր են ներկայացնում Աստվածատուր արվեստագետի կյանքի պատմության և գեղարվեստական գործունեության էջերը։

Փաստական հարուստ տեղեկություններ չունենք։ Ձեռագիր հիշատակարանների տվյալները միայն այսքան վկայում են, որ նա պատանեկան շրջանից սիրում է հոգևորական կոչումը, սիրում է ուսումն ու արվեստը։ Փոքր հասակից էլ նա փայլում է իր ընդունակությամբ, ուշիմությամբ, իսկ նկարչական և գրչական արվեստների մեջ ցույց է տալիս առանձնահատուկ շնորհք։

Իր վանական և գեղարվեստական կրթությունը ստանում է նա Ռշտունյաց երկրի հռչակավոր Ս. Վարդան անապատի միաբաններից հայտնի մանկավարժ Հակոբ վարդապետի մոտ, որ իր աշակերտի մտավոր և արվեստի զարգացման ու առաջադիմության համար շատ է աշխատում և նվիրում է իր լավագույնը։

Իր ուսուցչի մոտ նա բազմակողմանի կրթություն է ստանում, սովորում է սաղմոս, շարական, խազագրություն, գրչագրություն, «զգիր, ղծաղիկ, ոսկել և զկազմել և այլ բազում բարութիւն... և զամենայն բարեձեւութիւն»։

Գեղարվեստասեր աբեղայի գործունեության գլխավոր կենտրոններ հանդիսանում են Ակոռո վանքը (Շատախում) և Ռշտունյաց Ս. Վարդան անապատը։ Այդ պատմական վայրերում նա 1417, 1418 և 1419 թվականներին գրում է, ծաղկում, ոսկում է գրչական ու մանրանկարչական արվեստներին նվիրում Ավետարաններ, Մաշտոց և Ճաշոց, որոնք գրչական և մանրանկարչական արվեստների արժեքավոր ավանդներ են։ Այդ ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ Աստվածատուր աբեղան ապրել է քաղաքական անմխիթար պայմաններում։ Դա Ագոյունլու և Կարա-գոյունլու Թուրքմեն և քուրդ ցեղերի ավերածությունների ժամանակաշրջանն է, որոնք ԺԵ դարի սկզբներից հայ ժողովրդի համար անասելի ծանր դրություն են ստեղծում։ Պատմական իրողություն է, որ Կարա-Ցուսուֆի, Իսկանդարի և Շահրուխի արյունարբու զորքերը մտնելով Ռշտունյաց երկիրը, կոտորում են խաղաղ բնակչությանը, ավերում, թալանում և ժողովրդին գերի տանում։ Ահա ժամանակակից դրիչ խոչա Գորգի վկայությունը. «Ի յայսմ ամի (1424)... եկն Սկանդարն յերկիրն Ռշտունեաց բազում ՀԵԺԵԼՕՔ, և զՎանայ բերդս խսարեաց և շատ աւեր էած՝ զոր սպանմամբ, և զոր գերութեամբ, և զոր այրելով։ Եւ զեկեղեցիքն կործանեցին, և զգրեանքն գերի վարեցին և բերին ի քաղաքն Սղերտ...»։

Այժմ դիտենք մանրանկարչի վրձինած մեզ ծանոթ ձեռագրերի պատկերը։ Դեռ 1417 թվականին Աստվածատուր աբեղան նկարազարդում է վաստակավոր դրիչ Հովհաննեսի գրած Ավետարանի էջերը։ Այդ հանգամանքը փաստատում է ձեռագիր ավետարանի հիշատակարանը, ուր տեղեկություններ կան նկարչի հարազատների մասին. «Ո՞վ եղբա՛ր, կարատելոցն ողորմութիւն արարէք, զի և դուք զձեր կարատութիւն առնուք ողորմածէն Աստուծոյ։ Աղաչեմ զձեզ յիշել ազաւթիւք զիս՝ զանարժան աբեղան Աստուածատուր, որ ծաղկեցի զՍուրբ Աւետարանս, և հանգուցեալ հայրն իմ զԱտամ, և զմայրն իմ զՇաքար, և զեղբարսն իմ զԹումաբէկ և զՅովհաննես, և զհանգուցեալ զքոյրն իմ զՇահբրման, և զհանիկն իմ զԳոհար, և Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն»։

Ձեռագրի գեղեցկությունը կազմում են մանրանկարները, որոնցից ուշադրություն են գրավում 6-րդ էջի վրա վրձինված երեք պայծառ կերպարները,— ԺԵ դարի վաստակավոր դրիչ Հովհաննեսը, նրա եղբայրը՝ Մարտիրոս քահանան և հորեղբոր որդին՝ Պետրոս քահանան, որոնք ծնրադիր և խոհուն հայացքով նայում են Գահի վրա բազմած Քրիստոսին, ասես, լուռ աղոթում են։ Նկարի ամբողջությանն առանձին գրավչություն է տալիս դրիչ և մանրանկարիչ Աստվածատուր աբեղայի պատկերը. բազմել է նա նկարի մեջտեղում և երկու ձեռքերով բռնած Ավետարանը դրել է կրծքին։

Մանրանկարների արվեստը ձեզ հիշեցնում է ԺԴ դարի սաղանդավոր մանրանկարիչ Սարգիս Պիծակի մանրանկարչական դպրոցի ավանդներն ու տեխնիկան։ Սակայն, չնայած այդ հանգամանքին, այդ ստեղծագործությունները ԺԵ դարի մանրանկարչական գեղեցկություններ են, որոնք վկայում են աստվածատուր աբեղայի նկարչության հմտության և նրա ընծային հակումների մասին։ Դիտում եք նկարչի վրձինած նկարները, որոնք իրենց ինքնատիպ ոճով ոչ միայն գրավում են, այլև զգում եք, թե նա ապրել է, ասես, միայն արվեստով։ Նրա գծագրությունների մեջ և՛ արվեստ կա, և՛ գեղեցկություն, և՛ հոգեկան ապրումների հարազատ դրսևորում։

Մանրանկարները, բացի նկարչական արվեստից, ունեն նաև ազգագրական արժեք և ԺԵ դարի հոգևորական տարազի մասին գաղափար են տալիս։

Այդ մանրանկարները վկայում են նաև այն, որ Ակոռո պատմական վանքը մի ժա-

մանակ եղել է մանրանկարչական մշակույթի կենտրոն։ Այնտեղ փայլել են տաղանդավոր մանրանկարիչներ։ Այդ լավագույն նկարիչներից մեկն է Աստվածատուր արեղան։

Արվեստագետ հոգևորականից մեզ հասած ձեռագրերի մեջ ուրույն տեղ է գրավում 1418 թվականին Ռշտունյաց երկրի հռչակավոր Ս. Վարդան անապատում, «ի դառն և ի նեղութեան ժամանակիս» գրած Մաշտոցը, որի հիշատակարանում կարդում ենք. «Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց, մեղաւորս արդարոց և անկատարս ի կատարելոց... Աստուածատուր սոսկանուն աբեղայս... կատարեցի զՍուրբ Գիրքս զայս ի դառն և ի նեղութեան ժամանակիս, ի թուականութեան Հայկազեան տումարիս ՊԿԸ (867+551=1418), և ի հայրապետութեան Տեառն Դաւթի, ի յերկիրս Ըռշտունեաց, ի սուրբ և ի հռչակավոր անապատս, որ կոչի Ս. Վարդան, որ է հանդէպ Գաւաշից, ի Դուռն Ս. Աստուածածնիս և ի Սրբոյ Վարդանայ զաւրավարիս, ի դանութեանն պարոն Ցուսուֆին, և ի բռնակալութեան մերոյս նահանգի Ամիր-Էզդինն, և որդւոյն իւրոյ Մէլիք Մահմադին, որոց աւգնական և պահապան լիցի նոցա Տէր Աստուած, վասնզի յոյժ խնամածուք են Ազգիս Հայոց...»։

Ձեռագրի հիշատակարանը արժեքավոր է նաև նրանով, որ նույնպես տեղեկություններ է տալիս իր հարազատների մասին։ Ահա գրչի ձեռքով գրված տողերը. «...Այլ և ըստ մարմնոյ ծնաւղացն իմոց աղաչեմ զձեզ Աստուած ողորմի ասէք՝ հարն իմոյ Ատոմի, և մարն իմոյ Շաքար խաթունի, և եղբարցն իմոց Թումարէկի և Ցովհաննէսի, քրտերցն իմոց հանգուցելոցն ի Քրիստոս Շահրմանի և Գուլիշայի, և մեծ մամուն իմոյ Գաւհարի, և հարքիւերն իմոյ Թավրէզ-Մէլիքի, և որդւոց նոցին Էվատին և Մուրատին և Ստեփանոսին, և մարքրտերն իմոյ Գաւհար-Մէլիքին, և որդւոյն իւրոյ պարոն Ռամէկին...»։

1418 թվականին Աստվածատուր գրիչ աբեղան հայ գրչական արվեստին նվիրում է մի այլ ձեռագիր։ Դա մի Ճաշոց է, որի հիշատակարանում արձանագրված տողերից կարդանք հետևյալը. «Ցիշեցէք... նաև զիմար գրիչս Աստուածատուր անարժան, և զծնաւղսն իմ զԱտոմ և զՇաքար խաթուն, և ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած, ամէն»։

Ձեռագիրը գտնվում է Երևանի Պետական ձեռագրատանը, որին առանձին գրավչություն են տալիս բազմերանգ և հարուստ յուանցազարդերը և բարձր արվեստով վրձինած մեծադիր նկարները։

Տաղանդավոր արվեստագետը 1419 թվականին հայ գրչական արվեստի գանձարանը հարստացնում է մի նոր ու նկարազարդ ձեռագրով։ Դա մի Ավետարան է, որ գրել է «ի յանապատիս Սուրբ Վարդանայ»։ Ձեռագրի հիշատակարանը արժեքավոր է նրանով, որ այնտեղ հանդես են գալիս արվեստագետ հոգևորականի հարազատները, և, որ կարևորն է, պարունակում է կենսագրական տեղեկություններ։ Ահա գրչի տողերը. «...Որք պատահէք սմա ընթերցմամբ կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր... զանպիտան գրիչս՝ զԱստուածատուր աբեղայ, և զծնաւղսն իմ զԱտոմ և զՇաքար խաթունն, և զհարազատ եղբայրսն իմ՝ զԹումարէկ և զՑովհաննէս, և զհանգուցեալ քրտերսն իմ՝ զՇահրրման և զԳուլիշայ, և զմեծ մայրն իմ զԳաւհար-Մէլիք, և Ղարիպշահն։ Նաև յիշեցէք ի Քրիստոս զվարդապետն իմ զՑակոբ, որ բազում աշխատեցաւ ի վերայ իմ և ուսոյց ինձ զսաղմոս, զշարականս, զ[խազ] տեառ, զգծագրութիւն և զամենայն բարեձևութիւն... Այլ և, գրեցաւ Սուրբ Աւետարանս ի յանապատիս Սուրբ Վարդանայ... ի Հայրապետութեանն Տեառն Դաւթի, և ի թուականութեանս Հայոց ՊԿԸ (868+551=1419), ձեռամբ Աստուածատուր աբեղայի անիմաստ և տխմար գրչի... բազում աշխատանաւք կատարեցի զցանն և բառն յայն Աւետարանէն, որ ի Սիս էր գրուած»։

Ցիշատակարանի վերջին տողերը նշում են, որ Աստուածատուր գրիչն Ավետարանն ու որոշ մանրանկարներն ընդօրինակել է ԺԴ դարի տաղանդավոր մանրանկարիչ Սարգիս Պիծակի Սսում գրած և 1336 թվականին նկարազարդած ձեռագրից։ Բացի այդ նկարներից, նկարիչը ձեռագրի որոշ էջերը շտապով ծաղկել է և ոսկեզ։ Ահա իր վկայություն. «Ո՞վ եկբա՛ր, թէ ես յայս Աւետարանս յոսկեզն յիշատակել եմ ու անփոյթ առնել, նա Աստուած դիմ մեղքն ոչ թողու, ապա հանգ առնէին դիս, թէ զմեր գիրքն ի մեղ չի տալ, ի Նաւասարդի ամիս ոսկեզ տուին, ու թանաքն ամէն մասու, յիշ[ա]տակաւորքն ամօթով լինին յԱստուծոյ»։

539 երկար տարիների պատմական ապացույց ունեցող այս ձեռագրին առանձին գրավչություն են տալիս սկզբի 14 թերթերի վրա գծված նկարները ու խորանները, որոնք նկարված են վարպետ վրձինով և վկայում են Աստուածատուր աբեղայի նկարչական հմտության և նվաճումների մասին։

Թե ո՞ր մատենադարանում կամ դեղարվեստասերի մոտ գտնվում են Աստուածատուր աբեղայի ընդօրինակած կամ նկարազարդած մյուս ձեռագրերը, մեզ հայտնի չէ։

Այժմ եզրափակելու՝ Տաղանդավոր արվեստագետ Աստուածատուր արեղայի վրձինած մանրանկարները դիտելուց հետո, գալիս ենք ա՛յն հիմնական եզրակացության, որ նա խորապես ուսումնասիրել է հայ հնագույն նկարչության լավագույն ավանդները։ Նույնպես թափանցել է իր ժամանակի տաղանդավոր նկարիչների արվեստների և ոճերի էության մեջ։ Հատկապես ազդվել է ԺԴ դարի վարպետ նկարիչ Սարգիս Պիծակի մանրանկարչական մշակույթից։ Սակայն, չնայած այդ հրեույթներին, նրա նկարչական լավագույն ստեղծագործությունները միանգամայն ինքնատիպ են և նկարված են վարպետ վրձինով։ Նա գույների և արվեստի մեծ նկարիչն է։ Նրա ավանդ թողած ձեռագրերը ԺԵ դարի Ակռոռ վանքի Ուշտունյաց Ս. Վարդան անապատի դրչական և մանրանկարչական դպրոցների արվեստը պատկերող թանկագին վավերագրեր են և ցայտուն գաղափար են տալիս նկարչի արվեստի, ոճի և նվաճումների մասին։

Մի հանգամանք այժմ պարզ է, որ ԺԵ դարի վարպետ մանրանկարիչ Աստվածատուր արեղայի վրձինած նկարներից շատերը նկարչական արվեստի գեղեցկություններ են, որոնք նրա անունը վառ են պահելու գեղարվեստագետների սրտերում։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆՈ ԽՈՋԱԲԵԳՅԱՆԻՆ

Հրատարակեց՝ Արամ Երեմյան
(Վենետիկ, Ս. Ղազար, 1955 թ., 127 էջ)

Գիրքը նվիրված է հայ գծանկարչության հիմնադիր և մեծ վարպետ Վանո Խոջաբեգյանի մահվան (1922 թ.) երեսնամյակին։

Խոջաբեգյանը ծնվել է 1875 թվականին Թբիլիսիում, չքավոր արհեստավորի ընտանիքում։ Նրա դպրոցը մեծ եղբոր մանրավաճառի խանութն է եղել։ Նրա միակ հաճախած, այն էլ կես թողած, դպրոցը եղել է «Գեղարվեստը խրախուսող ընկերության» նկարչական դպրոցը Թբիլիսիում, երբ արդեն երեսուն տարեկան էր նկարիչը։

սա մեծ կորուստ է։ Ամենապարզ մի քանի գծերով, ամենապարզ թուղթ ու մատիտով, Խոջաբեգյանին հաջողվել է կատարել շատ մեծ ծառայություն։ Նրա նկարներում, քսան տարվա ուղիով, պատկերվել է իր ժամանակի Թբիլիսին, առավելապես կինոտները և նրանց մոտիկ կանգնած քաղաքի շերտը, իր առօրյա կյանքով, այդ կյանքը լցնող հոգսերով, հոգեբանությամբ, կենցաղային առանձնահատկություններով։ Նրա գծանկարները կյանք են ու երաժշտություն, ազգագրական թանգարան և «հայելի բարուք»։

Նա մշակում է իր միտքն ու արվեստը գերազանցապես ինքնաշխատությամբ։ Ընտանիքն ապրեցնելու համար պարապել է ինչով որ կարողացել է (դոնապան, հաշարանի սպասավոր, սեազործ բանվոր, հողագործ և այլն)։ Մատաղել է 1922 թվականին անհայտության ու թշվառության մեջ։ Ինչ աշխատանք էլ նա կատարել է ապրուստը ապահովելու համար, չի մոռացել ապրել՝ նկարելու համար։ Մատիտ, ածուխ, թուղթ նրա մշտական ընկերներն ու մխիթարիչներն են եղել։

Վանո Խոջաբեգյանի ավելի քան 250 նկարներից այրոմում տեղ են գտել միայն 48-ը։ Խոջաբեգյանի գործի ամբողջականությունը ներկայացնելու տեսակետից

Տիպական է, որ նրա գծագրերը միշտ խմբական են, տարբեր դեմքերի, տարազների, ապրումների գեղարվեստական ներդաշնակ միաձուլմամբ։ Նա հիմնադիրն է հայ գծանկարչության և մեծագույնը հայ գծանկարիչներից։ Գծերի թվացող խազով Խոջաբեգյանը վերարտադրում է իր մարդկանց հոգին ու ապրումները, թղթին հանձնում իր ժամանակը՝ կարելի ոգի հարազատությամբ։

Նրա մարդիկը կենդանի են, ունեն յուրահատուկ արտահայտություն, դեմքի ու մարմնի ուշագրավ գծեր, հոգեկան պայծառ տրամադրություն։ Խոջաբեգյանի գծանկարներն իրենց գծերի պայծառությամբ, խոստ-

նությամբ հիշեցնում են հին հունական զարդանոթների տրվեստը։ Դիտելու, ընկալու և դատելու հարուստ տրվյալները նկարչի գործին տալիս են բովանդակություն, հոգեկան վերլուծումների կարելիություն, բանաստեղծականություն, բոլորն էլ հագեցված հրաժշտական ներդաշնակությամբ։

Նա անմահացրել է Թբիլիսիի հայ աշխատավոր, դրկված խավերի կյանքը՝ հումորով, ազգագրի և գեղարվեստագետի բնատուր շնորհով։ Եռյարեդյանի նկարները, Սունդուկյանի թատերգությունների պես, բյուրեղացրել են հայ ժողովրդի մի որոշ հատվածի կյանքը, հոգին, պատմական ռվյալ մի շրջանում ու իրը այդպիսին, անկախ իրենց նկարչական արժեքից, մնայուն փառք են ապահովում նկարչին։ Շարժում, գծերի ներդաշնակություն, կյանքին հավատարմություն, բոլորն էլ ռեալիստական ուժեղ թափով տրված։ Հատկանշում են Եռյարեդյանի ստեղծագործությունը։ Այնտեղ վերջնական քանդակներով պատկում են այլևս անհետ կորած բարքեր, կենցաղային մանրուք։ Հասարակական կյանքի ամենօրյա պատահարներ, մի խոսքով մեր ժողովուրդը, բառորդ դարուլյանցով։

Ալբոմն ունի մեկ լեռնոց առաջաբան, 16 լեռնոց վերլուծական ակնարկ վանո Եռյարեդյանի կյանքի և գործերի շուրջ։ Երկուսն էլ հրատարակիչ Արամ Երեմյանի գրչի արդյունքն են։ Դրան հաջորդում են առանձին թերթերի վրա արտատպված Եռյարեդյանի 48 գծանկարները։ Ալբոմը տպված է խնամքով, փայլուն թղթի վրա։ Գործի ամբողջացումը անհատական կամ պետական նախաձեռնությամբ, նվաճում է շահ կլիներ մեր ժողովրդի համար։

Ա. Խ.

ՀԱՆԳՈՒՍՏ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԹՈՒՃՅԱՆԻ
(1889—1958)



Հոկտեմբերի 30-ին, չորեքշաբթի օր, Վիեննայում վախճանվեց Ավստրիայի և Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Եղիշե ծայրագույն վարդապետ Ութուճյանը։

Հանգուցյալը ծնվել էր Կոստանդնուպոլսում 1889 թվականին և իր նախնական կրթությունն ստացել էր Սկյուտարի Ներսես Երմոնյանի անվան դպրոցում, ապա շրջանավարտ էր եղել Գատրգյուղի Արամյան վարժարանից։

Հոգեշնորհ Տ. Եղիշե ծայրագույն վարդապետը երկար տարիներ ուսուցչական արդյունավետ գործունեություն է ունեցել Կոստանդնուպոլսի հայկական դպրոցներում, մինչև 1928 թվականը, երբ Նիկոմիդիայի և ապա Բուլղարիայի ծերունազարդ և պատկառելի առաջնորդ հանգուցյալ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանից ձեռնադրվում է քահանա Սոֆիայի հայոց Մայր եկեղեցում, մայիսի 20-ին։

1929 թվականին նշանակվում է Վիեննայի հայոց հոգևոր հովիվ և ձեռնհասորեն վարում է իր պաշտոնը։

1944 թվականին կորցնում է իր երեցկնոջը։ Հինգ տարի հետո, 1949 թվականին, ստանում է վեղար և մասնավոր վարդապետական իշխանություն՝ Արտավազդ արքեպիսկոպոս Այուրմեյանից։

Իր եկեղեցանվեր և արդյունավետ պաշտոնավարության համար 1951 թվականի հոկտեմբերին ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան գերաշնորհ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանի ձեռքից, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում։

Հանգուցյալը լանջախաչ էր ստացել հոգելույս Տ. Խորեն Կաթողիկոսից։ Նա մի ժամանակ վարել է նաև Բուդապեշտի հայոց հոգևոր հովվությունը։

Հանգուցյալը բարի, պաշտոնասեր և իր Աստծին ու եկեղեցուն նվիրված հոգևորական էր։

Հանգի՜ստ նրա ոսկորներին և խաղաղություն՝ հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի»։

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՈՒՍՏՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1958—1959 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԾՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Արոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով— երեք՝ դասարանական, երեք՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, ոնոնդ, զրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական բերությունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները բնություն պիտի հանձնեն նայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք Ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար (լուսանկարված դիմումի օրերին):

Արտասահմանյան երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու ճարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց թեմերի հոգևորական առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 25-ը, իսկ ներքին թեմերի թեկնածուները՝ մինչև օգոստոսի 30-ը՝ Հոգևոր Ճեմարան, Հայկական ՍՍՌ Էջմիածին:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի)